

Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

Ֆիլիս. դիա. Թեկնածու

ՌՈՒՍԵՐԵՆԻ ԴԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԶԱՐԴԱՅՄԱՆ ՄԵՋ

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ռուսաց լեզուն մարդկային կուլտուրայի ամենամեծ նվաճումներից մեկն է։ Նա իր հարստութեամբ, ճկունութեամբ, փիլիսոփայական, գիտական, հասարակական գաղափարները արտահայտելու կատարելութեամբ չի զիջում աշխարհի ոչ մի լեզվի։ Ռուսաց լեզվով են գրված համաշխարհային կուլտուրայի պատմության ոսկե ֆոնդը մտած գեղարվեստական, գիտական, փիլիսոփայական անգնահատելի բազմաթիվ ստեղծագործություններ։ Համաշխարհային գրականության հսկաների՝ Լոմոնոսովի, Պուշկինի, Տոլստոյի, Մաքսիմ Գորկու ստեղծագործությունները գրված են այդ լեզվով։ Ռուսաց լեզվով են գրված բոլշևիկիների մեծ պարտիայի հիմնադիրների, նոր աշխարհի՝ սոցիալիստական հասարակակարգի հիմքը դնողների, աշխատավոր մարդկության առաջնորդների՝ Լենինի և Ստալինի հանճարեղ ստեղծագործությունները։ Մարդկության հանճարների՝ Մարքսի, Էնգելսի, Լենինի և Ստալինի ուսումնասիրության և հզատարության տարական է եղել ռուսաց լեզուն։

Ռուսաց լեզուն ռուս մեծ ժողովրդի մայրենի լեզուն է։ Երայց նա հավասարապես սիրելի է սովետական երկրի բոլոր ժողովուրդներին և աշխարհի առաջավոր մարդկությանը, որովհետև այդ լեզվով են տարածվում Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիայի գաղափարները, այդ լեզվով են մտածում և ստեղծագործում առաջավոր գիտության շատ ու շատ աշխատավորներ։

Հազար անգամ իրավացի էր պրոկտադրական Մեծ Ռևոլյուցիայի երգիչ՝ մեր ժամանակի մեծագույն պոետ Մայակովսկին, երբ գրում էր.

«Եթե ես նեղը լինեի
Անգամ հիսուն տարեկան,
Ես ուսանեմ կսովորեի,
Քանզի այդ լեզվով
Խոսել է Լենինը»:

Ռուսաց լեզուն իր մեջ է առել, մեմյանց համադրել աշխարհի շատ մեծ ու փոքր ժողովուրդների ստեղծած լեզվական իրավությունների լավագույն արժեքները և կերտել է այնպիսի մի շինություն, որը պատմության ընթացքը երբեք ու երբեք չի կարող փոշիով ծածկել. նա միշտ կմնա սրտես մաքուհության ստեղծած լավագույններից լավագույնը, որովհետև աշխարհի ամենահարուստ, ճկուն ու արտահայտիչ լեզուներից մեկը լինելու հետ միասին, դարձել է նոր աշխարհի համար մղվող պայքարի ամենագոյր զենքերից մեկը:

Սովետական երկրի ժողովուրդները ազատագրվելով կապիտալիստական ստրկությունից՝ վերածնվեցին, նոր ուժ ու թափ ստացան և սկսեցին զարգացնել իրենց կուլտուրան ու լեզուն. շատ ժողովուրդներ, որոնք նախկինում չունեին գիր ու գրականություն, հուսաց կուլտուրայի ու լեզվի ազդեցության տակ ստեղծեցին իրենց գիրը և աննախընթաց արագությամբ զարգացրին իրենց գրականութունն ու կուլտուրան: Սովետական երկրի ժողովուրդների անտեսական ու քաղաքական կյանքում կատարված փոփոխությունները հասցրին այն բանին, որ ստեղծվեց մեր երկրի բոլոր ժողովուրդների լեզուների համար մի ընդհանուր միասնական բովանդակություն՝ սոցիալիստական բովանդակություն, որը թեև արտահայտվում է ազգային ձևով, բայց մեր երկրի ժողովուրդների լեզուներում ստեղծված ընդհանրությունների ու փոխադարձ ազդեցությունների հիմնական պատճառն է: Մեր լեզուներում ստեղծված այդ նորը՝ պատմության մեջ մինչև այժմ չարձանագրված հեղաշրջումը արտահայտվում է սովետական անալոգիզմների ազդեցության շրջանակների ընդլայնման, սովետական երկրի լեզուներից, գլխավորապես ռուսաց լեզվից, ուրիշ լեզուներին անցած բառերի արմատացման և սովետական ինտերնացիոնալիզմի ուժեղացման մեջ: Սովետական երկրի հասարակական հարաբերությունները, սովետական ժողովուրդների վարքն ու բարքը արտահայտող շարքաբեր ու ոճեր արդեն միջազգային են դարձել:

Բուրժուական հասարակարգում նույնպես, առանձնապես ազգային լեզուների կազմավորման շրջանում, որոշ բառեր ու ոճեր ընդհանրանում և միջազգային էին դառնում: Դրանք մեծով մասամբ լատինական ու հունական բառեր ու ոճեր էին: Մեր երկրի ժողովուրդների լեզուներում նույնպես գործածվում են հունական կամ լատինական միջազգային դարձած շատ բառեր, սակայն ուսաց լեզվից այլ լեզուներին անցած բառերն ու ոճերը իրենց բովանդակությամբ և հասարակական արժեքով միանգամայն նոր են. դա այնպիսի ինտերնացիոնալիզմ է, որ կապված է սոցիալիզմի հետ, մեր երկրում կատարված փոփոխությունների հետ:

Ռուսաց լեզվից մյուս լեզուներին անցած բառերի մե մասը, անկասկած, շատ վաղ կարող է գործածված լինել այս կամ այն լեզվում, բայց միանգամայն տարբեր նշանակությամբ, ինչպես՝ պարտիա, ռեվոլյացիա, կոմունա, պրոպագանդա, կոմտրակտակցիա և այլն: Այդ և նման շատ բառեր Ռուսաստանում ստեղծված նոր հասարակական հարաբերությունների շնորհիվ նոր իմաստ են ստացել և կրկնակիորեն փոխ են առել շատ լեզուներ՝ այդ նոր իմաստով:

Սոցիալիստական երկրի ժողովուրդների հասարակական կենցաղավարությունն ու ստեղծագործական աշխատանքն արատաշատով և գիտությունն ու տեխնիկայի դանազան ճյուղերին վերաբերող շատ բառեր և ոճեր արդեն համաշխարհային նշանակություն են ձեռք բերել և ուսաց լեզվի միջոցով լայնորեն տարածվում են աշխարհով մեկ: Ռուսաց լեզուն իր մեջ ընդունելով և յուրացնելով բոլոր ժողովուրդների ստեղծած լեզվական կենսունակ իրողությունները և նոր ձև ու բովանդակություն առնելով դրանց, նորից մարդկությանն է վերադարձնում: Ռուսաց կուլտուրան ու լեզուն ստաշավոր, առաջնիչ դեր են կատարում աշխարհի բոլոր ժողովուրդների կուլտուրայի և լեզուների զարգացման բնադավառում:

Ռուսաց լեզուն այն հզորագույն միջոցներից մեկն է, որով սոցիալիզմի երկիրը՝ Լենինի—Ստալինի մեծ Պարտիայի ղեկավարությամբ կալում է միջնադարյան բարձրագույն լեզուների դեմ, պայքարում է մարդկության ազատագրության ու բարեկեցիկ կյանքի համար:

ՀԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐԸ

Հայոց լեզուն պատկանելի հնություն ունի՝ կազմավորվելով մեր էրայից դարեր առաջ՝ նա լրիվ չափով արտացոլել է հայ ժողովրդի զարգացման տարբեր աստիճաններով պայմանավորված դադափարախոսությունը, անադարտ դրությամբ պահել լեզվական այն բոլոր իրողությունները, որոնք փոխ է առել կամ ստեղծել է մեր ժողովուրդը իր դարավոր պատմության ընթացքում։ Այդ հարուստ ժառանգությունը ավանդվել է մեզ գրաբարի, միջին հայերենի և մեր բազմաթիվ բարբառների միջոցով։ Նրանք այն անսպառելի աղբյուրներն են, որոնցից արդի հայերենը՝ մեր ազգային լեզուն օգտվել է և միշտ էլ օգտվելու է։

Սակայն միայն հայոց տարբեր լեզուների իրողությունների օգտագործմամբ հնարավոր չէր լինի արտահայտել այն բազմապիսի հարաբերությունները, որոնք առաջացել են հայ և այլ ժողովուրդների միջև, և լրիվ կերպով դրսևորել գիտության ու տեխնիկայի զարգացման հետևանքով ձևավորված նոր հասկացություններ ու երևույթներ։ Ժամանակակից զարգացած յուրաքանչյուր լեզվի մեջ, —ասում են Մարքսն ու Էնգելսը, — սկզբնական ինքնագոյ լեզուն բարձրացել է մինչև գրական լեզվի մաստիճանը, մասամբ շնորհիվ լեզվի պատմական զարգացման՝ պատրաստի նյութից, ինչպես ռոմանական և գերմանական լեզուների մեջ, մասամբ ազգերի խաչավորման ու խառնման շնորհիվ, ինչպես անգլերենում, մասամբ շնորհիվ բարբառների համակենտրոնացման ի միասնական ազգային լեզու՝ տնտեսական ու քաղաքական համակենտրոնացման հետևանքով։¹

Հայ և հարևան ժողովուրդների լեզուների խաչավորման ու փոխադարձ ազդեցությունների մասին կան շատ ուշագրավ և հանդամանորեն գրված աշխատություններ։ Բայց վաղուց է ապացուցված, որ լեզուների և կուլտուրաների ներթափանցումն ու խաչավորումը ժողովուրդների անմիջական կապերով ու շփումով միայն չեն սահմանափակվում։ Հաճախ միմյանցից հեռու ապրող ժողովուրդներն էլ կարող են սերտ հարաբերությունների մեջ մտնել և միջանկյալ ճանապարհով ներգործել միմյանց կուլտուրաների ու լեզուների զարգացման վրա։ Պատմական որոշ շրջա-

¹ Маркс и Энгельс, „Немецкая идеология“, стр. 144.

նում այդպիսի դրութեան մեջ են գտնվել հայ և ռուս ժողովուրդները, նրանք ապրել են միմյանցից շատ հեռու, աշխարհագրական տարբեր պայմաններում, բայց չնայած դրան սերտ հարաբերությունների մեջ են եղել:

Հայ և ռուս ժողովուրդների կուլտուրական կապը, փոխադարձ շփումն ու հարաբերությունները և լեզվական հարակցությունները մենք երեք շրջանի ենք բաժանում. առաջին շրջանը սկսվում է մեր էրայի 7—8-րդ դարերից և տևում է ավելի քան տաս դար: Այդ շրջանը բնորոշ է որպես մեր երկու ժողովուրդների կուլտուրաների ու լեզուների փոխադարձ թափափորման ու ներգործության շրջան:

Երկրորդ շրջանը սկսվում է 19-րդ դարի առաջին կեսից, այն ժամանակվանից, երբ Հայաստանի մի մասը ազատագրվում է պարսիկ-թուրքական տիրապետությունից և միակցվում է Ռուսաստանին: Այդ շրջանից հիմնական շրջադարձ է կատարվում ռուս և հայ ժողովուրդների հարաբերությունների մեջ. հայկական հնագույն կուլտուրայի և լեզվի դարգացման համար նոր, համեմատաբար ավելի նպաստավոր պայմաններ են ստեղծվում, դրանց զարգացումը սկսում է ընթանալ ռուսաց կուլտուրայի ազդեցության ու հովանավորության տակ: Այդ շրջանը բնորոշ է նրանով, որ վերջնականապես ձևավորվում է հայ ժողովուրդը որպես ազգ և հիմնականում ավարտվում է հայ ազգային լեզվի կազմավորումը:

Երրորդ շրջանը սկսվում է մեր երկրում սոցիալիստական կարգերը հաստատվելուց հետո: Նոր կարգերի հաստատումը մեր երկրում հիմնականում փոխում է մեր կուլտուրայի ու լեզվի զարգացման ընթացքը. չտեսնված արագությունը հարստանում ու ճկունանում է մեր լեզուն, սկսվում են լայնորեն օգտագործվել մեր հին ու նոր լեզուների բոլոր իրողությունները, կազմվում են հայերենի նոր բառարաններ ու տերմինաբաններ, կարձ ժամանակում արդի հայերենը զարգացման այնպիսի աստիճանի է հասնում, որ առանց դժվարության՝ փխլիսոփայական, գիտական ու քաղաքական ամենաբարդ ու ամենանրբին ըմբռնումներ ու հասկացություններ արտահայտելու ընդունակ է դառնում: Այդ շրջանը բնորոշ է նրանով, որ մեր երկրի ժողովուրդները նոր կյանքի ուղու վրա են կանգնում, փոխվում է ազգային կուլտուրաների լեզուների բովանդակությունը, որակական նոր աստիճանի են բարձրանում նրանց փոխադարձ ազ-

դեցություններն ու ներթափանցումները, ոռոսաց լեզուն դառնում է ազգային լեզուների դարգացման ամենաուժեղ գործոններից մեկը։ Նոր տեսք ու նոր ձևավորում են ստանում մեր երկրի ազգային լեզուները։

Առաջին օրջան

Հայ ժողովուրդը հնագույն ժամանակներից սկսած սերտ կապ է ունեցել հարևան ժողովուրդների հետ և հաճախ օժանդակել է նրանց կուլտուրայի ու լեզուների զարգացմանը։ Նրա այդ շինարար աշխատանքը նկատի ունենալով՝ Ն. Յա. Մառը գրել է, որ հայոց լեզվի շինարարությունը միևնույն ժամանակ հանդիսացել է հայերի հետ կուլտուրական հարաբերություններ պահպանող ժողովուրդների լեզուների շինարարություն։ Ոչ մի կուլտուրա չի կարող զարգանալ առանց այլ ժողովուրդների կուլտուրայի ազդեցության, բայց հայկական կուլտուրան այդ տեսակետից հատուկ տեղ է գրավում։ Հայերը առաջիններն էին, որ գնդու միջին դարերում հասկացան միջազգայնականության շահերը։ Նրանք արևելյան ժողովուրդներից մեակն էին, որ եվրոպայում հիմնադրեցին կուլտուրական գիտական հաստատություններ և օժանդակեցին կուլտուրական կապերի լայնացմանը Առաջավոր Ասիայում։ Հաճախ օտարերկրյա նվաճողները անլուր տանջանքների են ենթարկել հայ ժողովրդին, բայց երբեք չեն կարողացել թուլացնել նրա անհողորդ կամքը, մեռցնել նրա մեջ գեղարվեստական բարձր ճաշակը։ Վարդապետական և տնտեսական դեպքերը, — շարունակում է Մառը, — երկրից երկիր էին քշում գեղարվեստական և գրական զարմանալի ձիրք ունեցող այդ ցեղին, որն իր հետ տարածում էր վարպետութուն, գեղարվեստական ճաշակ և գիտության լույսը ինչպես հեռավոր հյուսիսում՝ իթանեյով ոսկերչության զարգացմանը և հաստանում, այնպես և հեռու հարավում՝ դառնալով եթովպիական երկրի գրական շարժման մասնակիցը։ Հայկական ժողովրդական գրքերը իրենց տեսակի մեջ առաջիններն էին, որոնք օժանդակեցին տարբեր ազգությունների հսկայական շերտերի մոտիկացմանը, սկսած Միջագետքի և Ասորիքի արաբներից, մինչև հովհասյան լեռների բնակիչները։

Հայկական գեղեցիկ շինարարությունը Անիի անկումից հետո էլ չոչնչացավ, և հենց Հայաստանում վերականգնվեցին ֆասիած հուշարձանները և կահավորվեցին նոր, փարթավ եկե-

ղեցիներ. ի պատասխան նոր հալածումներն, հայրենի երկրում ստեղծվեցին նորագեղ արվեստի աշնիվ նմուշներ, բոլոր ժողովուրդներին մատչելի նարտարապետական ներդաշնակ ուրվագր-
ծումներ, նարտարապետական բազմաթիվ կոթողներ, որոնցից շատերը համամարդկային նշանակություն ունենան¹

Սակայն ոչ միայն արվեստով, նարտարապետությամբ ու կուլտուրայով, այլև սովորություններով, կրոնական պաշտամունք-
ներով ու լեզվով հայ ժողովուրդը շատ վաղուց դուրս է եկել իր երկրի սահմաններից և սերտ հարաբերությունների մեջ մտել ինչպես հարևան, նույնպես և այլ ժողովուրդների հետ։ Այդ տե-
սակետից հետաքրքրական են հայերենում շատ հին ժամանակ-
ներից պահպանված ռուզ, ռուզք, ռուզիկ բառերը և Արայի պաշ-
տամունքի ու ռուսական նախաքրիստոնեական շրջանի հետ
կապված մի շարք սովորությունների միջև նկատվող նմանու-
թյունները, որոնց մասին շատ հանգամանորեն խոսում է պրոֆ.
Դ. Ղափանցյանը իր «Արա Մեղեցիկի պաշտամունքը» գրքի մեջ։
Այդ բառերի մուտքը հայերենի մեջ, ինչպես նաև հնդեվրոպա-
կան մոտ հարյուր, արմատական հայերեն և ռուսերեն բառերի
նույնությունը խոսում են այդ ժողովուրդների դաժնավոր կապի
մասին։

Ակադեմիկոս Հ. Օրբելին «Սասունցի Դավիթ» էպոսը աշ-
խատության մեջ շատ հետաքրքրական ուրվագծումներ ունի
այդ կապի ու կուլտուրական փոխազդեցությունների մասին. նա
գրում է, որ Իլյա Մուրմյուռ մասին եղած բիլինաների և
«Սասունցի Դավիթ» էպոսի գուրդերի քաղերի միջև կան նմա-
նություններ, որոնք ուղղակի փոխառություններ են բացատրելու, կամ
այլ երրորդ աղբյուրից համարելը կլինե՞ր ենթադրություն։ Սա-
կայն այդ գուրդերի քաղի համապատասխանությունը փոխա-
ռություն չլինելով հանդերձ՝ «կարող է լինել ժողովուրդների
միջև եղած փոխադարձ կապի արտացոլում նյութական կուլտու-
րայի բնագավառում՝ նյութական կուլտուրայի առարկաների,
առօրյա զործածության առարկաների միջոց էլ, առանձնապես
հեշտ և շատ հեռու թափանցող զենքի ներմուծելու իմաստով»։²

Ութից տասներորդ դարերում կաղմավորված հայկական
էպոսի և 10-րդ դարում կաղմավորվել սկսող Կիևյան շրջանի

¹ Язык и История, т. I., стр. 68—69.

² Հ. Ա. Օրբելի, «Սասունցի Դավիթ էպոսը», «Պոեզիայի գրականու-
թյուն», 1939 թ., № 8—9.

ռուսական բիլինաների միջև եղած բազմաթիվ նմանութուն-
 ներն ու զուգադիպումները, անկասկած, ունեն իրենց պատ-
 ճառները և ավելի վաղեմի պատմութիւն. «Ոչ թե 1827—1829
 թվականներին, — շարունակում է Հ. Օրբելին, — ոչ թե Պետրոս
 Առաջինի՝ Կասպից ծովի կողմերն արշավելու տարիներին, ոչ թե
 Պետրոսի մոտ ուղարկված հայկական դեսպանութիւնների ժա-
 մանակներին, և ոչ էլ նույնիսկ 13-րդ դարում Վուլգայի միջին
 հոսանքի վրա՝ Տեալուշիում, Կազանի շրջանում կամ Բուլղար-
 ների երկրամասում կազմված հայկական գաղութների միջոցին
 է տեղի ունեցել հայերի՝ անմիջական կերպով ռուսների հետ
 շփմանը: Բյուզանդական Հերակլ կայսեր՝ 7-րդ դարում զեպի
 Դանուբի ափերն ընթացող հայկական զորքերը, Բյուզանդական
 Կայսր՝ հայազգի Բարսեղ Բուլղարասպանի բանակներում եղած
 հայկական զորամասերը, Բյուզանդական կայսր Զմշկիկի բանա-
 կում Սվյատոսլավին ժամանակակից ռուսական զորամասերը
 Ճորոխի ակունքներում, ռուսական շոկատները Պարտավի (այժմ
 Բարտա) պարիսպների տակ Աղվանքում (այժմ Ադրբեջան) 9-րդ
 դարում, ռուսական ԵԱՌ քառը Մովսես Կազանկատուցու Աղվա-
 նից պատմութեան մեջ, 11-րդ դարի Կիւյան մեծ իշխանների
 բանակներում գտնվող հայ վարձկան հեծելազնւերը, Կիւում
 Ֆեոդոսի Պեչորսկուն և մեծ իշխան Վլադիմիր Մոնոմախին
 բուժող հայ բժիշկները, Էջմիածնի վանքի հանդերձարանում
 գտնվող Կիւի Վլադիմիր Օլգերցովիչ իշխանի բյուրեղյա խաչը,
 Ստիպենկո քաղաքում (Նախկին Բերդյանսկ)¹ գտնված 12—13-րդ
 դարի Կիւիկյան հայկական շերեփը, 13-րդ դարի վերջում Լվովի
 շրջանում եղած հայկական գյուղերն ու գյուղաքաղաքները, —
 այս ամենը փաստեր են, որոնց վրա դեռ շատ քիչ են մտածել
 և որոնց շղթադիպումից՝ դեռ շատ քիչ եզրակացութիւններ
 են արված»:²

Ռուսական պետականութիւնն ստեղծվելուց դեռևս մի քա-
 նի հարյուրամյակ առաջ հայ գրականութեան մեջ հանդիպում
 ենք հիշատակութիւնների, որոնք խոսում են սլավոնական ժող-
 ուրդների կուլտուրական առանձին մշակութիւնների լայն
 տարածված լինելու մասին: Մեր թվականութեան 7-րդ դարում
 քրված և որոշ բանասերների կողմից սխալմամբ Մովսես Խո-

¹ Արդյոք Բերդյանսկ տեղանունը չի՞ առաջացել հայերեն քերդ բառից՝
 Բառի ձեռ և քաղաքի տեղը խոսում են այդ ենթադրութեան օգտին:

² Հ. Օրբելի, Նույն տեղը:

ըննացուն վերագրած «Աշխարհացույց» աշխատության մեջ հիշատակվում են 25 սլավոնական ցեղեր.

«Ժ. Թրակացուց աշխարհն յարեկից կալով Դաղմատիոյ առ երի Սարմատիոյ, եւ ունի Թրակիա փոքր աշխարհս հինգ և մի մեծ՝ յորում են սկլավային ազգք՝ քսան և հինգ, որոց փոխանակ մտին գուղքն»։¹

Մովսես Կաղանկատուցու «Պատմութիւն Ազունից աշխարհի» աշխատության առաջին մասի մեջ հիշատակված ռուսական сало բառի սլավոնական ծագումը կասկածանք չի հարուցում։² Ռուսները հնագույն ժամանակներից սկսած сало-ն որպէս սննդամթերք գործածելուց բացի, օգտագործել են նաև որպէս հարգարանքի (туалет) առարկա։ Այդ հանգամանքը հնարավորութիւն է ստեղծել նրա լայն տարածման համար։ Համաձայնաբար այդ բառը հայոց լեզվի մեջ է մտել առևտրական ճանապարհով, կամ պատերազմական գործողութիւնների հետևանքով։ Բայց ինչ ուղով էլ հայերենին անցած լինի այդ բառը, այնուամենայնիվ հասարակ փոխառութիւնն է։ Հայերը առևտրական հարաբերութիւնների մեջ են եղել ռուսների հետ հին ժամանակներից սկսած, այդ հարաբերութիւնները այնքան խոր արմատներ են ունեցել, որ նույնիսկ արտացոլել են մերձվողապիներին խոսակցական լեզվում։ Հովաշները, օրինակի համար, հում մետաքսը կոչել են армянский шелк «հայկական մետաքս»։ Աղվանքը եղել է այն հիմնական կայաններից մեկը, որով անցել են Ռուսաստանի հյուսիսային շրջանները Առաջավոր Ասիայի հետ կապող առևտրական ճանապարհները։ Աղվանից աշխարհից և Հայաստանից հաճախ «հագուստի համար մատերիալ» են վաճառվել ոչ միայն խաղարներին, այլև զանազան գործվածքներ են արտահանվել Ռուսաստան և խաղարներին հարևան երկրները։ Այդ հարաբերութիւնները արտացոլել են ինչպէս ռուսերենի, նույնպէս հայերենի մեջ։ Հ. Օրբելին ռուսերեն ковёр բառը համեմատում է հայերեն կապերտ բառի հետ և գտնում, որ ռուսները այդ բառը փոխ են առել հայերից։ Հայոց բարբառներում այդ բառը գործածվում է կարպետ ձևով, որին շատ նման են անգլիերեն carpet «գորգ», գերմաներեն karpel, իտալերեն carpi-la «մի տեսակ թավ կերպաս», հունգարերեն karpit, սերբերեն

¹ Մասնագրութիւն սրբոյն հօր մերոյ Մովսես Կաղանկատու, Վենետիկ, 1865 թ.

² Н. Я. Марр, Избранные работы, т. V, стр. 90.

karpit «վարագուր» և սլավոնական այլ լեզուներում պահպանված համապատասխան բառեր՝ միայն հնչյունական որոշ ձևափոխումներ են թարգմանվում: Հ. Օրբելու տեսակետը հաստատ հիմք ունի: Այդ բառը ամենայն հավանականությամբ հայերենից անցել է սլավոնական ժողովուրդներին ու նրանց միջոցով թափանցել Նվրոպա և լատիներեն տարածվել:

Հայերենից են անցել ռուսերենին նաև КНИГА «գիրք» և качерга «խաչ երկաթ» բառերը: КНИГА «կնիք» բառի մուտքը ռուսերենի մեջ կապված է պատմական և կուլտուրական շատ մեծ նշանակություն ունեցող իրադարձությունների հետ: Կարծում ենք, որ ճիշտ չեն այն լեզվաբանները, որոնք ենթադրում են, թե КНИГА բառը հայերենից անցել է թյուրքերենին, ապա թյուրքերենի միջոցով մտել ռուսաց լեզվի մեջ: Ավելի շուտ այդ բառը ռուսերենի մեջ է մտել այն շրջանում, երբ հայերը սկսել են առևտրական հարաբերությունների մեջ մտնել ռուսների հետ:

Ռուս և հայ ժողովուրդների, ինչպես նաև նրանց ու Կովկասյան այլ ժողովուրդների սոցիոլոգիաների ու կուլտուրական այլ մշակույթների մեջ նույնպես խոր ընդհանրություններ կան: Վաղուց է նկատված, որ Ուկրաինական և Կովկասյան ժողովրդական երաժշտություններն ու մոտիվները ընդհանուր շատ դժեք ունեն. հնուց մնացած շատ ավանդություններ պահպանված են և հայերի և ռուսների մեջ: Նմանություններ են նկատվել նաև Կովկասյան ժողովուրդների և Ռուսաստանի 'հարավային շրջանի ցեղերի տարադների, ինչպես նաև ճարտարապետության ու արվեստների միջև:

Հայկական ճարտարապետությունը, որը դեռևս լրիվ չափով չի ներկայացված գիտական աշխարհին, իր վրա է բեռնել համաշխարհային շատ հմուտ ճարտարապետների ուշադրությունը: Նրանց մանրակրկիտ հետազոտություններն ու համեմատությունները ցույց են տվել, որ Հայաստանում արևելքի ազդեցության տակ շատ վաղուց ստեղծված էին ուշադրով մի արվեստ և ճարտարապետական հատուկ ձևեր, որոնք 7—10-րդ դարերի ընթացքում մի կողմից՝ թափանցում են բյուզանդական տերապետության երկրները՝ Վրաստանը, Ռուսաստանը և հարավային սլավոնական շրջանները, մյուս կողմից՝ Բյուզանդիայում հաստատված Հայկական հարստության շնորհիվ՝ հասնում են մինչև կասերական մայրաքաղաքը:

«Հայաստանեն էր, որ պիտի գար հունական լաչաձև հա-

տակադժի ոճը և նմանապես Վասիլ Ա-ի կանգնած նոր եկեղեցվո ձևը, — ասում է Դիլլը Հայ ճարտարապետութեան պատմութեան ներհուն մասնագետ Թ. Թորամանյանը համեմատելով բյուզանդական Վասիլ կայսեր՝ Կոստանդնուպոլսում կառուցած եկեղեցին Հայաստանում դրանից առջ կառուցված եկեղեցիների հետ, գտնում է, որ «Էջմիածնի մոտ 7-րդ դարուն կանգնված Հոփոխովն վանքի եկեղեցին և Խժկոնքի Ս. Աստվածածին, որ կանգնված է 10-րդ դարեն ոչ ուշ, իրենց հատակադժով բնավ չեն տարբերիր Վասիլի եկեղեցվո հատակադժեն, միևնույն ձևով ներքուստ խաչաձև, և արտաքուստ ամփոփված են քառակուսի մեջ, միակ տարբերութունը կիսյանա հայոց եկեղեցիներուն միայն մեկ դժբեթ ունենալուն մեջ։ Բայց խակահան Վասիլ կայսեր շինած հինգ զմբեթով եկեղեցիին նման երկու օրինակ ինձի հայտնի են առայժմ, որոնցմե մեկը Անիի Առաքելոց եկեղեցին է, իսկ մյուսը՝ 6-րդ դարի վերջերին Հռահան կաթողիկոսի՝ Երևանի մոտ Ավան գյուղում կառուցած ներքուստ խաչաձև և հինգ զմբեթանի եկեղեցին, է։ Այդ եկեղեցիների նախատիպը եղել է հինգերորդ դարի վերջին Վահան Մամիկոնյանի կառուցած Էջմիածնի տաճարը¹ Թ. Թորամանյանի մանրակրկիտ ուսումնասիրութունները հաստատում են Ստեփանոսիկի և Դիլլի ենթադրութունները՝ բյուզանդական և այլ երկրների ճարտարապետութեան ձևավորման ու դարգացման վրա հայկական ճարտարապետութեան ունեցած ազդեցութեան մասին։

Կիլիյան Ռուստոմտունով քարից կառուցած առաջին շենքերը եղել են եկեղեցիներ, որոնց հատակադժերի ուսումնասիրութունը բերում է այն համոզման, որ դրանց ճարտարապետները Հայաստանից կամ Վրաստանից են եղել։ Դրա օգտին են խոսում, — ասում է Նիկոլսկին, — առաջին հերթին Կիլեցիների և այդ երկրների միջև ստեղծված հաստատուն հարաբերութունները, և գլխավորապես ճարտարապետական ձևերի այն առանձնահատկութունները ու շինարարական հնարները, որոնք ձևավորվել են Կովկասում և այնտեղից ներթափանցել Կիև։ Դեռևս Դիլն է նշել, — շարունակում է Նիկոլսկին, — որ Մոսկի եկեղեցու (11-րդ դարի վերջեր) և Կիլիյան Սոփիայի հատակադժերի միջև կան նշմարելի նմանութուններ, և դեռևս կարելի է վիճել

¹ Թ. Թորամանյան, «Հայկական ճարտարապետութուն», էջ 70—71

Թե արդո՞ք ռուսական հնագույն եկեղեցին ավելի շուտ հայ ճարտարապետի արտադրանք է, քան բյուզանդացու Հետագայի ռուսական ժողովրդականության հաստատեցին այդ կարծիքը: Նմանություններ են նկատվել նաև հայ և ռուսական եկեղեցիների դարդանկարների միջև: Վլադիմիր-Սուզդալյան ճարտարապետության մեջ այնքան մեծ դեր խաղացած քանդակագործական զարդանկարները բավականաչափ նման են մի կողմից սերբական տաճարների բանդակներին, իսկ մյուս կողմից՝ հայկականին: Միաձուլվելով և միահյուսվելով միմյանց այդ օտար ազդեցությունները՝ ենթարկվել են նաև տեղական ճարտարապետության ներգործությունը՝ և ձևացրել ճարտարապետական նոր որակի ու:

Այդ խաչավորումներն ու ներգործությունները բացասաբար չեն ազդել ռուսական ճարտարապետության վրա: Ռուսական կուլտուրան ու ճարտարապետությունը իրենց հերթին օժանդակել են այն ժողովուրդների կուլտուրայի ու ճարտարապետության զարգացմանը, որոնց ազդեցությանը հրեքներ ենթարկվել են: Յուրաքանչյուր ժողովուրդի արվեստը, — նշում է Ի. Գրաբարը, — իր ազգային յուրահատկությունների ամբողջությամբ վերցրած՝ յուր աճման ու զարգացման գույքն է, անխուսափելիորեն ենթարկվում է շրջապատի կուլտուրայի ազդեցությանը, այդ օտար սկզբնավորությունը ոչ միայն չի ոչնչացնում նրա ինքնագոյությունը, այլ հաճախ առաջ է մղում նրան առանձնահատուկ ուժով ու ցայտունությամբ և փառահեղ ծաղկման հասցնում: Ռուսաց լեզուն և կուլտուրան այդպիսի զարգացման հոյակապ օրինակներ են տվել: Նրանք իրենց սկզբնավորման շրջանից մինչև այժմ առանց որևէ սահմանափակման վերցրել ու յուրացրել են մարդկության ստեղծած կուլտուրայի լավագույն տարրերը և դրանով իսկ փրկել դրանց անհետ կործանումից, ու խթանել այլ ժողովուրդների արվեստի ու լեզվի զարգացմանը:

Բյուզանդիան, առավել ևս բյուզանդական հայ կայսրները ձգտել են Հայաստանը իրենց գերիշխանության տակ պահել: Ավելին, նրանք ամեն կերպ աշխատել են հայերին դադարեցնել Բյուզանդիա, որպեսզի կարողանան նրանց միջոցով մի կողմից՝ զարգացնել իրենց կուլտուրան ու տնտեսությունը և

¹ Никольский, История русского искусства. стр. 78.

² И. Грабарь, История русского искусства, т. I, стр. 1.

մյուս կողմից՝ ունենալ պետութեան համար հաստատուն հենարան և անկաշառելի բարեկամներ՝ հանձինս իրենց ազգակիցներին Բյուզանդական պետութեան այդ քաղաքականութեանը իհարկէ հաճախ բացասաբար է անդրադարձել հայ ժողովրդի անտեսութեան ու պետական կյանքի կազմակերպման վրա, բայց այդ հանգամանքները չէին անհանգստացնում իշխելու տենչով տարված բյուզանդական տերերին, որովհետեւ նրանք ցանկանում էին տեսնել Հայաստանը ժամանաւաժա, բյուզանդական պետութեան կցորդ, և ոչ թե ուժեղ ու հզոր մի երկիր։ Հայերին Բյուզանդիա դադրեցնելու համար նրանք ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնում. մերթ նրանց հորդորում ու բնակչութեան տեղ և կալվածներ էին առամաղորում, մերթ հրաւիրում էին օրպէս բանվորներ և արհեստավորներ՝ իրենց քաղաքները շինելու և բարեկարգելու համար, և երբեմն էլ ուղղակի ստիպում էին հայ իշխաններին իրենց ընտանիքով ու բարեկամներով թողնելու հայրենիքը և բնակչութեան հաստատելու Փոքր Ասիայի իրենց ենթակա երկրներում։ Հայտնի է, որ 1045 թվին բյուզանդական կայսրը խաբուսեցած զրկելով դահից Անիի Գագիկ 2-րդ թագավորին, ստիպում է նրան գաղթել Փոքր Ասիա։ Դրանից մոտ քսանհինգ տարի առաջ, Բյուզանդիայի Վասիլ 2-րդ կայսրի օրոք, Վասպուրականից Բյուզանդիա են գաղթում 15 հազար հայեր։ Հայերի գաղթը դեպի Փոքր Ասիա ավելի է ուժեղացնում սելջուկների արշավանքի շրջանում. այսպիսով՝ 11-րդ դարի երկրորդ կեսին Կիլիկիայում, որը գտնվում էր Բյուզանդիայի գերիշխանութեան տակ, գոյանում է բավականաչափ ստվար հայկական բնակչութուն, որը դառնում է Կիլիկյան հայկական թագավորութեան բազան։ Սակայն հայերը միայն Բյուզանդիա չեն գաղթում։

Հայ ժողովրդի մի զգալի հատված թողնելով իր հայրենի երկիրը նախընտրում է դնալ դեպի Ռուսաստան և դեպի Ղրիմ։ Սերգեյ Գլինկան պատմում է, որ 11—13-րդ դարում Ղրիմ և Ռուսաստանի հարավային շրջաններ են գաղթում մոտ 40 հազար հայ ընտանիքներ¹։

Հայաստանից Ռուսաստանի հարավային շրջանները գաղթած հայերը կարճ ժամանակում իրենց վրա են դարձնում ռուսական իշխանութույնների ուշադրութեանը. 1052 թվին,

¹ С. Глинка, «Обозрение истории армянского народа» стр. LI.

ինչպես նշում են հայ և ռուս պատմագիրները,¹ ռուսաց Դիմիտր դոբրոյ որդին Թեոդոր մեծ իշխանը լեհերի դեմ մղած պատերազմում զաղթական հայերի հետ դաշն է կապում՝ ընդդեմ լեհերի։ Նախ խոստանում է մի շարք արտոնություններ և բնակության տեղ տալ հայերին, եթե այդ պատերազմը հաջողությամբ վերջանա։ Հայերը այդ պատերազմում մեծ քաջություն են ցույց տալիս և աչքի են ընկնում իրենց նվիրվածությամբ։ հաղթում են ռուսները և իշխանը իր աված խոստումը կատարում է ու Կիևում և լեհերից գրաված քաղաքներում բնակություն տեղ է հասկացնում հայերին և օգնում է նրանց կարգի բերելու իրենց տնտեսությունը։ Դրանից կես դար հետո հայերը Կիևում կառուցում են իրենց եկեղեցին և սկսում են արագ տեմպով զարգացնել իրենց կուլտուրան և արհեստները, որոնց տարածման համար արդեն բարենպաստ պայմաններ էին ստեղծված։ Հայ բժիշկները, ճարտարապետներն ու օրհեստավորները մեծ համարում են ձեռք բերում և աշխատում են նույնիսկ պալատական շրջաններում։ Նրանց աշխատանքի ու ձիրքի մասին մեծ համակրանքով են խոսել ռուս պատմիչները։ Ռուս պատմիչ Նեստորը մեծ հիացմունքով է խոսում հայ բժիշկների մասին, նա գրում է, որ Կիևում կար մի հայ բժիշկ, որը այնքան հմուտ ու ճարտար էր բժշկություն արվեստի մեջ, որի նմանը երբեք չի եղել։ Հայերը առևտրական լայն գործունեություն են սկսում Ռուսաստանում։ Սակայն նրանք Ռուսաստանի հետ առևտրական հարաբերությունների մեջ են մտնում նաև հույների միջոցով։ հայերը, — ասում է Գլինկան, — Կոստանդինուպոլիս վրայով, հույների աջակցությամբ առևտուր էին անում Ռուսաստանի հետ։ 16-րդ դարում հայերը՝ բազմաթիվ ընկերություններ կազմած, առևտրով էին զբաղվում Աստրախանում, Կազանում և Մոսկվայում, ուր կազմակերպել էին հայկական տեղումը։

Պարսկահայերը, մասնավորապես Նոր Զուղայի հայերը, սերտ հարաբերություններ են ստեղծում ռուսների հետ։ Նրանք Հընդ-կաստանից, Պարսկաստանից մետաքսեղեն, զոհարներ, ընտիր գործվածքներ, ձիախոտ և այլ ապրանքներ էին բերում Ռուսաստան և վաճառում, կամ փոխանակում գլխավորապես ընտիր մորթեղեններով։

¹ Մ. Գլինկա, Նույն տեղ, II մաս, էջ 132։

Առանձնապես սերտ են դառնում այդ հարաբերությունները 17-րդ դարից սկսած, երբ ռուսական պետությունը իր անմիջական հովանավորության տակ է առնում հայ առևտրականներին: Ռուսաստանի ցար Ալեքսեյ Միխայիլովիչը 1645 թվին հատուկ հրամանով թույլատրում է հայ վաճառականներին մեծածախ և այլ թանկագին ապրանքներ առանց մաքսի ներմուծել Ռուսաստան: Պարսկահայ վաճառականների ընկերությունը՝ ի պատասխան ռուսական կառավարության ցուցաբերած բարյացակամ վերաբերմունքի, 1659 թվին, Զաքարիա Սարահատյանի միջոցով, Ալեքսեյ Միխայիլովիչին ուղարկեց մեծ նվերներ, որոնց մեջ կային արևելյան շքեղությամբ զարդարված զահավորակներ, որոնք իրենց վրա կրում էին բաղմամբով ազամանդներ, հակինթներ և փրբուղակներ: 1667 թվին հայկական առևտրական ընկերության գործերի հավատարմատարի հետ առևտրական պայմանագիր է կապվում, որով թույլատրվում է հայերին Ռուսաստան ներմուծել պարսկական զանազան ապրանքներ: Նույն թվին թույլատրվում է հայերին Ռուսաստանի վրայով իրենց ապրանքները Նվրոպա արտահանել: 1687 թվին հայերը Նովոբորովի վրայով Շվեդիայի նետ առևտուր անելու իրավունք են ստանում:

Հայերի համար Ռուսաստանում ստեղծված նորմալ պայմանների շնորհիվ նրանք ոչ միայն առևտուր, այլև կուլտուրական մշակույթներ են զարգացնում: Նրանք են, որ առաջին անգամ թիրեք գետի ափերին թթենու անկիներ են աճեցնում, մետաքսի առաջին մանաբաններ հաստատում Ռուսաստանում և օժանդակում կերպաս գործելու արհեստի զարգացմանը: Նրանք սկսում են դարկ տալ նաև արվեստի զանազան ճյուղերին:

Ս. Գլինկան նշում է, որ 17-րդ դարի երկրորդ կեսին Մոսկվայում կային բաղմամբով հայ նկարիչներ, որոնցից շատերը բարդեն Ռուսաստանում անուն էին վաստակել: Այդ հարաբերությունները ավելի սերտ են եղել զլխավորապես Ռուսաստանի զանազան վայրերում բնակչության հաստատած հայերի և առևանների միջև: Ռուսաստանի հայերի սովորություններն ու լեզուն խիստ կերպով ռուսաց ազդեցության են ենթարկվել: հին ժամանակներից սկսած նրանք փոխել են նաև իրենց ազգանունների հայկական վերջավորությունները: Հայտնի են եղել Անիբով (Հովակիմյան), Թեոֆորովիչ, Խրիսթոֆովիչ, Ակոբովիչ, Ասկենետովիչ, Բոգդանովիչ, Բուդագովիչ, Սանովիչ (Հովհաննի-

սյան), Մսրովիչ, Գաբրիլովիչ և այլ հայ աշխատականներն ու իշխանները¹։

Մեր առաջավոր ինտելիգենցիան 19-րդ դարի սկզբներին լայն պայքար ծավալեց ժամանակակից հայերենի մշակման ու հարստացման համար։ Սակայն դրա համար նախադրյալներ վաղուց էին ստեղծված. դեռևս 17—18-րդ դարերում հայ և ռուս ժողովուրդների միջև ստեղծված հարաբերությունները ավելի սերտ են դառնում ու հաստատուն հիմքերի վրա դրվում։ Հայերը այդ դարերից սկսած ընտելություն են հաստատում նաև Ռուսաստանի կենտրոնական և մերձծովային քաղաքներում. նրանք հասնում են մինչև Արևմտագետիկ, Պետերբուրգ, Նովոգորոդ և այլ քաղաքներ։

18-րդ դարը խոշոր հեղաշրջումների ու վերանորոգումների դար էր Ռուսաստանի համար։ Իր ժամանակի մեծագույն պետական գործիչ Պետրոս մեծը վերափոխում է Ռուսաստանը։ Այնտեղ սկզբնավորում են կուլտուրական, քաղաքական ու առևտրական մի շարք հաստատություններ, որոնց կազմակերպման մեջ նշանակալի դեր են խաղում նաև հայերը։ Պետրոս մեծը լայն հնարավորություններ է ստեղծում հայկական առևտրի և կուլտուրական ձեռնարկումների ընդարձակման համար։ Նա 1708 թվին թուլյաթում է հայերին՝ Նարվայի վրայով ապրանքներ արտահանել Նիդրպա և նոր հիմնադրված Պետերբուրգ քաղաքը։ Սակայն հայերը սպասած արդյունքներ չեն ստանում Նիդրպաթում, որովհետև այն ժամանակ կվրդական պետությունները մտահոգված էին իրենց երկրի ներքին դրությունը բարելավելու և արտաքին քաղաքական հարաբերությունները կայունացնելու խնդրով և առևտրի զարգացման հարցերով զբաղվելու ժամանակ չունեին։ Պետրոս մեծը, սակայն, շարունակում է ամեն կերպ օժանդակել հայկական առևտրի ծավալմանը Ռուսաստանում։ Նա 1711 թվի մարտի 2-ի հրովարտակով հրամայում է պաշտպանել Պարսկաստանի հայերին, ամեն տեսակի օժանդակություն ցույց տալ նրանց, որպեսզի նրանք սիրով հաճախեն Ռուսաստան, 1717 թ. հունվարի 27-ին հատուկ հրամանով Ռուսաստան է հրավիրում հայ վաճառականներից ամենանշանավորներից մեկին՝ Ջուռնիայի մեծահարուստ վաճառական Պետրոս Աբրոյին։ Վերջինիս Պետրոսի բաժատուն և նախատես քաղաքականությունը Ռուսաստանի երջան-

¹ Է. Դ. Գուշներյան, «Պետությունը զողթանությունը ներմուշայոց», էջ 101—102։

դուքյան համար անբավ հետևանքներ առաջ բերավ, Հաղարավոր հայեր Լեհաստանը, Պարսկաստանը և Տաճկաստանը թող տվին ու Ռուսաստան գնացին բնակեցան և իրենց վաճառականությամբը, արհեստներովն ու երկրագործությամբը ճոխացրին¹։ Պետրոս մեծը,—ասում է Գլինկան,—անձամբ ծանոթանալով հայերի հետ, հավատացած էր, որ նրանք կլինեն իր հավատարիմ գործակիցները երկրի արդյունաբերության և արևելքի հետ առևտրական հարաբերություններ ամրացնելու գործի կազմակերպման մեջ։ Կարծես թե նա հայ ժողովրդին իր դոյության նոր տապաբեղ դուրս բերեց։ Նրախաղիթությունը նշելով Ռուսաստանին հայերի ցույց տված ազդեցության և հասարակական օգնությունը՝ շնորհապարտ թագավորը տվեց նրանց լայն իրավունքներ և մշտապես հովանավորելու խոստում²։ Հայերը,—շարունակում է Գլինկան,—հետևելով Պետրոս մեծի կոչին՝ շատացրին ընտանիքներով փոխադրվել Ռուսաստան։ Այդ նոր վերաբնակիչների մեջ էին նաև Մանուկ Հաղարկի ժառանգները, որոնք հսկայական դրական դեր են խաղացել հայկական կուլտուրայի զարգացման ու ժամանակակից հայերենի մշակման բնագավառում։

Այդ ժամանակաշրջանից սկսած հայ ժողովրդի ինտելիգենցիայի առաջավոր մասը իր հույսերը ամբողջապես Ռուսաստանի հետ է կապում. նա վերջնականապես համոզվում է, որ հայ ժողովրդի փրկությունը միայն Ռուսաստանից կարող է գալ, որ ժողովրդական սկսությունները կարող են միայն հուսադրական խոստումներ անել, իսկ իսկական օգնություն երբեք ցույց չեն տա ինչպես հայերին, նույնպես և այլ փոքր ժողովուրդներին։

Այդ է պատճառը, որ հայերը ոչ միայն առևտրով են զբաղվում Ռուսաստանում, այլև ղինվորական ծառայություն են կատարում ռուսական բանակում. նույնիսկ Պետրոս Մեծի բանակում եղել են հայկական հատուկ զորամասեր. 1720 թվի պատերազմում քաջաբար կռվում է հայերից կազմված մի զորամաս, որի հրամանատարն էր Հովհաննես Յուզբաշյանը։ Հայտնի են քաջամթիվ հայ սպաներ, որոնք ծառայել են ռուսական բանակում 17-րդ դարից սկսած և հասել են զինվորական բարձր աս-

¹ Գ. Շահնազարյանց, «Երազիր Պատմության Հայաստան աշխարհին», էջ 99.

² Ս. Գլինկա, «Обозрение истории армянского народа», т. II, стр. 247.

տիճաններին Հայերը 18-րդ դարի 2-րդ կեսերից Ռուսաստանում կազմակերպում են հասարակական ու քաղաքական զանազան հաստատություններ, որոնք հայ ժողովրդի կուլտուրայի ու լեզվի պատմության մեջ իրենց գնահատելի ավանդն են դրել։ Ռուսաստանում ստեղծվում է այն բազան, որի վրա հենված հայ ինտելիգենցիան ձևակերպեց հայկական կուլտուրայի ու լեզվի, հայ տրդիտի ու գրականության մշակման ու զարգացման հարցերին։ Հայ ժողովուրդը սկսում է իր ազգային կուլտուրայի ու լեզվի մշակումը մայր երկրի սահմաններից հեռու, բայց համեմատաբար նպաստավոր պայմաններում։ Ռուս ժողովուրդը չէր սահմանափակում նրա կուլտուրայի զարգացումը, այլ ավելի շուտ օժանդակում էր նրա առաջընթացին և արագացնում մեր ժողովրդի որպես ազգ ձևավորվելու պրոցեսը։

Ժամանակակից հայերենը՝ մեր ազգային լեզուն սկսել է կազմավորվել պատմական այնպիսի մի շրջանում, երբ հայ ժողովուրդը տնտեսապես մասնատված էր և չնայած միավորվելու ու մի ամոռլություն չունենալու իր բուռն ձգտումին, չէր կարող նույնիսկ չնչին չափով միմյանց մոտեցնել աշխարհով մեկ ցրված իր հատվածները։ Տարբեր երկրներում թափառում էին հայերը՝ ազգասիրության միևնույն իղձերով տոգորված։ Սակայն չնայած այդ տրոհվածությանը, 17—18-րդ դարերից սկսած ավելի ու ավելի է արձատանում հայերի ազգային ինքնագիտակցությունը և ամենուրեք պայքար է սկսվում հայ ազգի առժեղացման և ազգային կուլտուրայի ու լեզվի զարգացման ու մշակման համար։

Ազգային ինքնագիտակցության պրոցեսը ամենից տեսանելի արագանում է Ռուսաստանի զանազան քաղաքներում բնակություն հաստատած հայերի մեջ։ 17—18-րդ դարերից սկսած ռուսական օրենսդրության արևելքի և Անդրկովկասի նկատմամբ փոխվում է։ 18-րդ դարի 1-ին կեսերին լայնորեն ծավալվում են ռուս-հայկական հարաբերությունները, որոնք դրվում են նոր, քաղաքական լայն մակարդակի վրա։ Ցարական կառավարությունը լրջորեն սկսում է խորհել Սևծովյան, Մերձկասպյան մարզերը և Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու մասին։ Այդ կարևոր խնդիրը իրադրոճելու համար Ռուսաստանի ղեկավարողները Անդրկովկասյան քրիստոնյա ժողովուրդների մեջ տեսնում էին իրենց ամուր հենարանը։ Այդ պատճառով էլ սերտ կապեր են ստեղծում Անդրկովկասյան ժողովուրդների, որոնց թվում

նաև հայ ժողովրդի ազատագրական շարժման դորձիչների հետ և նախապատրաստում նրանց՝ հետագա պատերազմների ու արշավանքների ժամանակ ռուսներին կազմակերպված օգնություն ցույց տալու համար։ Հայ ժողովրդի առաջադեմ մտածողները մեծ պատրաստակամությունը սպասում էին ռուսներին։

Դեռևս 17-րդ դարից սկսած հայ առաջավոր ինտելիգենցիան իր երեսը դարձնում է դեպի Ռուսաստան և ռուսներից է հայցում բաղձալի ազատությունը։ Ռուսական կառավարող շրջանները խոստանում են օգնել հայերին և գործնականորեն քայլերի են դիմում, ինչպես առաջին հերթին նկատի ունենալով իրենց պետության շահերը։ Պետրոս մեծը 1722 թվին պատերազմ է հայտարարում Պարսկաստանին, հայերն ու վրացիները մեծ ընդերքով ընդունում են այդ լուրը, հավաքագրում են զինված ուժեր և պատրաստվում են դիմադրելու Պետրոս մեծին։

18-րդ դարի 2-րդ կեսում հայ-ռուս հարաբերությունները նոր փուլ են բնակոխում, ռուսական կառավարությունը ամեն կերպ աշխատում էր հայերին և այլ քրիստոնյա ժողովուրդներին իր կողմ դրավել, ռուսների համարումը նրանց աչքին բարձրացնել և Ռուսաստանի զրաված նոր տերիտորիաներում նրանց բնակեցնել։ Եկատերինա 2-րդը 1779 թվի նոյեմբերի 14-ի հրովարտելով 12 հազար զենյատին հող հատկացրեց Ռուստովի շրջանը անդափնելի Ղրիմի հայ գաղթականությանը, 10 տարով ազատելով նրանց հարկից։ Եկատերինա 2-րդի այդ հրովարտակը 1799 թվին վերահաստատեց Պավել 1-ինը, իսկ 1802 թվին՝ Ալեքսանդր առաջինը։ Ռուս հայտնի գործավար Ալեքսանդր Վասիլևիչ Սուվորովը իշխան Պոսյոմկինին գրած իր զեկուցագրերից մեկում խնդրում է թեթևացնել հայ գաղթականների դրությունը, «Ողորմած աչքով նայեցե՛ք նրանց վրա, — ասում է նա, — որոնք այնքան շատ բան են ղոհարերել դահի համար, քաղցրացրե՛ք նրանց դառը հուշերը»։¹

18-րդ դարի երկրորդ կեսի 70-ական թվականներին ռուսական կառավարական շրջաններում նորից սկսվեց քննարկվել Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու հարցը։ Եկատերինա 2-րդ կայսրուհին ցանկանում էր կրկնել Պետրոս մեծի 1722 թվի

¹ Петрушевский, „Генералиссимус, князь Суворов“, т. I, стр. 212.

Պարսկական արշավանքը՝ ավելի լայն մասշտաբներով։ Նա այդ մեծ ձևոնարկումը իրականացնելու համար 1779 թվականի վերջերին իր մոտ է կանչում Սուլտրովին և հանձնարարում է նրան հատարել բուսական պետություն այդ կարևոր առաջադրույթը։ Սուլտրովը գոհ իրեն արված հանձնարարությունից և ընդունելությունից, մեկնում է Աստրախան և սկսում է աշխույժ նախադասարարություն՝ Անդրկովկասը Ռուսաստանին միակցելու համար։ Սակայն նրան վիճակված չէր իր փայփայած նպատակներն իրագործել։ 1781 թվի վերջերին նա Աստրախանից ետ է կանչվում և նշանակվում այլ աշխատանքի։ Նրան ետ կանչելու գլխավոր օլտոնաուններից մեկն էլ այն էր, որ այդ ժամանակ որոշ շրջադարձ էր կատարվել Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ և Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու հարցը առժամանակ կորցրել էր իր այժմեականությունը։

Ռուս-թուրքական երկրորդ պատերազմի ժամանակ (1787—1791) ռուս զորավար Սուլտրովը նորից առիթ է ունենում շփվելու հայերի հետ։ Նրա բանակում, լինչպես հաղորդում են ուղբյուրները, գտնվել են հայ սպաներ՝ փոխ-գնդապետ Սաստատովը, փոխ-գնդապետ Մաներ և մայոր Լալանը։ Նրանք երեքն էլ զորավարի սիրելի յալներն են եղել։ Նրանցից Սաստատովը իր քաջությունների ու անձնվեր ծառայությունների համար հետագայում արժանանում է գեներալ-մայորի կոչման և շքանշանների, իսկ Մաները քաջարար ղոհվում է Իզմայիլի գրավման ժամանակ։¹

Եկատերինա 2-րդը 1795 թվին նորից վերադարձավ Անդրկովկասը Ռուսաստանին միակցելու հարցին և նախադասարարատեց նոր արշավանք։ Այդ արշավանքի ղեկավարությունը նա հանձնարարեց դրաֆ Զուբովին։ Հայերը ցանկանում էին, որ այդ արշավանքի ղեկավարը լիներ Սուլտրովը, որովհետև նրան համարում էին իրենց բարեկամն ու հովանավորողը։ Սակայն հայերի այդ ցանկությունը չի կատարվում։ Այդ ժամանակ չի իրականանում նաև Անդրկովկասը նվաճելու քաղաքականությունը, որովհետև Եկատերինա կայսրուհին մահանում է և Զուբովը ստիպված ետ է քաշվում։ Հայերի գրությունը ավելի է ծանրանում, պարսիկներն ու թուրքերը, տեսնելով ռուսների նկատ-

¹ „Собрание актов, относящихся к обозрению ист. армянского народа“, т. III, стр. 802.

մամբ հայերի յուրացրեա՛ծ վերաբերմունքը և տիրող ռեժիմի դեմ նրանց կազմակերպած ապստամբությունը, ու այլևս վախ չղգալով ոռւններից՝ սկսում են անխնա կոտորել հայերին. նորից Հայաստանը ամայանում է, բազմաթիւ հայեր բնաջնջվում կամ իրենց երկրից դուրս են վաղվում:

Օսկայն ուստական իշխող շրջանները չեն հրաժարվում հայերի օգնութլունից ու իրենց արտաքին քաղաքականութլունն իրագործելու համար նրանց օգտագործելուց. այդ պատճառով էլ ամեն կերպ օգնում, հուսադրում էին նրանց: Նիկոլայ 1.ինը նույնիսկ հայերին խոստացավ քաղաքական ինքնավարութլուն: Սակայն ձեռքերը ծալած չէին նստել նաև թուրքերն ու պարսիկները: Ներքին ուժեղ ճակատամարտներ էին տեղի ունենում մի կողմից Ռուսաստանի և մյուս կողմից Պարսկաստանի ու թուրքիայի միջև: Նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր հայերին իր կողմը դարձնել և թույլ հալ, որպեսզի իր հակառակորդը օգտագործի նրանց իր դեմ: Բայց հայերը վաղուց ի վեր իրենց հույսերը Ռուսաստանի հետ էին կապել և չէին հրաժարվում սուրների հկա դաշն կապելու մտադրութլունից:

Ռուսաստանը տանում էր հայերի այդ վերաբերմունքը և իր հերթին գրգռում էր հայերին թուրքերի ու պարսիկների դեմ, օժանդակում նրանց իրենց բոլոր ձեռնարկումների մեջ: Ռուսաստանի մի շարք արդյունաբերական կենտրոններում ստեղծվում են սոսկաբական և կուլտուրական ընկերութլուններ: Մոսկվայում հիմնադրվում է ուսումնական լուրջ հաստատութլուն՝ Լադարյան ձեմարանը, որը մեծ դեր խաղաց հայ ժողովրդի կուլտուրական կյանքը կազմակերպելու, նրան ինքնագիտակցութլան բերելու ու Հայաստանում աշխատելու համար ձեռնհաս կազրեր պատրաստելու բնագավառում: Լադարյան ձեմարանը կազմակերպվում է 1815 թվին: Նա իր կազմակերպչական սկզբունքներով ու գրվածքով ժամանակի պիտան մաքի մակարդակին էր կանգնած: Այդտեղ սովորողները ստանում էին բազմակողմանի կրթութլուն, ծանոթանում էին Ռուսաստանում և Նվորդայում կատարված գիտական հայտնագործումներին, դառնում քաղաքական պիտանի գործիչներ: Լադարյան ձեմարանի սաներն են եղել հայ ազգային կուլտուրայի ու լեզվի սլաոմութլան մեջ նշանակալի դեր խաղացած գործիչներ՝ Ս. Շահադիզը, Գ. Ալվերդյանը, Ռ. Պատկանյանը և ուրիշները:

Լազարյան ճեմարանի հիմնադրումից մոտ միկ տասնամյակ հետո, 1824 թվին, Ներսես Աշտարակեցին Թիֆլիսում կազմակերպում է մի դպրոց՝ դանազան գաղառներից հավաքվող հայերին ուսուցանելու համար։

Այդ դպրոցը ամենասերտ կապով կապված էր Լազարյան ճեմարանի հետ։ Դպրոցի դասատուները մեծ մասը անցել էր Լազարյան ճեմարանի բովով։ Դպրոցի առաջին տեսուչը նշանակվում է Լազարյան ճեմարանի ուսուցիչ, գրականագետ Ալամդարյանը, որը արդյունավետ մեծ աշխատանք է կատարում դպրոցում ուսումնական աշխատանքը կազմակերպելու և բարձրորակ կազմեր պատրաստելու ասպարհում։

Դպրոցի բացման հենց առաջին տարիներից դպրոցում գտնվում էին՝ հայերին, ռուսներին, ֆրանսիներին, պորտուգալներին, ճապոնացիներին, պարսիկներին, աշխարհագրություն, ֆիզիկա, զրականություն, նկարչություն, աստվածաբանություն, քրիստոնեական վարդապետություն, տրամաբանություն, թվարանություն, հանրահաշիվ, երկրաչափություն և այլն։ Ինչպես երևում է թվարկված առարկաներից, Ներսիսյան դպրոցը իր սաներին լուրջ կրթություն էր տալիս։ Նա շարունակում էր Լազարյան ճեմարանի տրադիցիաները։ Նրանք հիմնական ուսումնական հաստատություններն էին, որոնք տարածում էին ռուսական և եվրոպական կուլտուրան ամբողջ հայություն մեջ։

Ներսիսյան դպրոցի սաներն են Իդել թ. Աբովյանը, Ստ. Նազարյանը, Առ. Արարատյանը, Գր. Երեմյանը, Վ. Հովանյանը, Պ. Մազաթյանը, Սա. Մանգինյանը, որոնք մեծ ջանք են թափել աշխարհագրաբ. լեզվի մշակման, հայ կուլտուրայի ու գրականության հարստացման բնագավառում։

Ռուսաստանի տիրապետության տակ գտնված հայերը, միշտ էլ ցուցաբերել են իրենց հավատարմությունը ռուսների նկատմամբ։ Նրանք հոգաբարձությամբ մտնում էին ռուսական բանակը, հաջողությամբ կատարում ռազմական առաջադրանքները, օժանդակում ռուսական առևտրի ու արդյունաբերության զարգացմանը։ Օտարական կառավարությունը պահանջում էր հայերի աշխատանքը և վստահում նրանց։ Մակայն ամեն դեպքում, երբ առթիվ էր լինում հայերին որոշ արտոնություն տալ, նկատի էր ունեցվում պետության շահը։ Պայել 1-ինը 1799 թվի հոկտեմբերի հրովարտակով Աստրախանի, Մոզդոկի և Ղզլարի հայերին մի շարք արտոնություններ է շնորհում։ այդ հրովարտակում

ասված է, որ հայերը Ռուսաստանում վերաբնակվելու ժամանակից սկսած անքի են ընկել իրենց Զանաթրությամբ, օրինակելի վարքով ու շինարար հատկություններով և կառավարությանը ցույց տրված մեծ օգուտներով, այդ պատճառով էլ արժանանում են ցարի ողորմածությունը, եվ որպեսզի կրկնապատկվի նրանց աշխատատեղությունը և օգտակար հաստատություններ կազմակերպելու ընադավանում նրանց ցուցաբերած Զանքը, շնորհում է նրանց արտոնություններ, թույլատրում քաղաքներում ու գյուղերում կառուցելու վանքեր, եկեղեցիներ և այլ շինքեր:

Ռուսաստանի կառավարիչները այնքան զգույշ են վարվել այդ ժամանակ հայերի հետ, որ նույնիսկ Ռուսաստանում ապրող հայերի հպատակության հարցը թողել են հայերի կամքին, այն էլ եթե նրանցից որևէ մեկը ցանկացել է ընդունել ռուսական հպատակությունը, ընդմիջող չեն դարձրել նրան ռուսահպատակ, այլ ժամանակավոր հպատակություն են սահմանել: Ղրանով նրանք ակնարկել են հայկական ինքնուրույն պետություն ստեղծելու անհրաժեշտությունը: Մեծ հնարավորություններ են ստեղծվում շերամապահությունը զբաղվող հայերի համար. նրանք ադատվում են տուրքերից, նրանց թույլատրվում է անաբգել անեցնել թթի տնկիներ, ստեղծել շերամապահության համար անհրաժեշտ բաղանիք, անարգել կերպով զբաղվել առևտրով և այլն:

Հայերին շնորհված այդ արտոնությունների և ուշադրություն պատճառը, իհարկե, առաջին հերթին թաքնված էր ցարական կառավարության այն քաղաքականությունը, որ նա վարում էր արևելքի նկատմամբ: Ռուսական ղեկավարող շրջանները համոզված էին, որ հայերը ամեն կերպ կօժանդակեն նրանց, երբ նրանք կովեն պարսիկների ու թուրքերի դեմ: Նրանք շահագրգռված էին նաև տնտեսապես, հայերը առևտրական լայն կապեր ունեին Ռուսաստանի և զանազան երկրների հետ ու մեծ օգուտներ էին տալիս ռուսական իշխող դասակարգերին. այդ հանգամանքը թելադրում էր նրանց ամեն կերպ օժանդակել հայերին իրենց քաղաքական ու առևտրական գործունեության ընթացքում:

Ռուսական կառավարության այդ քաղաքականությունը իր հետևանքները ունենում է: Պարսկաստանի և թուրքիայի հայերը վերջնականապես թեքվում են դեպի Ռուսաստան և իրենց փրկությունը սպասում միմիայն ռուսներից: Նրանք Ռուսաստանից դուրս լայն աշխատանք են ծավալում և նախապատրաստվում

են ընդունելու ուսական զորքերին: Հայերի փայփայած իղձը կատարվում է 19-րդ դարի սկզբներին. Ալեքսանդր առաջինի թագավորութեան օրոք, 1813 թվին, հայկական շրջանների մի մասը Քյուլիստանի տաճմանագրով ուսական տիրապետութեանն է տնցնում, իսկ Նախիջևանի և Նրևանի խանութեանները ուսաները գրավում են 1828 թվին՝ Նիկոլայ առաջինի օրոք: Պարսկաստանի տիրապետութեան տակ մնացած հայերի մի զգալի մասը, մոտավորապես 40 հազար հոգի գաղթում և բնակութուն է հաստատում Ռուսաստանի զանազան վայրերում: Ռուսաստան է գաղթում նաև Թուրքիայում մնացած հայերի որոշ մասը:

Այդ տնտեսական ու քաղաքական սերտ հարաբերութունները, որոնք ստեղծված էին Ռուսաստանի և հայերի միջև, իրենց խորը ներգործութունն են ունենում նաև հայոց լեզվի ու կուլտուրայի զարգացման վրա:

Հայ ազգային լեզվի՝ աշխարհաբարի կազմավորման պրոցեսը իհարկե սկսել էր 19-րդ դարից դեռ շատ ու շատ առաջ: Այդ լեզուն կազմավորվում էր իր հիմքում ունենալով «Կը» և «Ում» ճյուղի բարբառները, որոնք նախնական շրջանում համասարապես օգտագործվում էին: Հետագայում փոխվում է այդ բարբառների օգտագործման չափը. արևմտյան հայութեան մեջ՝ «լիսալոր շեշտը» գրվում է «Կը» ճյուղի բարբառների իրողութունների օգտագործման վրա, իսկ արևելյան հայութեան մեջ՝ «Ում» ճյուղի բարբառները: Առաջին անգամ ուժեղ կերպով սկսում է զարգանալ մեր ազգային լեզուն արևմուտքում, առանձնապես հայկական գաղութներում: Մխիթարյանները այդ լեզուն 18-րդ դարի երկրորդ կեսերից սկսած արդեն մշակման որոշ աստիճանի էին հասցրել, իսկ 19-րդ դարի 2-րդ կեսին արդեն այնքան էին հղկել այդ լեզուն, որ նա հետագայում այդ աստիճանից վեր չկարողացավ բարձրանալ:

Այլ էր «Ում» ճյուղի բարբառների հիման վրա մշակվող աշխարհաբարի վիճակը. նա սկզբնական շրջանում զարգացման ուժեղ նշաններ ցույց չէր տալիս, և թվում էր, թե մեր ազգային լեզվի կազմավորման մեջ մնական դեր կխաղան «Կը» ճյուղի բարբառները: Բայց հետագայում միտնգամայն հակառակը ստացվեց, «Ում» ճյուղի բարբառների հիման վրա կազմավորվեց աշխարհաբարը և կամաց-կամաց հետին պլանի վրա մղեց «Կը» ճյուղի բարբառների իրողութունների օգտագործման հարցը այն չափով, որ նույնիսկ Մխիթարյան միաբանութեան տն-

դամներին շատերը, որոնք քիչ ջանք չէին թափել արևմտյան հայերենի մշակման ու նրա իրավունքների պաշտպանման ասպարեզում, հայտարարեցին, որ զարգանալու ավելի լայն հեռանկարներ ունի արևելյան հայերենը, քան արևմտյանը: Եվ հասկանալի էր, թե ինչու: Արևելյան հայերենը սկսեց զարգանալ ավելի նպաստավոր պայմաններում՝ ռուսական կուլտուրայի ու լեզվի բարերար ազդեցության տակ: Այդպես չէր զարգանում արևմտյան հայերենը. նա կտրված էր իր մայր հողից, մշակվում էր գաղութներում, ժողովրդից հեռու ու եվրոպական լեզուներին ձուլվելու վտանգին ենթակա, այդ պատճառով էլ տապալկվում էր իր յուզի մեջ, խուսափում օտար ազդեցություններից և դառնում ջերմոցային, անգործնական լեզու: Արևմտյան դրական հայերենը, չնայած մի շարք ինտելիգենտների ջանքերին, չդարձավ ամբողջ հայության, նույնիսկ արևմտյան հայության բնդհանուր լեզուն: Թուրքիայում ասլոդ հայության զգալի մասը խոսում էր թուրքերենով: Հայոց լեզուն անհետ կորչելու վտանգի առաջ էր կանգնած:

Իսկ արևելահայության դրական լեզուն գնալով ավելի ու ավելի էր տարածվում և համազգային դառնալու հավանեցություններ ջուլեցաբերում, որովհետև նա ավելի շատ էր կապված ժողովրդական լայն հատվածների հետ: ավելի շատ էր օգտագործում բարբառային իրողությունները, կենսունակ էր և զարգանալու լայն հեռանկարներ ունեցող: Ժամանակակից հայերենը՝ աշխարհարարը ՎՍՍՀ-ի բարբառների հիման վրա ուժեղ զարգացում ստացավ 19-րդ դարի առաջին կեսին: Այդ զարգացման պատճառներից մեկը, ինչպես ասվեց վերևում, ռուսաց լեզվի և ռուսաց կուլտուրայի ազդեցությունն էր, ռուսաց լեզվի մշակման փորձն ու օրինակը:

Ռուսաց լեզվի ազդեցությունը սկզբնական շրջանում ավելի զգալի էր ռուսական տիրապետության տակ ապրող հայերի խոսակցական լեզվի վրա: Բայց արտահայտվում էր նաև դրավոր փաստաթղթերի ու հիշատակությունների մեջ: Այդ ազդեցությունը սկզբնականապես արտահայտվում էր առանձին բառերի ու հասկացություններ արտահայտող տերմինների գործածությամբ: Դրանց մի մասը մտավ մեր դրական լեզվի մեջ և մինչև այժմ էլ գործածվում է: Սակայն 18-րդ դարում և նրանից առաջ ռուսական ազդեցության նարցը տարբերային ձևով էր արտահայտվում, հայ ինտելիգենցիան դեռևս չէր կարողանում

ձիշտ կողմնորոշվելի Այդ, ճիշտն ասած, այն ժամանակ հնարա-
վոր էլ չէր, որովհետև մեր ազգային լեզուն իր խանձարուրում
էր գտնվում և հազիվ իր գոյութունը զգացնել էր տալիս։ Այդ
պատճառով էլ ամեն ոք իր ուղած ձևով և ցանկացած ուղղա-
գրությամբ գործածում էր այս կամ այն բառը, ըստ յուր ճա-
շակի ու հասկացողության մեկնաբանում օտար և ռուսական բա-
ռերը, 17 և 18-րդ դարերից մեզ մնացած մի շարք փաստաթղթ-
թերում և ձևագրերում մենք հանդիպում ենք բազմաթիվ ռու-
սական և ռուսերենի միջոցով մեր լեզվին անցած բառերի, որոնց
մի քանիսի թվարկումը թերևս ընդհանուր պատկեր տա այդ
շրջանի մեր լեզվի վիճակի մասին։

Այդ բառերը հիմնականում երկու կատեգորիայի կարելի է
բաժանել. ա) պետական-կառավարչական հասկացություններ ար-
տահայտող տերմիններ և բ) դանապան, առանձին գործածություն
ունեցող բառեր։

18-րդ դարի առաջին քառորդում հայերին պաշտոնական
դրագրությունների մեջ հանդիպում ենք եփուստոր (իմպերատոր),
կամենդանտ (комендант), կումանտոր, կրաֆ (գրաֆ), փրքազ
(приказ), սենսթոն (сенатор), ուքազ (указ), քնազ (князь) և
այլն նման բառերի։ Դրանցից մի մասը միշտ գործածվել է այն
պեղծերում, երբ դրությունը ուղղված է եղել ռուսական ցարին,
կամ ռուս պաշտոնյաներին։ Եղովի «Сношение Петра великого
с армянским народом» աշխատության մեջ տեղավորած հայե-
րեն փաստաթղթերում շատ անգամ են գործածվում այդ բառե-
րը։ Սահմանափակվենք մի քանի օրինակներով.

«Իմացաք զկարողութի և քս թ դրութեզ և եփուստոռիմ»
(1699 թ. էջ 17)։¹

«Եկ պրն Իսն եփուստոռիմ յերկրէն ի հետ դրոֆն իրանալ
թեա (Ihrer Altesse), լեխոն փալ քիցի (Electoralpalatin), բացենք
զգիրն կարգացինք» (էջ 18)։

«Ինքնակալ կայսեր Պետր վելիք իփրատոր ծովու և ցա-
մաքի» (1725 թ. էջ 418)։

«Մեր տէր Պետր Ալեքսէիշ իփրաքոր արտուծով զօրացեալ»
(1724 թ. էջ 381)։

«Պառվական Հայոց Ասկին, որն որ Պարսից երկրումն էք

¹ Առաջին թիվը փաստաթղթի տարեթիվն է, իսկ երկրորդը հիշված դեպքի
համապատասխան էջը։

քնակեալ, մեր ինփրոպոզուրեան ողորմածութեամբն շատ բարե
ունեմք» (1729 թ. էջ 353),

«Այն կումամսօր Ռէնդն որ Հաշթարխան նաւերին վերա-
կացու է, ոչ ծովու բան գիտէ, ոչ նաւի» (1711 թ. էջ 259),

«Կրափիմ և մեր էֆենտի Շաֆիրովին» (1716 թ. էջ 319),

«Պուրկուստրերն հկին ապրանքն ամէն քաշեցին տա-
րան» (1711 թ. էջ 257),

«Ձնդրալ (գեներալ) որ է սարկասար, քնազ (կնյազ) Դօլկո-
սուքն, (Долгоруков) (1726 թ. էջ 430),

«Դատաստան առ սեմեթօւացղ և մերս բարերարք և գեղեց-
կազունեղք» (1724 թ. էջ 371),

«Օսմանցու սուլթանի ղօշունի հետ կռիւ եմք տալիս լու-
սահոգի մեծ թագավորի ուխազով» (1729 թ. էջ 443),

«Թագաւորին ևս արդ անես, ուխազ առնես, դրկես, քանի
ցրիվ չեն ընկել» (1711 թ. էջ 418),

«Ափրաքսին ուխազ է արեւ, որ ոչ էլէին, և ոչ էլ իւր մար-
դին ապրանքն չտայք» (1711 թ. էջ 257),

«Թագաւորին ոչ մին փրփազեմ ինձ ապրանք չեն տուել»
(1711 թ. էջ 259),

Մեջ բերված օրինակներում, ինչպես նկատում է ընթեր-
ցողը, չի պահպանված նույնիսկ միևնույն բառերի միաձև ուղ-
ղագրությունը։ Այդ հանգամանքը ցույց է տալիս, որ 18-րդ դա-
սում և նրանից դուրս շատ ուշ հայերենի մշակված և բոլորի
կողմից ընդունված ուղղագրություն չի եղել։ Այդ ժամանակ
յուրաքանչյուր գրագետ, իր հասկացածի համաձայն, տառադար-
ձում էր այս կամ այն օտար բառերը, իհարկե միշտ ղեկավար-
վելով բառի իր ընկալած արտասանությամբ։ Նույնիսկ հայերեն
բառերի ուղղագրությունը կայունացած չէր։ Այդ բոլորը, ան-
կասկած, մեր գրական ուշադրանքի լիզվի անմշակվածության
ու անկայունության հետևանք էին։

Բառերի մյուս խումբը, որն անցել է հայերենին և գլխա-
վորապես դործածվել է խոսակցական լեզվում, առաջ մուտք գործել
գրավոր փաստաթղթերի մեջ, հետևյալ կարգի են՝ ըսլուկա (слы-
га), լոթկա (лодка), նոմհր (номер), կափիտան (капитан), պոյ-
եար (бояр), պօշկա (бочка), սեքրեթար (секретарь), ֆամիլ
(фамилия) և այլն։ Այդ բառերը նույնպես հիշատակված են Եղու-
վի վերահիշյալ գրքում ղեռնդրած փաստաթղթերում։ Ահա մի
քանի օրինակ։

«Ընդուկա Գարապետ Իւան» (1724 թ. էջ 382),

«Այլև Քուռ գետն որ մեր առջև է լօթիով կանցանուի, լօթ-
կեմ զգլաշի և Ղարապօրկի ձեռին է և ոչ մեր, որ էն թշնա-
միք» (1725 թ. էջ 402),

«էս մուսրով գիրս որ տվինք» (1724 թ. էջ 402),

«Այս խօսքի համար շահն մեկ կապիտան էր գրել հետն»
(1711 թ. էջ 258),

«Մեծ պօյեար և վազիր փօսօմի (փոսուսքի) փրկագին վե-
րակացու ի Մոսկով» (1711 թ. էջ 260),

«Ամենուց ինձ հիտ բերում եմ թագաւորական, թէ շուշա-
յով և թէ պօշկով։ Խնդրեմ որ մեկ ուքաղ լինի գինիքն ջրով դայ,
որ դայեան չլինի» (1711 թ. էջ 260),

«Պրնութիդ գիտէ՞ թէ որչափ քրիստոնեք թէ հոռոմ և թէ
սրբեամ թէ կուռճի կամ հայ, զոյնզդոյն հաբլիս օրըստօրէ կու
նուաղէցուցնեն» (1703 թ. էջ 162),

«Սեֆրեքարիդ և ալլօք խորհրդակցէք» (1724 թ. էջ 371),

«Որ ով ոք որ ուր ֆամիլովն գնայ էն ըսուտե՛վար
ուքաղն տանին էտուրանէնքն» (1724 թ. էջ 396) և այլն։

Նշված փաստաթղթերում հաճախ հանդիպում ենք այնպիսի
նախադասությունների, որ ամբողջապես ուսուերեն են, օրի-
նակ՝ «Մեծի իմփրայթօնիմ դլօնեցն և քդքեդ եավլառես իմստրա-
ցեց դել կալեգում» (1724 թ. էջ 406), Այս պարբերության վեր-
ջին հատվածը ամբողջապես ուսուերեն է (В коллегию иностранных
дел) և ընդհանրապես մեջբերված ցիտատի ինը բառերից
միայն երկուսն են հայերեն, եթե նկատի չունենանք և շաղկապը։

Այդ ժամանակ մեր լեզվի մեջ մտած բառերի մեծ մասը
հետադարձում գործածությունից դուրս մնացին և չտարածվեցին,
որովհետև նրանց համարժեքները մեր լեզվի բառապաշարում
վաղուց ի վիր կային։ Այժմ ոչ մի հայ, նույնիսկ օրեւ բարբա-
ռախոս հայ «ծառա» բառի փոխարեն չի գործածում слуга,
«քարտուղարի» փոխարեն՝ секретарь, «ասորիների» փոխարեն՝
սիրյան, հրամանի կամ հրովարտակի փոխարեն՝ указ, հրամանի
փոխարեն՝ приказ և այլն։ Այդ ժամանակ դեռևս մշակված էին
հայերի համար պաշտոնական լեզու և ամեն ոք, երբ առիթ էր
ունենում հարաբերության մեջ մտնելու ուստական իշխանու-
թյունների հետ, առանց օրեւ ընտրության գործածում էր իր
լսած բառերը, թեև դրանց համարժեքը կարելի էր միշտ էլ գտա-
նել հայերենում։

19-րդ դարի առաջին կեսերից մեր ինտելիգենցիայի առա-

Ջափոր մասը ոռոտաց լեզվի աղբիւցութեանը սկսեց ավելի գիտակցարար մօտենալ ու ընդունել միայն այն բառերը, որոնց համարժեքը չկար հայերէնում, կամ որոնք նոր իմաստի ու հասկացութեան հետ էին կապված: Դեռևս Խ. Աբովյանը ոռոտաց կուլտուրայի ու լեզվի ջատագովը լինելով հանդերձ, պահանջում էր, որ հայերը իրենց լեզուն չազավաղեն ոչ տեսքական բառերի անտեղի դարձածումով: Յուրաքանչյուր մարդ, — ասում էր նա, — առաջին հերթին պետք է իմանա իր մայրենի լեզուն, բայց դրա հետ միասին պետք է ծանոթ լինի նաև օտար լեզուներին, օղակի դրանցից, որպեսզի կարողանա զարգացնել իր սեփական լեզուն ու կուլտուրան: Աբովյանը ճիշտ էր հասկանում ոռոտաց լեզվի աղբիւցութեան հարցը և մի կողմից՝ պայքարում էր հայ ժողովրդի լայն զանգվածներին ոռոտաց կուլտուրային հաղորդակից դարձնելու և մյուս կողմից՝ հայոց լեզվի մշակման ու անաղարտութեան համար. նա չէր թերադնադատում նաև օտար բառերի ու նոր հասկացութեաններ արտահայտող տերմինների անհրաժեշտութեանը՝ մեր գրական լեզվի զարգացման գործում:

Աբովյանից առաջ հայ ինտելիգենցիան չէր կարողանում այդ խնդիրները դնել, որովհետև նրան առաջին հերթին գրադնոցում էր հայ ժողովրդին պարսկական և թուրքական տիրապետութեանից ազատելու հարցը:

ԵՐԿՐԱՐՁ ՕՐԶԱ Յ

Ռուսները 19-րդ դարի սկզբներին զբաղվում են Անդրկովկասի մեծ մասը, իսկ 1827 թվին՝ նաև Երևանի, Նախիջևանի և Օրդուբադի շրջանները (խանութեանները): Ավելի ուշ՝ 1878 թվին, Ռուսաստանին է անցնում նաև Կարսի շրջանը: Հայերի համար, ստեղծված այդ նոր իրադրութեանը հիմնավորապես փոխում է հայկական կուլտուրայի ու լեզվի զարգացման ընթացքը: Պետութեան օժանդակությամբ կազմակերպվում էին ազգային դպրոցներ և կուլտուրական այլ հասաստութեաններ, սկսում էին հրատարակվել թերթեր, տպագրվում էին գրքեր և այլն: Այդ բոլորը մեծապես օժանդակում էին կուլտուրական կյանքի ծաղկմանը: Ռուսաստանի տիրապետութեան տակ անցած հայկական շրջանները այդ քարենդամատ սլայմանների շնորհիվ մի քանի տարիների ընթացքում

անճանաչելիութեն փոխվեցին թե՛ տնտեսագիտ և թե՛ կուլտուրագիտ:

Յարական կառավարութեան այն ուշադրութեանն ու հոգատարութեանը, որ նա ցույց էր առնում հայերին, ունեին իրենց քաղաքական պատճառները. Ռուսաստանը գրավելով Անդրկովկասը՝ իր հաղիքները թուրքիայի հետ չէր փակել: Սեղ ծովին տիրելու պրոքրեմը օրակարգի հարց էր, իսկ որպեսզի նա կարողանար իր քաղաքական ծրագիրը կատարել, անհրաժեշտ էր ոչ միայն իր տիրապետութեան տակ անցած հայերի օգնութեանը, այլև ամենից առաջ թուրքահայերի աջակցութեանը, որի համար էլ նա շահագործված էր թուրքական բռնապետութեան տակ ապրող հայերի դրութեամբ: Նա ձգտում էր ոչ միայն թուրքացի հայերի վրա թուրքերի ունեցած ազդեցութեանը, այլև հրահրում էր թուրքերի ու հայերի միջև ստեղծված անտոգոնիզմը: Թուրքիան նույնպես աշխատում էր հայերին հրահրել ռուսների դեմ. նա նույնիսկ մի շարք ռեֆորմներ, անցկացրեց, մանավանդ ռուս-թուրքական պատերազմից հետո (Ղրիմի): Սուլթանը 1863 թվին հաստատեց սահմանադրութեան՝ հայերի համար, և օրենքով շնորհեց նրանց մի շարք արտոնութեաններ: Բայց այդ բոլորը թղթի վրա մնացին. երբեք չվերացան այն կամայականութեաններն ու ճնշումը, որոնց ենթարկված էին հայերը Օսմանյան կայսրութեան մեջ:

Սակայն միայն ռուսական պետութեան օժանդակութեան շնորհիվ չէր, որ արագ կերպով սկսեցին զարգանալ հայկական մշակույթն ու հայոց լեզուն Ռուսաստանին անցած հայկական շրջաններում: 19-րդ դարում ռուսական կուլտուրան ու լեզուն զարգացման աննախընթաց պրոցես են ապրում. վերջնականապես ձևավորվում է ռուսաց ազգային լեզուն, ստեղծվում են գեղարվեստական բարձրարժեք գործեր, կատարվում են դիտական նոր հայտնադրություններ, որոնք Ռուսաստանի սահմաններից դուրս են դալիս ու ներգործում եվրոպական կուլտուրայի ու գիտութեան զարգացման վրա: Ռուսաստանում ձևավորվում է նաև հասարակական նոր ուսմունք, որը 19-րդ դարի վերջերին օրգին աշխարհի ամենաառաջավոր ուսմունքն է դառնում: Հասարակական պրոգրեսիվ գաղափարների հայրենիքը դառնում է Ռուսաստանը. նվիրդան գիշում է իր տեղը և առաջավոր գիտութեան ու փիլիսոփայութեան զարգացման համար աշխատանք են ստեղծվում միայն Ռուսաստանում, ուր սրգեն

ձեռնադրվում էր բանվորական ուժիկ դասակարգ, որը առաջին իսկ օրերից սկսած իր վրա է բեռնում ամբողջ աշխարհի տա-
ճավոր ինտելիգենցիայի ուշադրութունը։ Երկու հակադիր ուժեր
ամենայն սաստկությամբ բախվում են միմյանց։ Բուսական հա-
սարակական կյանքը դարձանում էր այդ հակադիր ուժերի՝ ա-
ռաջողիմական և ռեակցիոն ուղղութիւնների բախումների պայ-
մաններում։ Ռուսական ռեակցիան ձգտում էր բնում խեղդել
այն պրոպրետարի դադարները, որոնք դնալով ընդարձակվում
ու ալիկի շատ ժողովրդական մասամերի էին իրենց ոլորտի մեջ
ներդրվում։

Ռուսաստանում սկզբնավորվող այդ դադարներն ու հա-
սարակական ուսմունքները ջերմ պաշտպաններ ու տարածվելու
լայն հնարավորութուններ էին գտնում հաև երկրի ծայրամա-
տերում։ Հաճախ Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում հե-
տապնդվելով՝ ռուսական առաջավոր մտքի ներկայացուցիչները
տպաստան էին որոնում հեռավոր անկյուններում։ Սիրիերի տա-
ժաստաններում կամ Կովկասի հյուրընկալ առններում ու դյու-
ղերում։ Նրանք իրենց հետ բերում էին այն առաջադիմական
դադարները, որոնք կամայ-կամաց դառնում էին ռուսական
կյանքի գերիշխող և առաջնորդ ուժերը։

Այդ բոլորը իրենց բարերար ներգործութունն էին ունե-
նում Ռուսաստանի փոքր ժողովուրդների, որոնց թվում նաև հայե-
րի կուլտուրայի ու լեզվի զարգացման վրա։

Այդ սլայմանների շնորհիվ 19-րդ դարի սկզբներին արդեն
զարգացման որոշ աստիճանի է բարձրանում հայ ազգային լե-
զուէ՝ աշխարհաբարը, և հիմնականում ավարտվում է նրա կազ-
մավորման պրոցեսը, ստեղծվում է հայ ինտելիգենցիա, որը իր
բոլոր ուժերը հայ ժողովրդի կուլտուրական կյանքի կազմակերպ-
ման և հայոց լեզվի զարգացման դործին է ի սպաս դնում։ Նա
ոնիում է ռուսական կուլտուրայով և ռուսերենի միջոցով ծանո-
թանում է համաշխարհային գրականությանը, հաղորդակից դառ-
նում համաշխարհային կուլտուրային։

Հայ ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչներից և
ռուսական կուլտուրայի ու գրականության առաջին կրքոտ ջա-
տագններից է եղել Ն. Աբովյանը։ Նա առաջին հայն էր, որ
հիշտ ըմբռնեց ռուսաց կուլտուրայի ու գրականության, լեզվի
ու արվեստի առաջադիմական մեծ դերը և իր ամբողջ գործու-
նեությունը ընթացքում աշխատեց հայ երիտասարդությանը դաս-

տիարակել՝ ուսանական առաջադիմական ինտելիկենցիայի փայ-
փայած դադափարներով։ Նա իր լայն մտահորիզոնով, մտքի խո-
րաթափանց թռիչքներով, պայքարի մեջ մտնելու մեծ կրքոտու-
թյամբ ոչ միայն գերադանցեց իր նախորդներին, այլև հետագա
սերնդի համար օրինակ դարձավ։ Նա ճիշտ դրույթներից ելնե-
լով՝ ուսաց լեզվին տիրապեհելու անհրաժեշտության հորցք
դրեց և ինքը գործնականորեն՝ սկսեց իրականացնել իր առաջ
քաշած խնդիրները։ Կազմեց ուսաց լեզվի քերականության դա-
սագիրք՝ հայ երեսններին ուսեսերեն սովորեցնելու համար, բաց
արեց դպրոց և այլն։ Այդ դասագիրքը, որը այժմ էլ պատմական
և մեթոդական մեծ հետաքրքրություն է ներկայացնում, մի շարք
պատճառների հետևանքով չտպագրվեց։ Սակայն այդ փաստը
ինքնըստինքյան խառնում է Ու. Աբովյանի մեծ ջանքի ու բարի
նպատակների մասին։ Այդ հանդամանքը ցույց է տալիս նաև
այն, որ Աբովյանը գիտակցաբար պայքարում էր ուսաց լեզվի
և կուլտուրայի մասնաշաղկապման ու տարածման և հայ ժո-
ղովրդին նրանց հաղորդակից դարձնելու համար։

«Ռուսաց անունը,—ասում է Աբովյանը,—պետք է մեզ հա-
մար լինի սուրբ, ինչպես և նրա արյունը, որով մենք ազատվել
ենք ընդմիշտ։ Նույնպես սուրբ պետք է լինի նրա կամքը, որի
ներքո մենք ապրում ենք, կոտորելապես պաշտպանված լինե-
լով մեր հավատքի և հայրենիքի բոլոր թշնամիներից։ Աշխա-
տենք, ըստ մեր կարողության և հնարավորության, ձեռք բերել
օգտավետ գիտություններ, կրթել մեր միտքն ու սիրտը, ձեռք
բերել ուսւ լեզվի գիտություն և բարի քաղաքացիներ լինել։ Արա-
նով, հենց միակ սրանով, քան մի ուրիշ բանով, մենք կարող կլի-
նենք միանալ ուսւ մեծ սղգի հետ, որի միայն անունը ներշնչում
է ամենքին, մինչև իսկ օտարին, սեր և անձնվիրություն։ Ընենք
դաստիարակված, այդ մի իսկական բախտավորություն է ամեն
մարդու համար։ Իսկ մեր հոգացող կառավարությունը, որի ձեռ-
քից ամեն բան կգա, երբեք չի մոռանալ իսկական քանքարը և
ընդունակությունը և չի թողնիլ առանց պատշաճ ուղադրության
ու վարձատրության։

Կեցցէ Ռուսաստանը...»

Ու. Աբովյանից մոտ մի դար հետո, հայ մեծ պոետ Հ. Թու-
մանյանը հայ ազգայնականներին դեմ պայքարելիս՝ կարծես Ա-

¹ Ու. Աբովյան, «Ընտիր երկեր», հ. 2-րդ, էջ 369—370, Պետհրատ, 1940 թ.

քովյանի խոսքերը հիշելով հայտարարեց, որ Ռուսաստանը ազգեր չի լորտահղում, այլ նա ազգերի զարգացման համար մեծ հնարավորութիւններ է ստեղծում:

Արտվյանի ամբողջ դործունեութիւնը, նրա ստեղծագործական ուժեղ թափն ու նպատակասլացութիւնը առնչակցում էին ռուսական տիրապետութեան տակ ոնցած հայերի կուլտուրական ու քաղաքական կյանքում կատարված փոփոխութիւնների հետ: Արտվյանի անմահ ստեղծագործութիւնը՝ «Վերք Հայաստանին» իսկ հայ ժողովրդի իղձերի՝ ռուսներին իրենց աշխարհում տեսնելու ցանկութեան արասնայտութիւնն էր:

Հայկական բանասիրութեան մեջ իշխել է մի թշուր և չպատճառարանված կարծիք, որի պաշտպանները Արտվյանի ստեղծագործութիւնը համարել են եվրոպական իրականութեան ու կուլտուրայի ազդեցութեան տակ ձևավորված ստեղծագործութիւն: Բայց ինչպես Արտվյանը, նույնպես և եվրոպական կրթութիւնն ստացած շատ այլ հայ գործիչներ իրենց զարգացմամբ, աշխարհայայցքով ու ձևավորմամբ առաջին հերթին ռուսական իրականութեան են պնդուական: Եվրոպական կուլտուրան ու գիտութիւնը Հայաստան է ներթափանցել առաջին հերթին Ռուսաստանի միջոցով: Այդ պատճառով էլ եվրոպական կուլտուրայի անմիջական ազդեցութիւնը, մանավանդ արևելահայութեան վրա, շատ աննշան է եղել:

Հայ կուլտուրայի ու գրականութեան և հայոց լեզվի մշակման ու զարգացման բնագավառում մեծ դեր է խաղացել Նաև Ստ. Նազարյանը: Նա 19-րդ դարի 40-ական թվականներից սկսած հրատարակել է հայկական մշակույթի զանազան հարցերին նվիրված մի շարք ուսումնասիրութիւններ, որոնց մեջ կրթութեան, կերպով պաշտպանել է աշխարհաբար լեզուն և պայքար է սկսել դրաբարը որպես գրական լեզու պահելու կողմնակիցների դեմ: Նրա գործունեութեան մեջ նշանակալից էջ է կազմել «Հյուսիս-սասիայի» ամսագրի հրատարակութիւնը, որով աշխարհաբարը վերջնականապէս նվաճում է իշխող բարձունքները և հաստատվում իր իրավունքներում: «Հյուսիս-սասիային» աշխատակցում էր հայ մեծ գեմոկրատ ուսուցիչներ Մ. Նալբանդյանը, որի շնորհիվ Նազարյանի ամսագրերը ոչ միայն հայ ճանճացած իրականութեան դեմ ուղղված մի օրգանի է վերածվում, այլև 19-րդ դարի ռուս գրականութեան առաջավոր գաղափարների և ռուս հասարակական ուսուցիչին մտքի տարածողն

ու մասսայականացնողն է գտնուում: «Հյուսիսափայլը» իր դոյու-
թյան ութ տարիների ընթացքում շատ ու շատ մեծ դեր է կա-
տարել հայ ինտելիգենցիային ուսանական առաջավոր մտքերի-
հետ ծանոթացնելու և հայ ժողովրդի լայն դանդախներին կրթե-
լու ընագավառում: Նա եղել է նոր գաղափարների, նոր ոճերի
ու բառերի և առաջավոր մտքերի մի կատարյալ շտեմարան,
որից օգտվել է հայ մտավորականութունը իր ամենօրյա գոր-
ծունեության ընթացքում: Նրա կատարած դերը շատ ու շատ
մեծ էր: Ծիշտ է նկատել Սու. Նազարյանը, դրելով իր ամսաթի-
թի մասին՝ «... Զարթեցնել քնից մեր թմրած ժողովուրդը, բորձ-
բացնել նորան և ցուցանել այն ճանապարհը, որ պիտո էր մեզ
գնալ, այսինքն՝ թողնելով վերջապես ասիական ատելի խավարը
և ոտք կոխել այն սահմանի վրա, ուր փայլում է եվրոպական
լուսավորութունը»¹: Նազարյանը եվրոպական լուսավորութուն
ասելով առաջին հերթին նկատի ունի ուսանական կուլտուրան,
որովհետև միայն Ռուսաստանում և ուսանների միջոցով հայերը
կարող էին «թողնել ասիական ատելի խավարը և ոտք կոխել
այն սահմանի վրա», ուր փայլում է լուսավորութունը:

Սակայն միայն «Հյուսիսափայլը» չէր, որ իր վրա էր վերց-
րել հայ ժողովրդին լուսավորության սահմանի վրա բարձրաց-
նելու պատվավոր գործը: 19-րդ դարի առաջին կեսերից սկսած
Ռուսաստանում սկսում են լույս տեսնել մի շարք այլ թերթեր
և ամսագրեր, որոնց նպատակն էր մի կողմից՝ պրոպագանդա
մղել՝ առևանգ կուլտուրայի ու եվրոպականության տարածման և մյուս
կողմից՝ պայքարել՝ ուսանական քաղաքականության իրազորման
համար: Իշխան Վորոնցովի նախաձեռնությամբ, 1847 թվից,
Թիֆլիսում, սկսում է լույս տեսնել «Կովկաս» թերթը՝ սուսերեն
և հայերեն լեզուներով: Այդ թերթի հայկական տեքստի լսմա-
գրութունը հանձնարարվում է Ներսիսյան դպրոցի երկու աշանա-
վոր ուսուցիչների՝ Միքայել Պատկանյանին և Հակոբ վարժապետ-
հարինյանին: Այդ թերթը արևելահայ առաջին տպագիր թերթն
էր, որը ընդամենը հրատարակվեց երկու տարի: Նրանից հետո,
1850 թվին Գ. Պատկանյանը հրատարակում է «Արարատ» թեր-
թը, որը իր լեզվով ու բովանդակությամբ զգալի նախով տա-
րբերվում է «Կովկաս» թերթից:

Գ. Պատկանյանի նպատակն էր օժանդակել հայոց նոր լեզ-

¹ «Հյուսիսափայլ», 1858 թ., էջ 334:

վի մշակմանը, դարգացնել կուլտուրան ու զրականությունը արեւելահայութեան մեջ, լուսավորել հայ ժողովրդի միտքը: «Արաբատ» թերթի լեզուն իհարկե կատարյալ աշխարհաբար չէր և չէր էլ կարող լինել. նա ավելի շուտ արեւելահայ և արեւմտահայ տարբեր բարբառների մի խառնուրդ էր՝ միայն ավելի հակված դեպի արեւելահայութեան խոսակցական լեզուն: Ինքը Պատկանյանը լուսակալում էր տեսնել այնպիսի լեզու, որն ավելի մոտ էր Ռուսաստանի հայութեան լեզվին:

«Արաբատ»-յան երկիրն իր համար հատուկ լեզու չունի այժմ, — գրում էր նա իր թերթի 25-26-ում, — նրա հատուկ լեզուն այն է. որ Ներսիս Կաթողիկոսը կամ Եղիշաթանի չորս կողմն կլրտսին: Բայց եթե փոքր ինչ հեռանաս այս միջակետեն, Վրաստանի հայոց լեզուն կլսես, կամ Բյուրղաստանի, կամ Օսմանցիոց... Բայց առժամանակ հնազանդվեցանք հասարակաց կամեցողութեան և սկսանք այն լեզվով գրել, որն որ մերձավոր է Վրաստանի և Ասորական կամ Ռուսաստանի լեզվին:

Այս թերթին աշխատակցում էր խմբագրի որդին՝ Ռաֆայել Պատկանյանը, որն իր ստեղծագործութուններով, հասարակական-քաղաքական գործունեությամբ մեծ դեր է խաղացել հայկական իրականութեան մեջ: «Արաբատ» թերթը լույս է տեսնում մինչև 1851 թիվը: Այնուհետև մոտ յոթ տարի արեւելահայութեանը զրկվում է պարբերական մամուլից: Այդ երկար զաղարը, անկասկած, կասկած էր Ռուսաստանում ստեղծված իրազրութեան հետ: Ռուսաստանը զբաղված էր զանազան արշավանքներով և նրա տիրապետութեան տակ գտնված ժողովուրդները հնարավորութուն չունեին, կամ չէին կարող իրենց սեփական նախաձեռնությամբ կուլտուրական մեծ գործերի ձեռնամուխ լինել: Նրբ ավարտվում է Ռուսաստանի սկսած պատերազմը, մահավանդ Դրեմի կամպանիան, ուժեղ վերելք է սկսում ապրել ոչ միայն սուսական, այլև սուսաց տիրապետութեան տակ գտնված փոքր ժողովուրդների կուլտուրան:

Հայաստանում և հայկական գաղութներում մեկը մյուսի հետևից սկսում են լույս տեսնել մի շարք պարբերական թերթեր. 1858 թվին լույս է տեսնում «Հյուսիսափայլը», ապա նրան հաջորդում են՝ «Մեղու Հայաստանին», «Կոռունկ հայոց աշխարհին», «Ճռաքաղը», «Մասյաց աղաջին»:

Բորբոքվում է աշխարհաբար լեզվի համար վաղուց սկսած պայքարը, որը թեև հանդես էր գալիս մեծ մասամբ լեզվին վե-

բարեբաղ հարցերու, բայց իրականում քաղաքական խոր ար-
մատներ ունենալու հայ ժողովրդի քաղաքական ու կուլտուրական
կյանքը կաղմակերպելու մեջ դերիշխող դեր ունենալու համար
պայքարի էին ելել երկու ուժեր՝ ռուսական առաջավոր գաղա-
փաւորների հետ կապված և պահպանողական, փաստորէն նա-
գեւոր դադափաւորներ պաշտպանող ուժերը։ Հշուստիստիայը՝ զը-
խաւորում էր ռեւոլուցիոն թեր պայքարը։ Նա իր հրատարա-
կության առաջին խի համարից գիտական ամուր հիմքի վրա
դրվեց և դարձաւ այն հիմնական օրդանը, որի միջոցով հայ ա-
ռաջագիւմ ինտելիգենցիան պայքարում էր հայ ճանապարհ իրո-
ւանութեան, կղերականողաւական գաղափարախոսութեան աղքե-
ցութեանը վերացնելու համար։

Հշուստիստիայը՝ լեզվական հատուկ ու հետեողական քա-
ղաքականութեան էր վարում և իր պայքարի ընթացքում միշտ
նկատի ունենալու ռուսական կուլտուրայի ու լեզվի դրականութեան
ու հասարակական գաղափարների դարգացման, ու Ռուսաստա-
նում առաջավոր կուլտուրայի համար մղող պայքարի փորձը։

Ռուսաց ազգային լեզուն 18-րդ դարի սկզբներին արդեն
հիմնականում ձևաւորւած էր և աշխարհի զարգացած լեզուներ-
ից նա չէր մնում իր հարստութեամբ ու ճկունութեամբ։ Սակայն
ռուսաց նոր լեզվի կաղմաւորումը հարթ չի ընթացել։ Նույնիսկ
18-րդ դարի 2-րդ կեսերին հաճախ հանդես էին գալիս հին սլա-
ւոններին պաշտպաններ, որոնք ձգտում էին ռուսերին ազգային
լեզուն շեղել իր զարգացման ճանապարհից։ Կղերականողաւական
տարերը ուժեղ պայքար էին տանում ռուսաց ազգային լեզվի՝
աշխարհաբարի պաշտպաններին դէմ։ Այդպիսի վերաբերմունք
էին ցուցաբերում հայոց ազգային լեզվի նկատմամբ նաև հայ
առակցիոն ինտելիգենտները։ Նրանք աշխարհաբարը համարում
էին կոպիտ ու դահիկ լեզու։ Սակայն չէին կարող կանգնեցնել
նրա առաջընթացը։ Ռուսաց ազգային լեզվի օրինակով՝ ժամա-
նակակից հայերենը զարգանում ու մշակւում էր և ավելի ու
ավելի հարստանում կղերականողաւական, առակցիոն ուժերի դեմ
ծաւալւած ուժեղ պայքարի պրոցեսում։

Ռուսաստանում առաջավոր կուլտուրայի համար պայքարող
ինտելիգենտները՝ գրողներն ու պատմաբանները, գիտնական-
ներն ու հասարակական գործիչները իրենց խնդիրն էին համա-
րում՝ ստեղծել մի հանրահասկանալի լեզու՝ բզբքի և հասարա-
կութեան համար, որպեսզի դրան տանգես, ինչպես խոսում են, և

խոսին աշխտեա, ինչպէս զըռւմ ենաւ Այդ լողունգը դուրս է դա-
լիս ոռւսաց իրականութեան շրջանակները և դառնում է մյուս
ժողովուրդներէ առաջադր մտավորականութեան մտածմունքի
առարկան։ Հայ ինտելիգենցիան նույնպէս հիւրաւում է այդ
լողունգը՝ աշխարհաբար հայերենը մշակելու և հարստացնելու
համար մշտեմ պայքարում։ զրքի և խոտակցական լեզուն միմյան-
ցից չտկտք է մեծ չափով տարբերակին, որովհետեւ զրքերը գրո-
ւում են ժողովրդի և ոչ թե մի ըուռն զրագերտներէ համար։ Մեծ
լուսավորիչ Մ. Նալբանդյանը զլսավորելով մեր ազգային լեզվի
համար մշտեմ պայքարը՝ հայտարարում էր՝ թե մեզ հարկավոր
է աշխտիսի լեզու, որ հասկանալի լինի բոլորին, որ դրաբարա-
խոս ժողովուրդ մենք չունենք, նա վաղուց է պատմական
սոսկարեղից դուրս եկել, որ դրաբարը դարձել է մեռած, անկեն-
դան լեզու և պետք է վախարինվի նոր, կենդանի լեզվով, որը
կկարողանա կատարել ժամանակի պահանջը և հնարավորութեան
ընձեռել ազգային կուլտուրայի դարգացման համար։

Ռուսաց ազգային լեզուն ձևավորված, հարուստ ու ճկուն
լեզու էր դարձել առաջին հերթին ոռւս ժողովրդի բարբառների
և հին սլավոններենի իրողութեանները լայնորեն օգտագործելու
հետեանքով։ սակայն նա դանց չէր առել նաեւ օտար, առանձ-
նապէս նվորողական լեզուներէ՝ լատիններենի, ֆրանսերենի, գեր-
մաներենի և այլ լեզուների բառապաշարն ու քերականական իրո-
ղութեանները և մեծ չափով յուրացրել էր նրանցից այն նորն
ու կարեւորը, որն անհրաժեշտ էր ոռւսաց լեզվի հարստացման աւ-
զարգացման համար։ Ռուսաց լեզուն դարձանալի ճկունութեամբ
փոխ էր առնում օտար բառեր, միջազգային դարձած տերմին-
ներ, նույնիսկ քերականական առանձին փաստեր՝ ածանցներ և
այլն և ամենաառաջ կերպով յուրացնում ու ոռւսականացնում
էր զրանք։ Ռուսաց լեզվի այդ ճկունութեանը գնալով ավելի ու
ավելի է կատարելագործվում։ Այժմ էլ ոռւսերենը առանց որեւէ
վախի ու վերադառումի փոխ է առնում օտար լեզուներից այն
ամենը, ինչ որ նոր է, կամ նոր իմաստ է ստացել։ Աշխարհի բո-
լոր լեզուները իրենց հերթին ոռւսերենից առատ բառեր են
փոխ առնում և հաճախ այնպիսիները՝ իրենց նոր իմաստներով,
որոնք ոռւսները փոխ էին առել հենց այդ լեզուներից։

Ժամանակակից ոռւսերենը դարգացման փառավոր ուղի է ան-
ցել։ նրան անսահմանորեն սիրել է ոռւս ինտելիգենցիան։ Կռիլովն
ու դեկարթիստները, Պուշկինն ու ոռւս ռոմանցիոններները փայ-

փայել ու մշակել են այդ լեզուն: Կարամզինը հիմք դրեց ռուսերենի նոր ոճի, բայց նա չկարողացավ լրիվ չափով օգտագործել ռուս ժողովրդի բառն ու բանը, ժողովրդական լեզվի հարստություններն ու իրողությունները. գեղաբերիստները ավելի զարգացրին ու մշակեցին ռուսերենը. իսկ Պուշկինը օգտագործելով մինչև այդ ձևը բերված նվաճումները և ժողովրդական լեզվի՝ ռուսերեն բարբառների հարստությունն ու ճկունությունը, նոր ձև տվեց ռուսաց գրական լեզվին: Նա շարունակելով գեղաբերիստների սկսած աշխատանքը, նշեց ռուսաց լեզվի զարգացման նոր ուղին, աղաթեց նրան կղերաֆեոդալական իդեոլոգիայի զղթաներից, լայնորեն ծավալեց օտար բառերի ու արտահայտությունների անտեղի գործածություն, ժողովրդական լայն դանդաղներին անհասկանալի տերմինների կիրառության դեմ սկսած պայքարը. դրան զուգընթաց նա չբացասեց օտար լեզուներից կատարվող փոխառությունների անհրաժեշտությունը և, կարիքի դեպքում, ինքը գործածում էր օտար բառեր ու հասկացություններ, բայց այն ձևով և այնչափ, որ չէր ազդում ռուսերենի առանձնահատկությունների վրա: Պուշկինի և ռուս առաջադեմ ինտելիգենցիայի շնորհիվ 19-րդ դարի առաջին կեսին սչ միայն ավարտվում է ռուսաց գրական լեզվի կազմավորման պրոցեսը, այլև սահմանափակվում են սլավոնների օգտագործման շրջանակները. ավելի է ժողովրդականանում գրական ռուսերենը, մեծ չափով սկսում են օգտագործվել, ռուս գրողների լսողներով տեսած, ռուս ժողովրդի ոգու ու բնութագրի անսպաս դանձարանը՝ ժողովրդական լեզուներն ու ֆոլկլորը:

Ռուսաց գրական լեզվի ժողովրդականացման, հարստացման ու մշակման համար սկսված պայքարի օրինակով հայկական իրականություն մեջ նույնպես պայքար է սկսվում ժամանակակից հայերենի ժողովրդականացման, մշակման և հարստացման համար: Հայ առաջավոր ինտելիգենցիան սկսում է լայնորեն օգտագործել բարբառների առավել կենսունակ ու հայերենին հատուկ քերականական ձևերն ու բառերը: Մեր նոր կազմավորվող գրական լեզվի մեջ ներհասում են ժողովրդական լեզուների իրողությունները, որոնք նոր ընթացք ու տեմպ են տալիս նրա զարգացմանը: Դրա հետ միասին մեր լեզուն մաքրվում է օտար, մանավանդ թուրքերեն բառերից, որոնք մեր որոշ բարբառների բառապաշարի զգալի մասն էին կազմում: Բարբառային տարրերի օգտագործումը կատարվում էր զրաբարի իրողությունների

օգտագործմանը դուգընթաց: Այդ հանգամանքը մեծ չափով բարձ-
րացնում էր գրական լեզվի դերն ու համարումը, նրան տա-
լով կուլտուրական ու բարձրակուլմանիորեն զարգացած լեզվի ձև:
Օտար լեզուներին մեր լեզվի մեջ մտած բառերի դեմ սկսված
պայքարը, ստեպան, չէր հանդուժ օտար բառերի գործածության
բացարձակ ժխտմանը: Նույնիսկ Խ. Աբովյանը գործածել է բազ-
մաթիվ ոտաներին, կամ ոտաներինից անցած միջադպարին բառեր,
որոնք ոչ թե միայն, այլ ավելի են հարստացրել նրա լեզուն:
Աբովյանից հետո մեր գրականության ու մամուլի մեջ հաճախ
են սկսում գործածվել օտար բառեր ու դարձվածքներ: Իսկ «Հյուս-
սիսափայլը», որը 19-րդ դարի 20-րդ կեսի մեր գրական լեզվի
ամենահարուստ շտեմարանն ու նրա հաղթանակի անզուգական
հաշարձանն է եղել, առանց վախի գործածում էր բոլոր այն բա-
ռերը, որոնք նոր հասկացությունների հետ էին կապված:
«Հյուսիսափայլ» առաջին իսկ տարվա (1858 թվին) համարնե-
րում կարելի է հանդիպել ատմագրության, գեոմագիա, գեոմերալ-մու-
յոր, եմֆիլոպեդիա, էշաֆոտ, լուգիկա, կամետներ (գիսամոր ասու-
ղեր), կարդիմալ, կրիտիկա, կորիֆեյ, կլապկ, միմիստր, պառա-
մենտ, ակալուցիա, ռոման, ակադեմիա, սկեպտիկ, օլոպտոստիկ,
սոլդատ, վալկամ, տելեգրաֆ, ֆրոնդե (պարսապիկ) և բազմա-
թիվ այլ միջադպարին և ոտաներն բառերի, որոնք մեր լեզվին
էին անցել ոտաներին միջոցով: Այդ բառերի դպարի մասը հե-
տագայում չմասնատված և գործածությունից դուրս
մնաց. բայց հիմնական մասը արմատացավ մեր գրական լեզվի
մեջ և նրա ակտիվ բառապաշարի մասը դարձավ: «Հյուսիսա-
փայլ» ամսագրի լեզուն, ոտանական իրականության հետ սերտու-
րեն կապված Մ. Նալբանդյանի շնորհիվ: զնալով ավելի ու ավել-
ի էր մշակվում ու զարգացման ճիշտ ուղու վրա դրվում:

Ռուսական հասարակական ու քաղաքական կյանքը աննա-
խընթաց տեմպով առաջ էր սլանում. 19-րդ դարի երկրորդ կես-
ին արդեն ոչ միայն ձևավորված էր ոտանական գեոգրաֆիստական
գրականության լեզուն, այլև ստեղծված էր փիլիսոփայական ու
գիտական լեզու, ձևավորված էր հրապարակախոսական հատու և
սուր ոճ, հիմք դրված փիլիսոփայական և գիտական տերմինոլո-
գիայի: Ռուսական իրականության մեջ իրենց զդացնել էին տա-
լիս հասարակական նոր դասակարգերը, որոնց շնորհիվ ոտանաց
լեզվի մեջ մտնում էին նոր հասկացություններ ու տերմիններ:
պրոլետարիատ, ճամբարիզմ, պառապեքիզմ և այլն, լայնորեն

սկսում էին գործածվել հիբրոական նոր ըսուեր և հասկացություններ, որոնք օժանդակում էին ուսուսաց լեզվի ավելի հարըստացմանն ու ճկունացմանը: Այդ երևույթը մենք նկատում ենք նաև հայերենում:

Ժամանակակից հայերենը 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած դարգացման նոր շրջան է թեակոխում: Բուսերենի ազդեցության տակ մշակվում է հայ դրականության լեզուն, ձևավորվում է հայկական հրապարակախոսությունը, հիմք է դրվում գիտական, փիլիսոփայական լեզվին, ստեղծվում է նոր հասկացությունների հետ կապված տերմինոլոգիա: Հայկական իրականության միջ սկսում են լայնորեն մասսայականանալ հասարակական նոր հարաբերությունների հետ առնչակցված հասկացությունները, ոճերն ու տերմինները (ռեուլուցիա, պրոլետարիատ, հումանիզմ, էվոլուցիա, պոսիվիզմ և այլն): Կայունանում են հայոց լեզվի քերականական կառուցողականները և ուղղագրությունը այն աստիճանի, որ հիմք են առնում հայ լեզվաբաններին ու բանասերներին խոսելու հայոց դրական ընդհանուր լեզվի մասին:

Ռուսական ազդեցությունը, սակայն, ոչ թե սահմանափակել է հայոց ազգային լեզվի իրողությունների օգտագործումը, այլ հանգիստացել է այն արտաքին գործոնը, որը օժանդակել է մեր լեզվի սեփական իրողությունների անկաշկանդ դրսևորմանը, լաթանել մեր լեզվի դարգացմանն ու հարստացմանը: Ժամանակակից հայոց լեզվի կազմավորման պրոցեսի արագ ավարտումը և այդ լեզվի դարգացման բարձր մակարդակը, որ մենք տեսնում ենք 19-րդ դարի վերջերին, պայմանավորված են հղել նաև ուսուսաց լեզվի և կուլտուրայի բարենպաստ ազդեցությամբ:

ՌՈՒՍԵՐԵՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ

ՄԻ ՔԱՆԻ ԴԵՊՔԵՐ

Ժամանակակից հայոց լեզվի՝ աշխարհաբարի կազմավորումը, ինչպես նշվեց վերևում, սերտորեն կապված է եղել ուսուսաց ազգային լեզվի կազմավորման հետ: Մեր աշխարհաբար լեզուն 19-րդ դարից սկսած հասարակական, քաղաքական ու գիտական նոր հասկացություններ արտահայտելու համար անհրաժեշտ նոր ըսուերի, ոճերի և ձևերի կարիք դառնալու առաջին հերթին

ռուսաց լեզվի օգնութեանն էր դիմում, որովհետեւ միայն ռուսաց լեզունն էր, որ կարող էր իրապէս օգնել մեր լեզվի զարգացմանը։
Ռուսներենի ազդեցութեանը արտահայտվել է մեր լեզվին անցած բառերի, ասացվածքների, շարահյուսական առանձին ոճերի, տառադարձութեան մեջ։

Ռուսներենից հայերենին անցած բառերը մեր կյանքի բոլոր բնազավտանքներին հն վերաբերում ֆիլիսոփայական, քաղաքական, գիտական, գեղարվեստական, առօրյա կյանքին և շատ այլ ասպարեզներին վերաբերող և բազմապիսի հասկացութեաններ արտահայտող բառեր ռուսներենից հայաց լեզվին անցնելով՝ անհամեմատելիորեն հարստացրին մեր լեզվի բառապաշարը և բաղմադան դադարներն արտահայտելու ընդունակ դարձրին նրան։
Դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսերին մեր լեզվում գործածվում էին ռևոլուցիա, ռեյստիստիկա, ասիգնալիտ, գեմետվա, ժիլետիկա, ուպրալա, սյրետեմդիա, գիմնագիա և բաղմաթիվ այլ բառեր, որոնք եթե խմբավորենք, հետևյալ տեսքը կստանան.

ա/ Քաղաքական-փիլիսոփայական հասկացություններ արտահայտող բառեր. — արատրակա, ադիտատոր, ադիտացիա, ադեկվաա, ամնիստիա, անտոգոնիզմ, ատաման, արտել, արիստոկրատիա, արսենալ, արմելզմ, արթորզմ, բաարակ, բուրժուա, բուրգոմիստր, բոյար, գնոստիկ, գորոգոմոյ, դեկաբրիստ, դինաստիա, դիրեկտոր, գումա, յասավուլ, զեմասովո, էմպերիզմ, էվոլուցիա, թեզիս, թեմա, թեորեմա, ժանդարմ, իդեալ, իդեալիստ, իդեալիստերիա, ինդուկցիա, ինկվիզիտոր, ինստիտուտ, ինկվիզացիա, լորդ, կազակ, կանցլեր, կապիտալ, կարդինալ, կոմիզմ, կոմիսար, կոմիսարիատ, կոմիսիոներ, կոնսուլ, կոնսպեկտ, կոնկրետ, կրիտերիում, կրիտիկ, հեզեմոնիա, հիպոդ, մանիֆեստ, մեր (քաղաքասկետ), մետաֆիզիկա, միլիտարիզմ, միլորդ, մինիստր, միստիկա, միտինգ, մետրոպոլիս, մոդիֆիկացիա, մուսթիլ, պամֆլետ, պոլիտմենտ, պարտիա, պասկվիլ, պասիվ, պատարդ, պորտֆել, պորթլեմ, սեֆերատ, սեֆորմա, սեֆորմատոր, սեցիսիվիստ, սոմանաիզմ, սեռուցիա, սեմիտիզմ, սենատոր, սիլոգիզմ, սինդիկատ, սիստեմ, սկանդալ, սկեպտիկ, սոցիոլոգիա, վասալ, վատիկան, վարիանտ, տենդենցիոզ, տեուր, ցար, ցենզուրա, ցենզ, ցիտատ, ուրյադնիկ, օրթոդոքս, ֆարրիկա, ֆալետ, ֆալետուրա, ֆարս, ֆարշ, ֆատալիզմ, ֆատալիստ, ֆեդերալիզմ, ֆեդդալ, ֆրադա և այլն։

բ/ Արվեստի, գրականության և գիտության բնագավառին վե-

քաղերնոյ բառեր.— ալգեբրա, ամոնյակ, ամֆիթատրոն, անալոգիա, անող, անտրակտ, ատլաս, աստմա, ատոմ, բակտերիա, բալալակա, բալերինա, բարիտոն, բառ, բայադերա (պարոդ), բրոմ, գամմա, դրոմ, դիսկանտ (ամենաբարձր ձայն), դիֆտերիա, դրամա, դուբլետ, էկզեմա, էպիդրաֆ, էլիպսիս, էսքիզ, էսպերանտո, էստրադա, ինստիտուտ, կադր, կոմիկ, կանդիդատ, կապելմեյստեր, կադրոս, կաուչուկ, կլարնետ, կլինիկա, կլուբ, կոլեկտոր, կոմպրես, կոնսերվատորիա, կոնցիերտ, կրեսոպոկ (քիմ.), կրեպ, կուրս, լազարեթ, լիցեյ, լոգարիթմ, մադրիսար, մագնիս, մադուրկա, մոդեանիստ, մոլեկուլ, մոլիբդեն, մոմպաս, մուսսոն, պարաբեր, պորթրետ, պրոգնա, պրոֆեսսոր, պիես, քլիանինո, օկցենդենտ, օռյալ, սիմետր, սիմֆոնիա, սինուս, սուլիստ, սոնատ, սոնետ, սոպրանո, վալս, տենոր, տեխնիկա, տոն, արանսֆորմատոր, տրալոմա, տրիթին, ցիրկ, ցիկլոն, ցինկ, օպերացիա, օրկեստր, օլիմպիադ, ֆեխիստոն, ֆելյուտա, ֆոյս, ֆոն, ֆոկլուս, ֆոնետիկա, ֆորմուլա, ֆորտեպիանո, ֆուլս (բաղմածայն երաժշտություն), ֆուսկցիա և այլն:

գ/ Տարագիւն, գործվածքեղեցիկ, կերպիւարեցիկ, սովորույթեցիկ վերաբերող բառեր.— ադյամ (հագուստի տեսակ), աքսելբանտ (ոսկյա ժապավեն), ակշապետ (ղաղախ զգեստ), ալտարաս (զիպակեղեն), ալմաշիվա (ընդարձակ պատմուճան), անարիկոս, բերյոկ (մետաքս դորձվածք), բայկա (կտոր), բակենբարդա, բանկեր, բենեֆիս, բիսկվիտ, բիֆշտեկա, բլամանժի (կերակուր), բորչո, բոստոն, վեզրո, վերմիշել, դեսերտ, ժիլետ, լորնետ, լիմոնադ, լիմոն, խալաթ, կարսամել, կեպի, կոմպոս, կոնֆետ, կորսաթ, կորսետ, կոտլետ, կոֆտո, կրախմալ, մալինա, մոնդարին, մակարոն, մանժետ, մարդարին, մարմելադ, մատրաս, մախորկա, շնիցել, շոկոլադ, շնիկոս, շինել, շարֆ, չերքեղկա, չեմոդան, պարիկմախեր, օնստորան, օնգելյուլ, օստաբիֆ, օսգու, սալաթ, սարաֆան, սարժա (սլաստառ), սատին, սիգարոս, սիրոզ, սոդա, սոուս, սուպ, սուլաբի, սերթյուկ, տեմբուլ (ոլպեզ), տոմատ, տորոս, արիզնա, արիկո, ադալետ, տուլուպ, տունիկա (կանաչի ներքնազգեստ), օդեկոլոն, ֆրակ և այլն:

դ/ Ռազմական տերմիններ — ադյուտանտ, ազիմատ, գեներալ, դեսանտ, դիվիզիոն, դինամիտ, հֆրեսյուոր, էչալոն, կապիտան, կոկարդ, մայոր, մարշալ, միչման, յունկեր, պարաշյուտ, տրանս, տրանշե, ֆելդմարշալ, ֆելդֆերել, ֆելդշեր և այլն:

ե/ Այլ բառեր և տերմիններ.— ագատ (արժեքավոր, ամուր

քաղ՝ տարբեր գույնի շերտերից կազմված), ածիո, ակվարի-
ում, ակը, ակցիչ, ակցիոններ, ակլիզերի, ակրոմ, ակմանախ, ամ-
պուլա, աննկղոտ, ապատրիտ, արտեզյան, ասեսոր, ատլաս, բագաթ,
բակենըարդա, բալադ, բանդերոլ, բանկ, բանկա, բարակ, բարելի-
նք, բարիկադա, բատիստ, բերկովնց (կշիւ, տաս փուլթ), բեննֆիս,
բետոն, բիլլարդ, բինոկլ, բլանկ, բոցման, բրիգադա, բրիչկա,
բրոշկա, բուլա, բուլվար, բուկետ, բուկինիսա, բուֆեր, գրենա-
դեր, գուգոկ, դեկան, դեկիին, գեսյատին, դոլա, դեֆիցիտ, դիւնյա,
դիլիթմանս, դրեյֆ, դյուսին, էպուլիտ, էրմիտաթ, էսկադրա, էտսպ,
էթիկա, էֆեկտ, էպիգոն, էքստալ, էքսպեդիտոր, ժեստ, ժիլետ,
կալաչ (սպիտակ կլոր հաց), կարտոֆել, կարուսել, կվաս, կեպի,
կնուտ, կալրաս, կալյասկա, կոմբինացիա, կոմենդանտ, կոնվերտ,
կոնկուրս, կոնտրամարկա, կոնֆետ, կոպեկ, կորսաթ, կորսետ,
կոֆտա, կրախմակ, կրեմ, կումիս, լաքեյ, լեկտոր, լիվեր (գոր-
ծիք), լիլիպուտ, լիմոնադ, լոմբարդ, լորենտ, մակարոն, մա-
մոնտ, մանեխտ, մարքիզ, մատրաս, մախորկա, մեխանիզմ, մի-
նուտ, միլրաթ, միսիոններ, մոդա, մանեթ, մումիա, մուսկատ, նո-
տա, նոլ, նյուլանս, շարֆ, չայ, չիկ, չեմոդան, չետվերոս, շրիֆտ,
շտաբ, շտաֆ, շուլեր, պավիլիոն, պանսիոններ, պարագրաֆ, պա-
րաֆին, պարիկմոթեր, պարկետ, պարտեր, պասաթ, պասալոր,
պատենտ, պենսիոններ, պեռոն, պիկնիկ, պիստոն, պլան, պլան-
շետ, պլատինա, պյուրե, պալու, ռաֆինադ, օբլուտ, օնկլամ,
օնկորդ, օնկտոր, օնյինֆ, օնմոնտ, օնպորտյոր, օնսոր, օնսոո-
րան, օոնդո, օոտտ, օուրիկոն, օուբլի, սալոն, սանդալ, սարա-
ֆան, սարֆա (պաստառ), սեմաֆոր, սերիա, սիգնալ, սիլուետ,
սյուսե, սերվյուկ, վադոն, վադելին, վաքս, վալյուտա, վանիլա,
վաննա, վեզրո, վերմիշել, վերստ, վիստ, վինտ, վալոն, տարա,
տարիֆ, տեմպերամենտ, տերմին, տեռաս, տոմար, տրանզիտ,
տրիզնա, տրուբադուր, տուալիտ, տուլուպ, ցիցերո, ցի-
դան, ֆակսիմիլի, ֆակուտետ, ֆանֆար, ֆասադ, ֆասոն, ֆի-
լիտոն, ֆերմա, ֆերմեր, ֆլակոն, ֆանար, ֆոնդ, ֆորսունկա,
ֆուրգոն և այլն:

Ինչպես նկատուում է ընթերցողը, այս բառերի գերակշռող
մեծամասնությունը ոչ թե ռուսերեն, այլ միջազգային է: Սու-
կայն նրանք հայերենին են անցել ռուսերենի միջոցով և ռու-
սական արտասանությամբ: Հաճախ նույնիսկ պահպանել են
ռուսական ուղղագրությունը հիշեցնող, թեև հայերենի ոգուն ոչ
հարազատ, որոշ բառաձևեր, որոնք մինչև այժմ էլ գործածակա-

են մեր լեզվում Այդ բառերի մի զգալի մասը այն պայմաններում անհասկանալի էր մեր ժողովրդական հոծ զանգվածներին. բայց որքան որ դժեկանում էր ուստական ազդեցությունը մեր քաղաքական ու տնտեսական կյանքի վրա, այնքան նրանք մեր ժողովրդին հասկանալի և զործածական էին դառնում:

Հայոց լեզուն չի սահմանափակվել միայն ուսանողներից բա-
ռեր փոխ առնելով Ռուսերենի նմանողությունը կազմվել են
շատ բառեր և դարձվածքներ: Մի ժամանակ փորձեր են կատար-
վել նույնիսկ ուստական բառակազմական օրենքները մեխանի-
կորեն հայոց լեզվում կիրառելու ուղղությամբ: «Մշակում» կարե-
լի է հանգիստի ուստական բառակազմական ձևերին նման շատ
բառակազմությունների. օրինակ՝ статистический ոտատիստի-
ական, классический կլասի-ական, математический մաթեմա-
տի-ական և այլն: Այդ և նման բառակազմությունների հեղի-
նակները կործել են, որ ուստական վերջածանցը чesкий-ն է և
ոչ թե ский ու ческий-ն դեն գցելով մեխանիկորեն ավելացրել
են հայերեն -ական վերջածանցը: Այդպիսի «նորմալություն-
ներ», բնական է, որ չպետք է արժատահային, որովհետև սխալ
բառակազմություններ էին և մեղանշում էին ինչպես ուսանողին,
նույնպես և հայերենի բառակազմական օրենքներին և նորմանե-
րի դեմ:

Ռուսաց լեզուն իր խոր կենդան է դրել նաև հայերենի շա-
րահյուսություն, համաձայնություն վրա: Հայոց լեզվի շատ ոճեր
կազմված են ուսանողների նմանողությամբ, երբեմն նույնիսկ այն-
քան ուժեղ է արտահայտվում ուսանողների ազդեցությունը մեր առաջ-
նոր հեղինակների գործերում, որ ազեղ ու անհասկանալի է դարձ-
նում նրանց երկերի լեզուն: Այդ, իհարկե, հաճախ թարգման իշ-
ներին կամ զրոգների անշնորհությունից և լեզուներին լավ չտի-
րապետելուց է առաջանում:

Սակայն ազդեցությունները հայ հեղինակներին մոտ տար-
բեր ձևով են դրսևորվել. կան հեղինակներ, որոնք ուստ լեզվից
վերցնելով ոճեր և դարձվածքներ կարողացել են այն այնպես
օգտագործել, որ լրիվ չափով հասկանալի է հայ ժողովրդին: Այս
տեսակետից օրինակելի են եղել մեր տաղանդավոր պոետներ՝ Հ.
Հովհաննիսյանը, Հ. Թումանյանը, Ա. Մառությանը, Նրանց բո-
լոր թարգմանությունները ուստական բնագրին խիստ մոտ լի-
նելու հետ միասին, մաքուր գրական հայերենով են՝ հայ ժողո-
վրդին լեզվամտածողությամբ համապատասխան Հայ հեղինակնե-

ըից շատերն էլ օգտագործել են ոռոսական դարձվածքները, ոճերը, ասացվածքները առանց թարգմանության. նրանք անհրաժեշտության դեպքում, մեջբերումներ են կատարել ոռոսերեն ասանորով և ծանոթություններում ավել իրենց օգտագործած ոճերի բացատրությունը, կամ էլ թարգմանություն չեն տվել:

Ոռոսերենի ոճական ազդեցությունը ցույց տալու համար սահմանափակվենք մի քանի օրինակների նշումով միայն.

Նա իր դրությամբ պարտական է... Он обязан своим положением...

Նա համաձայնվեց այդ մտքի հետ... Он согласился с этой мыслью.

Ինչպե՞ս է նա վերաբերվում դեպի ձեզ... Как он относится к вам?

Բանն ինչմամբ է... Дело в чем?

Բանը նրանումն է, որ... Дело в том, что...

Նա չի կարողանում իրեն պահել... Он не умеет себя держать. Գնա՛նք ինձ հետ միասին... Пойдем вместе со мной.

Բոլոր միջոցները ձեռք առնել... Принять все меры.

Ծի բանի վրա աշխատել... Работать над чем-либо.

Փողի վրա խաղալ... Играть на деньги.

Սեղանի վրա զցել... Бросить на стол.

Այդ նոմերը չի անցնի... Этот номер не пройдет.

Ձեռք քաշել... Приложить руку к шее.

Այս և նման շատ ոճեր և դարձվածքներ բառացի թարգմանություններ են և շատ տարածված մեր ինչպես գրավոր, նույնպես և բանավոր լեզվում, թեև որոշ դեպքերում կարելի է ավելի լավ հայերենով արտահայտել այդ դարձվածքներից շատերը. օրինակ՝ ավելի լավ է ասել. «փողով խաղալ» և ոչ՝ «փողի վրա խաղալ», «բանն այն է, որ»... և ոչ՝ «բանը նրանումն է, որ», «սեղանին զցել» և ոչ՝ «սեղանի վրա զցել» և այլն:

Այս բոլորից բացի, ոռոսերենից հայերենին են անցել ոռոսական շատ ասացվածքներ և առածներ, որոնք արդեն մեր լեզվի մեջ արմատացել են և հաճախ դժվար է հայկական առածներից առանձնացնել դրանք. օրինակ՝

На безрыбьи и рак рыба Զուկ չեղած տեղը խեչափառն էլ է ձուկ.

Копейка рубль бережет Խնայված կոպեկներից աւելի է կաշվում:

На вкус и цвет, товарища нет Ճաշակին ընկեր չկա:
С волками жить, по-волчьи выть Գայլերի հետ ապրողը գայլի
պես պիտի ոռնա:

Тише едешь, дальше будешь Դանդաղ գնացողը շատ ճամփա
կկտրի:

Ум хорошо, а два лучше Մի խելքը լավ է, իսկ երկուսը՝ էլ
ավելի լավ:

Ни рыба, ни мясо Ոչ ձուկ է, ոչ միս:

Рука руку моет Ձեռքը ձեռք է լվանում:

Рукам воли не давай Ձեռքերիդ ազատություն մի տար,
և այլն:

Նախասովետական շրջանի պարբերական մամուլում կարելի է գտնել ուսուցիչների ազդեցության այնպիսի արտահայտություններ, որոնք թեև չմասնաշաղկապապես ու չարմատացան մեր լեզվում, բայց հատկանշանական են ուսուցիչների ազդեցությունն ընդգծելու տեսակետից: «Մշակում», օրինակի համար, գործածվել են հետևյալ կաղժուկային նախադասություններ. «Մարդիկ ամբողջ լեզուներ են ուսումնասիրում, վայելելու համար իսկակամի վրա այս կամ այն կլասիկակամ կապիտալ գրվածքի ներդրումները»:

Այս խոսքը կաղժված է հայերեն ըստերով, սակայն ուսուցիչների լեզվամտածողությունում. այդ պատճառով էլ հարթ չէ, ազնիվ է, հայոց լեզվին տնհարապատ և տնհասկանալի թե՛ ուսուցի, թե՛ հայր համար: Այդպիսի ազդեցությունը օգուտ չէր կարող բերել մեր լեզվին և ճիշտ կերպով դատապարտվում էր հայ ինտելիգենցիայի կողմից: Ռուսաց լեզվի և ուսուցիչականության ազդեցությունը ճիշտ էր հասկանում մեր առաջավոր ինտելիգենցիան: Այնպիսի սարկական թարգմանություններ, ինչպիսին վերևում նշված խոսքն է, երբեք համակրանք չէր առաջացնում, օրովհետև այն միայն կարող էր մնասիլ մեր լեզվի դարգացմանը:

Ռուսական ազդեցությունը արտահայտվել է նաև մեր ժողովրդի առանձին հատվածների առողանություն, արտասանություն և տառագրություն մեջ: Նախասովետական շրջանում հայ ինտելիգենցիայի, մասնավորապես կապիտալիստական շրջանների հետ կապված ինտելիգենցիայի որոշ մասը ձգտում էր ամեն բանով ուսուցիչական ազնվականությունը նմանվել: Հաճախ «նորաձևությունների» հետևից վազելով՝ նա արհամարհում էր

մայրենի լեզուն, փոխում ազգանունը, էլ չենք խոսում ազգային սովորությունների ու տարազի մասին, որովհետև դրանք վաղուց էին փոփոխվել Խնտելիզինցիայի այդ մասը նախ դեն էր գցում իր ազգանվան -յան վերջավորությունը, այն փոխարինելով ՕՅ վերջավորությամբ և, եթե իր ազգանունը սկսում էր այնպիսի հնչյունով, որը չկար ռուսերենում, հրաժարվում էր այդ հնչյունից և ռուսական արտասանությամբ գործածում ու դրում իր անունը կամ ազգանունը. այդ իսկ պատճառով Հակոբյանը դառնում էր Ակոպով, Հաքիմյանը՝ Ակիմով, Հովհաննիսյանը՝ Իոանիսյան (լավագույն դեպքում) և այլն: Հ- հնչյունը, այսպիսով, շատ հայ ազգանուններում դուրս էր ընկնում: Մեր երկրում սովետական իշխանություն հաստատվելուց հետո էլ շատ քաղաքացիներ, շարունակելով հին տրադիցիաները, ռուսական ձևով են դրում իրենց ազգանունները: Այդ, իհարկե, օգտակար ազդեցություն չենք կարող համարել, որովհետև յուրաքանչյուր ազդեցություն, փոխառում պատճառանորեն և հասարակականորեն պատճառաբանված պետք է լինի, հիմք պետք է ունենա, որպեսզի կարճ ժամանակում ամբողջ ժողովրդի սեփականությունը դառնա: Այդ հետևողականությունը մենք տեսնում ենք մեր ժողովրդի լեզվում, նրա կատարած փոխառությունների մեջ: Մեր ժողովուրդը երբեք ավելորդ փոխառություններ չի կնքել: Նույնիսկ այն ժամանակ, երբ նա փոխել է իր մայրենի լեզուն և խոսել է այլ լեզվով, պատմականորեն ու քաղաքականապես պատճառաբանված է եղել այն:

Հայտնի է, որ հայ ժողովրդի որոշ մասը խոսում էր միմիայն թուրքերեն, մոռացել էր իր մայրենի լեզուն: Այդ փաստը անխուսափելի էր եղել, այդ պատճառով էլ ժողովուրդը ստիպված չի գործածել իր մայրենի լեզուն և ակամա մոռանալով այն, սովորել է իրեն խորթ, նույնիսկ ատելի լեզուն:

Արևելահայոց դրական լեզվի մեջ մտած և արժատավորված համարյա բոլոր բառերը կապված են այս կամ այն նոր գաղափարի կամ նոր հասկացության հետ: Երբ այդ նոր գաղափարը կամ հասկացությունը մոռաց է գործել Հայաստան, դրա հետ մտել է նաև այդ գաղափարը արտահայտող բառը կամ դարձվածքը: Այդպիսի փոխառություններ են միայն արժատացել մեր լեզվում և հարստացրել մեր լեզվի բառապաշարը: Հայ ժողովուրդը, առանց որևէ վերադարձության, վերցրել է ռուսերենից այն,

ինչ որ անհրաժեշտ է դասցել, ուստի և օտար լեզուներին դիմելու պահանջ չի ունեցել: Եվրոպական կուլտուրային նա հաղորդակից է եղել ռուսական կուլտուրայի միջոցով: Իսկ ռուսաց լեզուն և ռուսական կուլտուրան վատ օրինակներ չեն տվել:

ՀԱՅ ԳՐԱԳՆԱՌԻԹՅԱՆ ՎՐԱ ՌՈՒՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՆԵՑԱԾ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Ռուսական գրականությունը և լեզուն հանդիսացել են այն հարուստ շտեմարանը, որից մեծապես օգտվել են հայ առաջավոր միտքը, հայոց լեզուն ու գրականությունը: Այդ ազդեցությունը վերևից թելադրված չի եղել, որևէ բանություն կամ հարկադրանքի հետ կապված չէ: Հայ գրականությունն ստեղծողները, հայ գրողներն ու հրապարակախոսները, հայ արվեստագետներն ու գիտնականները ինքնակամ վերցրել են ռուս ժողովրդի ստեղծած լավագույնը, միացրել իրենց զարավոր կուլտուրային և կերտել որակով ու ձևով նոր գործեր, որոնք իրենց պատմավոր տեղն են գրավում համաշխարհային կուլտուրայի պատմության մեջ: Հայ գրողները վերցրել են և յուրացրել ռուս գրականության առաջավոր իդեանները, բանաստեղծական առանձին հնարները, ռուսաց լեզվի հարուստ բառապաշարը: Այդ բոլորը ոչ թե թուլացրել, այլ նոր թափ են տվել հայ գրականության ինքնուրույնությանը, ավելի մեծ հնարավորություններ ստեղծել նրա զարգացման համար: Դեռևս Յու. Վեսելովսկին է նկատել. «Ձի կարելի չնշել այն փաստը, որ ռուսական ազդեցությունը, ընդհանուր առմամբ, երբեք չի դիմադրվել տեղական, ազգային գրականության գործիչներին, այլ, ընդհակառակն, օգնել է նրանց իրենց ժողովրդի օգտին աշխատելու և վերամշակելու ու ծաղայացնելու ժողովրդի կարիքներին ու պահանջներին այն, ինչ որ փոխ է առնված եղել ռուսական ազդեցությունից»¹:

Ռուսական առաջավոր իդեաների ներգործության ասուկ, 19-րդ դարում, արագ կերպով սկսեց զարգանալ հայ գրականությունը, լայն տարածվեց հայկական մամուլը, չնայած դժգոհության ծանր պայմաններին:

¹ Ю. Веселовский, „Русское влияние в современной армянской литературе“, էջ 7—8, 1908 թ.:

Կարապէտի, Ժուկովսկու, Պուշկինի, Լերմոնտովի շատ գործեր գեղեւ 19-րդ դարի առաջին կեսում հայերենի թարգմանվեցին:

Ե. Արուստիք Գյոթիէն, Շիլլերին, Հոմերոսին թարգմանելու հետ միասին, թարգմանում էր նաև ռուս գրողներին: Նրա մի շարք գործեր գրված են ռուսաց գրականության ազդեցության տակ, նրանցում օգտագործված են ռուսերեն բառեր ու դարձվածքներ:

Արուստիք հետո հանդես եկած հայ գրողներն ավելի շատ են կրել ռուսական հասարակական մտքի ազդեցութիւնը, ավելի հաճախ են օգտագործել ռուսաց բառն ու բանը, ռուսական լեզվի նվաճումները:

«Հյուսիսափայլի» ոգին՝ մեծ ռեուցիոներ Մ. Նալբանդյանը, իր գրական և հրապարակախոսական գործունեութեան ընթացքում շատ ու շատ է օգտագործել ռուսաց լեզուն, ռուսական ասացվածքներ ու դարձվածքներ: Իսկ իր գաղափարական հասունութեամբ, իր իդեալներով ու անհաշուելիութեամբ նա ամիջականորեն հիշեցնում է ռուսաց ռեուցիոներներին, գրողներին ու հասարակական գործիչներին՝ Գերցենին, Օգարին, Չեքովսկուն, Նեկրասովին և ուրիշներին:

Ռ. Պատկանյանը իր գրական գործունեութիւնը սկսել է ռուս գրականութեան ազդեցութեան տակ: Նույնիսկ նրա լավագույն գործերից մեկը՝ «Արաքսի արտասուքը», որը այնքան օրիգինալ է համարվել, ռուսաց ժողովրդական երգերի ազդեցութիւնն է կրում: Նրա երգի առաջին տան առաջին տողը՝ «Մայր Արաքսի ափերով» արտահայտութիւնը, ռուս ժողովրդական երգի Вниз по матушке по Волге արտահայտութիւնն է հիշեցնում: Արաքս անունը նույնպես հայկական չէ. հայ ժողովուրդը իր սիրելի գետին Արաք անունն է ասել, իսկ գետի հին հայկական անունը եղել է Երասխ: Ռ. Պատկանյանը Արաքս անունը վերցրել է ռուսական արտասանութեամբ: Երասխ գետի այդ նոր հորջորջումը Ռ. Պատկանյանի շնորհիվ ընդհանրացավ և դուրս մղեց ոչ միայն Երասխ անունը, այլև ժողովրդական Արաք բառը:

Հայ մեծ գրամատուրգ Գաբրիել Սունդուկյանը գրել է այնպիսի գործեր, որոնք արտաքուստ, իրենց լեզվով, տեղական տիպիկ արտահայտութիւններով, կարծեք թե որևէ ազդեցութիւն չեն կրում: Բայց Սունդուկյանի և Օստրովսկու գործերի մէջ շատ ընդհանուր գծեր կան: Նրա տիեաների կառուցվածքը,

խելան, բարձր զեղարվեստականությունը, վարպետությունը ուսանական գրականության, առանձնապես ուսման գործընդերս՝ Օստրովսկու, Գոգոլի, Գրիբոյեդովի և ուրիշների ստեղծագործությունների ազդեցությունն են կրում:

Հայ գրող և հրապարակախոս Ս. Շահազիզը իր գլխավոր գործերից մեկը՝ «Էկոնի վիշաք» գրել է 80-ական թվականներին: Այդ թվականներին հայկական գրականությունը ուսանական մտավոր կյանքի ազդեցություն տակ էր գտնվում: Ուսանական հասարակական կյանքում կատարված փոփոխությունները ամենասերտ կերպով արտացոլում են Ս. Շահազիզի այդ երկի և ընդհանրապես նրա գործունեության մեջ:

Ս. Շահազիզը իր գործը՝ «Էկոնի վիշաք» սկսում է Լերմոնտովի Довольно людей кормили сластями, у них от этого испортился желудок; нужны горькие лекарства, едкие истины խոսքերով: («Մեր ժամանակի հերոս»-ից):¹

Ուսանական գրականության առաջավոր ուղղության և Ս. Շահազիզի բանաստեղծությունների միջև եղած իդեական ընդհանուր կապը երևում է նրա համարյա բոլոր գործերում:

Ընդ վերաբերում է հայ գրականության վրա ուսանական ազդեցության ընդհանուր հարցին, ապա այդպիսի ազդեցությունն ինչ թվում է միանգամայն բնական և անխուսափելի փաստ, որովհետև այն բոլոր ճշմարիտ-առաջանդավորը, ուժեղն ու օրինալը, որը ստեղծում է մի ժողովուրդ, իհարկե, չի կարող չգտնել իր արձագանքը այն ժողովրդի մոտ, որն ապրում է նրա հետ մշտական սերտ հարաբերությունների մեջ:²

Շատ տեղին է ասված: Ռուս և հայ ժողովուրդները ամենասերտ հարաբերությունների մեջ էին ոչ միայն քաղաքական առումով, այլև տնտեսապես: Իսկ երբ երկու ժողովուրդներ քաղաքական և տնտեսական կապերով և ձգտումներով միմյանց հետ են կապված, գրականության և լեզվի ընազավառում նույնպես ընդհանրություններ կունենան:

Ինչ վերաբերում է 19-րդ դարի 80-ական թվականներին և հետո հանդես եկած մեր գրողներին, ապա պետք է ասել, որ

¹ Թարգմ. «Թավական է, որքան ժողովանց կերակրեցին քաղցրեղենով, դրանից նրանց ստամոքսը փչացավ. պետք են դառն զեղեր, դառն ճշմարտություններ»:

² Յու. Վեսելովսկի, Նույն տեղ, էջ 18:

նրանք նույնպես աճել ու դարձացել են ռուսաց զբաղանության, ռուսաց կուլտուրայի միջավայրում, ռուս զբաղանությունը ու ռուսաց լեզուն սիրել և ուսումնասիրել են և չեն խուսափել ռուսական լեզվի հարստությունն օգտագործելուց:

Հ. Հովհաննիսյանը ռուսերենից թարգմանել է բազմաթիվ գործեր, որոնք իրենց արվեստով ու կատարելությամբ այժմ էլ օրինակելի կարող են լինել մեր բոլոր թարգմանիչների համար:

Հ. Թումանյանի գործերում պատկերված են հայկական բնությունը, հայ ժողովրդի սովորությունները, նիստ ու կարգը իրենց ամբողջ բազմազանությամբ. բայց չնայած այդ բոլորին, Թումանյանը մեծապես կապված է ռուս զբաղանության առաջավոր դադարիարների հետ. նա սիրել և հրապուրվել է ռուս գրականությանը, որի առաջավոր իդեաներով զինված, կարողացել է իր եզրույթն ազգային գործերին համամարդկային իմաստ տալ, դրանով իսկ դուրս գալ ազգային սահմանափակումներից:

Ինքը Թումանյանը դտնում է, որ շատ բանով է պարտական ռուս զբաղանությանը: Ռուսաց զբաղանության ազդեցությունը, — գրում է նա, — ոչ թե արտահայտվել է իմ ստեղծագործությունների ձևի, այլ իմ հոգեկան աշխարհի, զբաղանադիտական ճաշակի և հայացքների մեջ:

Թումանյանը մեծ հիացմունքով է խոսում ռուս պոետների՝ առանձնապես Լերմոնտովի և Պուշկինի մասին, որոնք այնքան վառ և դյուբիչ կերպով նկարագրել են կովկասյան բնությունը. «...որպես կովկասում ծնված լեռնաբնակիչ ես սիրում եմ այդ երգերն ու պոեմները, — ասում է Թումանյանը, — թեև սեր գեպի սարերը և լեռնային կյանքի կարոտը, առանց այդ էլ հասուիկ են իմ հոգուն, բայց ռուսական պոետները տվել են ինձ պոեմայի ձևը, որը կրում են իմ շատ ստեղծագործություններ (Վոդեցի Սաքուն, ՎՄարոն և այլն), որովհետև մեր զբաղանության մեջ առաջներում այդպիսի պոեմներ չեն եղել: Ես պետք է ավելացնեմ, որ ռուսական ազդեցություն տալ ես սկսեցի իմ գործունեությունը»¹:

Ա. Մատուրյանը մեր այն գրողներից է, որոնք ոչ միայն տվել են ինքնուրույն արժեքավոր գործեր, այլև թարգմանական օգտավետ հսկայական աշխատանք են կատարել: Մատուրյանը

¹ Թում. Վեսելսովսկի, Նույն տեղ, էջ 25:

Թարգմանել է ռուսական կլասիկների շատ գործեր, որոնք իրենց կատարելութամբ քիչ բանով են դիջում բնագրերին: Նրա կատարած աշխատանքի շնորհիվ հայ երիտասարդութունը և հայ ժողովրդի լայն զանգվածները կարողացել են ծանոթանալ ռուս գրականության լավագույն գործերին, զգալ ռուսական գրականության հմայքն ու թովչանքը: Ծառուրյանը, այդ տեսակետից, ռուս գրականության ու կուլտուրայի մասնալսականացնողն է եղել ռուսահայության մեջ:

Ռուսական գրականության մեջ կատարված հասարակական ու քաղաքական բոլոր տեղաշարժները, այս կերպ, կամ այն կերպ, արտացոլել են հայ գրականության մեջ: Ռուսական գյուղացիական ընդվզումները, ռուս պրոլետարիատի պայքարը, Ռուսաստանում կատարված գիտական նորությունները, գրականության նվաճումները, — այդ բոլորն էլ իրենց արձագանքն են գտել հայ ինտելիգենցիայի մեջ և ավելի կամ պակաս չափով ներգործել հայ մաքի վարդապետն վրա: Այդ տեսակետից բնորոշ է Ծ. Գուրգինյանի խոստովանությունը:

Նա հայտարարում է, որ շատ բանով պարտական է ռուսական կյանքին, առանձնապես ռուսական պրոլետարիատին. «Ռուսաստանը իմ քաղաքական մտքիցների ծննդավայրն է», — հանդիսավորապես ասում է նա: Նրա մի շարք բանաստեղծությունները գրվել են ռուսական առաջին ռևոլյուցիայի ազդեցության տակ: Դրանք իրենց թափով ու դեղարվեստական արվեստով (օրինակ «Հետ տար քո խաչը» և ուրիշներ) գերազանցում են նրա ֆուգած բոլոր գործերից:

Դորբոլյուբովի, Պիսարևի, Բելինսկու, Օգարևի, Գերցինի ազդեցություն տակ Հ. Հակոբյանը սկսում է իր գրական գործունեությունը:

Հակոբ Հակոբյանը ինչպես սոցիալիստական ռևոլյուցիայից առաջ, նույնպես և սովետական կարգերում աշխատել ու ստեղծագործել է ռուսական կուլտուրայի ազդեցությամբ տակ, ոգևորվել է սոցիալիստական աշխատանքի մեծ առօրյայով և դարձել է այդ առօրյայի արտահայտիչներից մեկը՝ գրականության մեջ:

Հայ ականավոր գրողներից Ա. Իսահակյանը գրական ասպարեզ է իջնում 19-րդ դարի վերջերին: Նա բարձրագույն կրթությունը ստանում է արտասահմանում, հրկար ժամանակ

¹ Յու. Վեռնիկովի, նույն տեղ, էջ 29—30.

ապրում է Եվրոպայում և եվրոպական գրականությանը հիմնադրապես տեղյակ է. սակայն չնայած այդ բոլորին, նա նույնպես շատ բարձր է արժեքավորել ուսս գրականությունը:

19 և 20-րդ դարերի հայ վիպասանները և արձակագիրները նույնպես ուսական ազդեցությունից դուրս չեն մնացել: Նրանք հաճախ իրենց գրվածքների կառուցվածքը, ընդհանուր իդեական մոտիվները, արտահայտչական ընդհանուր ձևերը փոխ են առել ուսս գրականությունից:

Դիտարկած չկա, — գրում է Նար-Դոսը, — որ ես շատ բանով եմ պարտական ուսս գրականությանը, առանձնապես նրա պատմվածածքային ճյուղին, որը, հանձինս նրա լավագույն ներկայացուցիչների, ես մյուս բոլոր ժողովուրդների պատմվածքային գրականությունից ավելի բարձր եմ համարում¹:

Հայ արձակագիրներից Շիրվանդադեն կարողացավ ստեղծել նոր վեպ, հոգեբանական պատմվածք՝ Տուրգենևի ոգով. իր վեպերում և պատմվածքներում արծարծեց բազմապիսի հարցեր, քաղաքային բաղմադան կյանքի հետ կապված խնդիրներ, որոնք մինչ այդ համալրյա թե չէին արտացոլել հայկական արձակի մեջ: Այդ բոլոր հարցերը (քաղաքային կյանքը, ինտելիգենցիայի կյանքը, Բաքվի բանվորների գրությունը, հայ կնոջ հոգեբանությունը և այլն), որ արծարծում է նա իր ստեղծագործությունների մեջ, արծարծված է նաև ուսս գրականության մեջ: Նույնիսկ Շիրվանդադեի լեզուն մեծապես ուսաց լեզվի կառուցվածքին է մոտենում իր առանձին գործերում:

Հայ գրականության ու լեզվի զարգացման հիմնական թթաններից եղել են և են ուսաց գրականությունն ու լեզուն: Եվրոպական կուլտուրան ու առաջավոր գաղափարները մուտք են գործել Հայաստան ուսական կուլտուրայի և ուսաց լեզվի միջոցով:

Դեռևս Տերյանն է նշել, թե՝

«Եվրոպական ազդեցությունը, որ ուսական քաղաքական տիրապետությամբ մուտք է գործել մեր երկիրը, աստիճանաբար զարգանում է և քանի գնում ավելի արագ, ավելի տիրական քայլերով է արշավում մեր երկրի ամեն մի անկյունը, քանի գնում լայնանում է այդ և խորանում, այո, խորանում է այդ ազդեցությունը: Եվ այդ ուսս-իվրոպական ազդեցության

¹ Յ ու . Վ Կ Ե Լ ո Վ Կ Է Ի , նույն տեղ, էջ 30—36:

տակ է, որ տնում է մեր ինտելիգենցիայի միտքը և այսօր կանգնում են նրա առջև, կամ, ինչպես պոլսեցիք են ասում, ծառանում են այն հարցերը, որոնց հանդեպ տիրացուական ինտելիգենցիայի միտքը մոլոր ու երկչոտ դողում է, պատեապատ է ընկնում—ահով բռնված տեսնում է այն, ինչ չկա և չի տեսնում այն, ինչ ակնբախ է արեւի նման¹։

Ռուսական կուլտուրան, ռուսաց լեզուն, ռուսական առաջովոր զաղափարախոսությունը այն հիմնական բաղաներից են եղել, որոնց վրա հեցած աճել ու զարգացել են արեւելայ լեզուն և դրականությունը՝ 18-րդ դարից սկսած։

ՀԱՅՈՑ ԼԵՋՎԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ ՆԱԽԱՌԻՎՈՒՈՒՅԻՈՒՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հայոց լեզվի զարգացումը նախառեղուցիոն շրջանում ընթանում էր աննպաստ պայմաններում։ Ռուսաց լեզվի ազդեցության տակ, ճիշտ է, նա հսկայական քայլեր կատարեց, բայց չգարձավ մեր ժողովրդական լայն դանդաժների լեզուն։ Գրական աշխարհաբարով դրում և խոսում էին ինտելիգենցիայի ներկայացուցիչները, իսկ ժողովուրդն ուներ իր առանձին լեզուն, իր բարբառները։

Աշխարհաբարը դեռես համազգային լեզու չէր դարձել և որոշ կողմերով արհեստական էր, կտրված իր մայր աղբյուրից։ Այդ հանգամանքը, ինչպես նաև ուսանեանից և այլ ժողովուրդների լեզուներից կատարված փոխառությունները հայ ինտելիգենցիայի որոշ մասի մեջ վախ է առաջ բերել։ Սակայն այդ վախը ոչնչով հիմնավորված չի եղել։ Լեզուները իրենց զարգացման պրոցեսում, բնականորեն, փոխ են առնում այն ամենը, ինչ որ պետք է, և յուրացնում են դրանք։ Եթե ինտելիգենցիայի որոշ մասը վախենում է այդ փոխառությունից, ժողովուրդը երբեք դրանից չի վախենում և առանց որևէ կասկածի վերցնում է այն նորը, որ չունի իր բառամթերքում։ Այդպես է վարվել նաև հայ ժողովուրդը։ Նա, չնայած հայ ինտելիգենցիայի ռեակցիոն խավի կատաղի ընդդիմադրությանը, չի կտոչել իր լեզվի հին, իրենց զարն անցկացրած բառերին և նոր կուլտու-

¹ Վ. Տեբյան, Երկերի ժողովածու, հ. 4-րդ, էջ 166։

բային ծանոթանալու, նորի աղբեցութեան երթարկվելու հետ
զուգընթացաբար, վերցրել է այդ նորն արտահայտող բառերն
ու ոճերը, և երբեք դրանով չի կորցրել իր լեզվի ինքնուրույ-
նութիւնը, ինքնատիպութիւնը:

Կար ժամանակ, երբ հայ ժողովուրդը մեծ չափով փոխա-
ռութիւններ էր կնքում թուրքերենից և մյուս լեզուներից,
բայց երբ նա հաջաբերութեան մեջ մտավ ռուս ժողովրդի և
նրա կուլտուրայի հետ, սկսեց ռուսերենից փոխ առնել զանազան
բառեր, զանազան ոճեր ու դարձվածքներ:

Իր երգերի, լաղիկների, առանին կյանքի ու սովորու-
թիւնների մեջ սովորական դարձավ այդ բառերի գործածու-
թիւնը:

Հայ ինտելիգենցիայի կատարած դերը այդ բնագավառում
այն պետք է լինէր, որ նա օգնէր հայ ժողովրդին յուրացնելու
այդ նորը, լեզվական այն իրողութիւնները, ինչ որ նա փոխ
էր առնում, և իր լեզվի տվյալների օգտագործման հետ միասին
ավելի արագացներ հայոց գրական լեզվի դարգացման ու ժողո-
վրդականացման պրոցեսը: Այդ մասին հոգում էր նախառնու-
ցիոն շրջանի հայ առաջավոր ինտելիգենցիան, բայց գոյութիւն
ունեցող հասարակական և քաղաքական պայմանները հնարա-
վորութիւն չէին տալիս նրան այդ մեծ և պատվավոր գործը
կատարելու: Դեռևս մեր անվանի պոետ Վահան Տերյանն է նշել,
որ անցյալի թոշոր բեկորները զեռ տեղ են բռնում մեր կյան-
քում և եթե ոչ կտպում նոր հոսանքի ճանապարհը, համենայն
գեղաւայնքան էլ արագ տեղի չեն տալիս նրա առաջը: Սակայն
տիրելու առիթներ չկան,—շարունակում է նա,—եղեռ չբարձ-
րացած գետի առջև կուտակված սառցակույտները արագ պիտի
տեղի տան, երբ գարնան ջրերը ելնեն ու գրոհ տան ազմկալից
կենդանութեամբ:¹

Հայ ժողովրդի կյանքում կատարվել էին թոշոր փոփոխու-
թիւններ: Մեր ինտելիգենցիայի որոշ մասը՝ սեմինարիստական
ինտելիգենցիան, տեսնում է Տերյանը, ահ ու զոգով էր նայում
այդ փոփոխութիւններին, նա կառչել էր հնին և չէր ուզում
պոկ գալ դրանից: Բայց նրա ղենքերը հին էին, թիակ կռվի մեջ
կարող է հաղթել նա, ով գինված է նորագոյն ղենքով, ով սլո-
զրեսի կողմն է կանգնած: Նույն և կուլտուրական կյանքում:

¹ Վ. Տերյան, Նույն տեղ, էջ 122—123:

կարող է հաղթանակել այն կուլտուրան, որը ավելի զարգացած է, պրոգրեսիվ ուժերի արդահայախն է: Այսպիսով, ռուսական քաղաքական սիրապետութեան հետեանքով մեր լեզվի կրած ազդեցութունը զնալով աճում և զարգանում էր: Սակայն այդ ազդեցութունը կարող էր երկու հետեանք ունենալ. «Մեկը այն է, որ մենք կձուլվենք, այսինքն՝ կկորցնենք մեր կուլտուրական առանձնութեան գործոնները, կկորցնենք մեր լեզուն և կզառնանք մի ապագային մասսա: Կամ թե չէ, կզարգացնենք մեր ամենից առաջ լեզուն, հետո մյուս ազգային-կուլտուրական գործոնները և ընդունելով եվրոպական կուլտուրա, կմտնենք եվրոպական ազգերի շարքերը իբր կուլտուրական մի ազգ: Ուրեմն կուլտուրական մի ազգ լինելու համար մենք պետք է ամբողջապես յուրացնենք եվրոպայի ժամանակակից կուլտուրան և միայն այն ժամանակ կարող ենք ազգային կուլտուրա ստեղծել: Այսինքն՝ ազգային կուլտուրային ձգտելով, այսպես ապա, մենք պետք է նախ դուրս գանք մեր այժմյան ազգային կճեպից և ընդգրկենք լայն հորիզոններ: Եվրոպական կուլտուրա ասելով, Վ. Տերյանը թուաշին հերթին նկատի ունեւ ռուսական կուլտուրան: Նա տեսնում էր այն խորը փոփոխութիւնները, որոնք կատարվում էին հայ ժողովրդի կյանքում, և գտնում էր, որ այդ փոփոխութիւններին համապատասխան լեզու պետք է ստեղծել. «Այդ լեզուն բնականաբար պիտի ընդունէ նոր, օտար բառեր և դա չի քնատի նրան մինչև որ նա կշարունակի կուլտուրական մի մասնայի լեզու լինել: Ահա թե ինչու ես միտն-պամայն հակառակ եմ այն տարօրինակ ձևին, որ ընդունել են մեր Միթրայանները և նրանց հետեւելով, պոստահայերը: Նրանք օտար բառը թարգմանում են, կամ տեղը մի նոր, ինչպես իրենք են ասում, ավելի «հայաշունչ» բառ են թխում: Այդ արամա-դրութիւնը ոչնչով չի կարող օգնել մեր լեզվի զարգացմանը, որովհետեւ աշխարհի բոլոր լեզուներն էլ անընդհատ խառնվում են, քերականական նոր ձևեր, նոր բառեր են ընդունում և յուրացնում դրանք. այդպես պետք է լինի նաեւ հայոց նոր լեզուն՝ աշխարհաբարը, որովհետեւ տաանց դրան նա չի կարող զարգա-նալ, չի կարող կատարյալ դառնալ: «Ազգային լեզվի մաքրու-թեան կողմնակիցները դեմ են մեր լեզվի մեջ նոր մուծվող նյու-թին, նրանք համարում են այդ այլասերում, մի քայլ դեպի

¹ Վ. Տերյան, Նույն տեղ, էջ 168.

ժարգոնը,—ասում է Տերյանը,—մինչդեռ կենդանի լեզուն և կենսունակ լեզուն է միայն քնդանակ ներս առնելու իր մեջ այդ նյութը և յուրացնելու Լեզուն ազգի հոգին է—կենդանի է այդ հոգին—կենդանի է և ազգը, կենսունակ է առաջինը, ուրեմն կենսունակ է և երկրորդը։ Իսկ այդ օտարաբանությունների ներմուծումը ցույց է տալիս, որ լեզուն դեռ կենդանի է և կենսունակ։ Սակայն այդ կենդանի ու կենսունակ լեզուն ստեղծողները նրանք չեն, որոնք սարսափով ամփոփվում են ազգային նեղ կեղևի մեջ—այլ նրանք, որ խնդությամբ ու գիտակցորեն ողջունում են նվիրագայի մուսաքը մեր երկիրը։

Արտվյանի բարբոքուն հոգին դեռ սրանից 70 տարի առաջ եթե պարզ չէր գիտակցում, զոնե զգում էր, թե ինչ են բերում մեզ ռուսները և ողջունում էր նրանց մուսաքը մեր երկրի խորքը։ Նվ մեր օրերի մեծ պոետը չէ՞ արդյոք, որ բերում է մեզ ռուս հոգու ամենաբնորոշ արտազրությունները—Պուշկինը և Բըլինան, Լերմոնտովը և Ժողովրդական հեքիաթը։ Ինչպես անհատն է առանձնության մեջ քարանում ու մեռնում, այնպես էլ ազգը։ Ազգերի զարգացումն ու առաջընթացը պայմանավորված է փոխադարձ հարաբերություններով, փոխադարձ ազդեցությամբ։

Վահան Տերյանը ավելի զարգացնելով իր միտքը, ճիշտ կերպով նշում է, որ ամեն ժամանակ ունի իր ընդհանուր ոճը՝ արտահայտությունների հատուկ ձևը, նվ ժամանակի ոճն ու ձևը արտահայտել կարող է միայն այն լեզուն, որը կենսունակ է։ Այդպիսի կենսունակ լեզու չի կարող անհետ կորչել, կամ ամբողջապես ձուլվել այս կամ այն լեզվին։ Հայոց լեզվի փրկությունը, հայ Ժողովրդի զարգացումը, ոչ թե նրա ինքնամփոփման, ազգային սնապարծության մեջ է, այլ նրա փրկությունը ռուսական կուլտուրայի ազդեցության ընդարձակման, հայ Ժողովրդի բախար ռուս Ժողովրդի բախար հետ կապելու մեջ է։ Ռուսիայի լավագույն տաղանդավոր ռուս դեմոկրատիայի հույսերին և իմ բաղձանքները նրա բաղձանքների հետ ես չեմ տարակուսում, որ չեմ հիասթափվելու։ Ռուսահայերի գրականությունն ու լեզուն, որքան էլ թերի լինեն, իրենց մեջ ավելի առողջ զարգացման տարրեր են պարունակում, քան արևմտյանը, որովհետև ռուսահայոց գրականությունն ու լեզուն, չնայած այն բոլոր խոչընդոտներին,

որոնք հարուցվել են նրա զարգացման հանապարհին, ավելի մեծ չափերով են կրել ռուսական ազդեցությունը, և ավելի կենսունակ են, քան արևմտահայության լեզուն ու գրականությունը, որից սնամեջ ազգամուրեքյան հոտն է փչում: Սակայն դեռևս արևելահայության գրականությունն ու լեզուն պակասություններին զերծ չեն, դրանք դեռևս իրենց բարձրության վրա կանգնած չեն, բայց կգա ժամանակ, երբ դրանք իրենց իսկական կոչմանը կծառայեն, երբ ազատ կլինեն և անկաշկանդ կզարգանան: Այն ժամանակ նրանց համար չպետք է լինեն հեղինակ հրեա, Շոքովհեռե իսկական դեղարվեստի համար կարևորը ոչ թե հագուստն է, արտաքինը—այլ ներքինը, հոգին: Թուսայանի «Փարվանան» բոլոր ժողովուրդներին համար հասկանալի է և դեղեցիկ, ինչպես և Պուշկինի «Ոսկե ձկնիկը»: Սրանով Վ. Տերյանը ցույց է տալիս այն ընդհանուրը, որ կարելի է տեսնել ժողովրդական լսյն զանգվածների հետ կապված գրողների ստեղծագործությունների մեջ: Այդ ընդհանուր կապերը, ընդհանուր գաղափարներն ու ձգտումները կարող են տարբեր պայմաններում, տարբեր ձևեր ստանալ, զարգացման տարբեր ընթացք ընդունել: Այդ պատճառով էլ մեր անվանի բանաստեղծը՝ ռուսական պրոզերսիվ կուլտուրայի տարածման համար պայքարող, հայոց լեզվի ու գրականության զարգացման համար մեծ աշխատանք կատարած Վ. Տերյանը, ռուսական կուլտուրայի ու լեզվի ազդեցությունից դուրս, այլ ազդեցություն չի ընդունում: «Մեր հայրենիքը Ռուսիան է,—ասում է նա,—և նրա ծոցումն է, որ կամենում ենք մենք առաջ տանել ու պահպանել մեր կուլտուրան,—եթե կարող ենք մենք յուրաքանչյուր ժամանակակից նվթարայի ամբողջ կուլտուրական ժառանգությունը—ուրիմ կարող ենք ապրել, եթե ոչ—մենք կը մեռնենք իբրև ազգ: Պետք է չափազանց կարճատես լինել գալիքի վերաբերմամբ կամ չափազանց վատտեսն Ռուսիայի ապագայի նկատմամբ, այս ամենը լի որ ես մատնանշեցի ամենաընդհանուր գծերով միայն, ռուս բյուրոկրատական-աբսոլյուտիստ կառավարության քաղաքական գերիշխանության առաջընթացքի մի նշան համարելու համար»:

Վ. Տերյանը տեսնում էր գալիքը, նա հայոց լեզվի բախարդ ոչ թե ռուսական բյուրոկրատիայի, այլ ռուս ժողովրդի հետ էր կապում: Այդ կապը,—նրա կարծիքով,—հնարավորություն կտար

¹ Վ. Տերյան, Նույն տեղ, էջ 101.

հայ ժողովրդին լայնորեն զարգացնելու իր կուլտուրան, իր գրականությունն ու լեզուն: Նա տեսնում էր, որ ցանկալի գալիքը շուտով վրա կհասնի և երիտասարդ Ռուսիան կթափա-
հարի իր թևերը և երկրի կենդանի ուժերը զարնան ելման ջրե-
րի նման կշարժվեն հզոր ու խնդուն:

Վ. Տերյանը հասկանում էր, որ ուռւ ժողովրդի գալիքը պայծառ է լինելու, որ ուռւ ժողովրդին վիճակված է պատմա-
կան խոշոր դեր կատարելու՝ մարդկության վերադաստիարակու-
թյան, հասարակական նոր հարաբերություններ, աշխարհում
ամենադեմոկրատական կարգեր ստեղծելու ընազավառում: Այդ
է պատճառը, որ նա այդպիսի կրթութեամբ պայքարում էր
ազգային սահմանափակ շրջանակներից դուրս չեկած, կղերա-
ֆեոդալական հարաբերություններին կառչած ինտելիգենցիայի
դեմ: Նա պաշտպանելով հայոց լեզուն, մշակելով այդ լեզուն
ռուսական առաջավոր կուլտուրայի ու լեզվի օրինակով, հարըս-
տացնելով այդ լեզուն ռուսական և ռուսերին միջոցով ընդու-
նած հիլոսպական բառերով, պաշտպանում էր հայ ժողովրդի ձեզ-
տումները, պայքարում էր հայոց ազգային լեզվի՝ աշխարհաբարի
գորգացման ու հարստացման համար:

Սակայն Վ. Տերյանը դգում էր նաև, որ մինչև չփոխվեն
Ռուսաստանում տիրող կարգերը, փոքր ժողովուրդների կուլտու-
րան ու լեզուն իրենց զարգացման իսկական ուղուն չեն կարող
կտնդնել: Վ. Տերյանի այդ նախազգացումներն իրականացան:
Սոցիալիստական ռևոլյուցիան վերացրեց փոքր ժողովուրդների
զարգացման, ազգային կուլտուրաների բարգավաճման առաջ
ձառացած խոչընդոտները և երկրի կենդանի ուժերը զարնան
ջրերի նման շարժվեցին հզոր ու խնդուն, գտան իրենց իսկական
հունը և տննախընթաց ուժով առաջ մղեցին փոքր ժողովուրդ-
ների կուլտուրայի զարգացումը:

ՕՐՐԱՐԳ ՕՐԶԱՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԴԵՐԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐՈՒՄ

Հայոց լեզուն՝ սովետական կարգերում զարգացման նոր
ընթացք ու նոր թափ ստացավ: Նա միայն այդ շրջանում կարո-
ղացավ լրիվ չափով դրսևորել իր հնարավորություններն ու պո-
տենցիալ կարողությունը և զարգացման նոր, ավելի բարձր տա-
լիճանի հասնել: Կարճ ժամանակում նա անճառնաչելիորեն փոխ-

վեց. հարստացավ նոր բառերով ու արտահայտութիւններով, գիտութեան, փիլիսոփայութեան, գրականութեան և արվեստի բոլոր ճյուղերին վերաբերող ամենաբարձր ու նրբին հասկացութիւններ ու գաղափարներ արտահայտելու ընդունակ դարձավ, վերածվեց պաշտոնական, պետական լեզվի: Ավելի սերտ դարձավ մեր և ռուսաց լեզվի միջև եղած դարավոր կապը՝ Դրոհեա միասին ավելի ընդձեռնեցին մեր լեզվի տառնաձևաձևակութիւնները և ազգային բնույթը:

Սոցիալիստական ռուսացիան,—ստույժ է ընկեր Ստալինը,— ձթափահարելով մարդկութեան խորագույն ներքնախաւովորը և նրանց տաջ մղելով քաղաքական թատերաբեմում՝ արթնացնում է նոր կյանքով ապրելու համար մի ամբողջ շարք ազգութիւններ, որոնք առաջներում անհայտ էին կամ քիչ էին հայտնի: Ով կարող էր կարծել, թե հին ցարական Ռուսաստանը ներկայացնում է 50-ից ոչ պակաս ազգութիւն և ազգագրական խումբ: Սակայն Հոկտեմբերյան ռուսացիան կտրտելով հին շրջթաները և ասպարեզ քաշելով մի շարք մոռացված ժողովուրդներ ու ազգութիւններ՝ նրանց նոր կյանք ու նոր զարգացում ավելցա՞: Սոցիալիստական ռուսացիան ոչ թե պակասեցրեց լեզուների ու ազգութիւնների քանակը, այլ ավելացրեց, որովհետեւ միայն սոցիալիստական ռուսացիայի հաղթանակի հետեւողքով մեր երկրում հնարավոր դարձավ տարբեր ազգերի կուլտուրաների ու լեզուների լիակատար զարգացումը: Պրոլետարական կուլտուրան չի վերացնում ազգային կուլտուրան, այլ բովանդակութիւն է տալիս նրան: Եվ ընդհակառակը, ազգային կուլտուրան ոչ թե վերացնում է պրոլետարական կուլտուրան, այլ ձև է տալիս նրան:՝

Բուլղարիկների պարտիան ոչնչացնելով ազգային ամեն տեսակ ճնշում և անիրավահավասարութիւն՝ մշակեց ժողովուրդների միավորման ձևերը, ստեղծեց կայուն բաղամազի պետութիւն, հաղթահարեց մեր ժողովուրդների զարգացման դեմ ըստեղծված բոլոր արգելքները: Սովետական իշխանութիւնը կարողացավ լրիվ չափով կենսագործել Լենինի ցուցումը՝ օգնել ոչ վերլիկոսու ժողովուրդներին աշխատավոր մասսաներին՝ հասնե-

¹ Ի. Ստալին, «Մարքսիզմ և ազգային դեմոկրատիկ հարցը», էջ 226—228, հայ., 1935:

² Ի. Ստալին, նույն տեղ, էջ 214:

լու առաջ անցած կենտրոնական Ռուսաստանին. օչինկ նրանց՝
 ա) Ջարդաօցնելու և ամբապնդելու իրենց մոտ սովետական պե-
 տականությունն այն ձևերով, որոնք համապատասխանում են
 այդ ժողովուրդների ազգային և կենցաղային պայմաններին.
 բ) զարգացնելու և ամբապնդելու իրենց մոտ մայրենի լեզվով գոր-
 ծող դատարան, ագլիթսարացիա, տնտեսութան օրգաններ,
 իշխանության օրգաններ, որոնք բաղկացած են տեղական բնակ-
 չության կենցաղն ու հոգեբանությունն իմացող տեղացիներից.
 գ) զարգացնելու իրենց մոտ մայրենի լեզվով մամուլ, դպրոց,
 ինտորոն, ակումբային դործ և առհասարակ կուլտուրա-լուսավո-
 րական հիմնարկներ. դ) կազմակերպելու և զարգացնելու մայրե-
 նի լեզվով ինչպես հանրակրթական, այնպես էլ արհեստագի-
 տական տեխնիկական բնույթի գասընթացներն ու դպրոցներն
 լայն ցանցով¹

Սոցիալիստական Ղևոնցիան ոչ միայն վերացրեց մեր
 երկրի ժողովուրդների տնտեսական և իրավական տարբերու-
 թյունները, այլև նրանց ավելի մոտեցրեց միմյանց և հրամա-
 յողական պահանջ դրեց բոլոր ազգությունների առաջ՝ հաղոր-
 դակից լինել պրոլետարական կուլտուրային և զարգացնել բո-
 վանդակությամբ սոցիալիստական, ձևով ազգային նոր կուլտու-
 րա Սյապիսով, մեր երկրի յուրաքանչյուր ժողովուրդ և ազգ
 դարգացնելով իր կուլտուրան՝ մասնակցում է համամարդկային
 կուլտուրայի կերտմանը, որովհետև, ինչպես նշում է ընկեր
 Սաալինը, համամարդկային կուլտուրան ոչ թե բաղադրվում է, այլ
 ենթադրում ու սնում է ազգային կուլտուրան այնպես, ինչպես
 ազգային կուլտուրան է լրացնում ու հարստացնում համամարդ-
 կային պրոլետարական կուլտուրան:

Սակայն մեր երկրի բազմաթիվ ժողովուրդների լեզուներն
 ու կուլտուրաները չտեսնված արագությամբ սկսեցին զարգա-
 նալ միայն այն բանի շնորհիվ, որ գտնվում էին ռուս ժողո-
 վրդի կուլտուրայի ու լեզվի ազդեցության տակ: Ռուսաց լեզ-
 վի միջոցով մեր երկրի երբեմնի անհայտ ժողովուրդների կուլ-
 տուրան ազգային շրջանակներից դուրս գալով՝ համաշխարհային
 ասպարեզ մտավ:

Մեր երկրում սովետական կարգեր հաստատվելու առաջին
 իսկ տարվանից ամբողջ աշխարհի աշխատավորութունը իր

¹ Սաալին, նույն տեղ, էջ 264:

հույսերը կապեց Սովետների հետ՝ Մեր ռեզոլյուցիան,—ասում էր Լենինը,—բոլշևիկների տիրապետությունից ընդամենը մեկ ու կես տարի հետո հասավ նրան, որ պետական այն նոր կազմակերպությունը, որ նա ստեղծեց, սովետական կազմակերպությունը ամբողջ աշխարհի բանվորներին հասկանալի, ծանոթ, մասնալիցապես դարձավ... Այժմ բոլշևիկները, «Սովետ» բառերը կրկնվում են ամբողջ աշխարհի լեզուներով¹։ Մի այլ անգամ, Երրորդ Խնտերնացիոնալի տարեդարձին նվիրած իր հառուժ, Լենինը ասել է, թե հնայած նրան, որ մենք կոչվում ենք կոմունիստական պարտիա, որ «կոմունիստ» անվանակոչումը գիտական է, համակարգավորող, բայց այդ բառը նվիրաբաշխվում է այլ երկրներում ավելի քիչ է տարածված, քան բոլշևիկն բառը։ Ռուսերեն «Սովետ» բառը ամենատարածված բառերից է, այդ բառը ռուսերեն է արտասանվում ուրիշ լեզուներում և չի թարգմանվում²։

Այդ և այլ բառերի տարածումը արտասանմանյան տարբեր լեզուներում ցույց է տալիս, որ ռուսերենը դեռ շատ վաղուց դարձել էր աշխարհի մի լեզու, որը ոչ միայն ընդունում ու յուրացնում էր աշխարհի տարբեր ժողովուրդների ստեղծած բառերն ու նոր հասկացություններ արտահայտող դանապան տերմիններ, այլև ներգործում էր այդ լեզուների վրա ու շատ զեպքերում արագ զարգացման օրինակ տալիս նրանց։ Սովետական շարժումը ոհա այն ձևն է,—ասում էր Լենինը,—որը այժմ տարածվում է ամբողջ աշխարհում և միայն իր անվանակոչումով բանվորներին աշխատելու մի նոր ծրագիր է տալիս։

Ռուսաց լեզվի հասարակական դերն ու նշանակությունը ամբողջ աշխարհի ժողովուրդների աչքում ավելի բարձրացավ Հայրենական Պատերազմի ընթացքում, երբ ամբողջ աշխարհը տկանատես եղավ ուսս ժողովրդի անզուգական հերոսության ու հայրենասիրության բուռն արտահայտություններին, երբ սովետական երկրի ժողովուրդները, ուսս ժողովրդի ղեկավարությամբ, ոչ միայն պահպանեցին իրենց Հայրենիքը, այլև փոխեցին Հայրենիք ու հերոսության հասկացությունները։ Հայրենական պատերազմի ընթացքում չտեսնված արագությունով Եվրոպա թափանցեցին ուսաց լեզուն և կուլտուրան։ Դրանց զուգընթաց

¹ Լենին, Երկեր, հ. 24, էջ 305—306,

² Լենին, Երկեր, հ. 25, էջ 12.

ուսերենի միջոցով համաշխարհային ասպարեզ ելան սովետական երկրի ժողովուրդների միահամուռ ուժերով ստեղծած կուստուրան ու արվեստը, երաժշտությունն ու գրականությունը:

Սովետական երկրի ժողովուրդների փոխադարձ կապն ու հարաբերությունները Հայրենական Պատերազմի շրջանում փայլեցին պատմության մեջ մինչև այդ հարձանագրված գեղեցիկ զրահորումներով:

Սակայն մեր ժողովուրդների կուլտուրան ու լեզուն հասարակական հարաբերությունների փոփոխման հետևանքով վաղուց էին ստացել նոր բովանդակություն, որի հիման վրա էլ ստեղծվել էին նոր հասկացություններ արտահայտելու համար անհրաժեշտ նոր, ընդհանուր և միասնական միջոցներ: Այդ բոլորի մեջ անկասկած, առաջատար դերը պատկանում է ուսաց լեզվին, որովհետև նրանով են առաջին հերթին տարածվում սոցիալիստական բնույթի ստեղծած և հասարակական նոր հարաբերությունների հետ կապված նոր բառերը, բառակազմություններն ու հասկացությունները: Ռուսաց լեզուն դարձավ աշխարհի ամենաուժեղ լեզուներից մեկը, եթե ոչ ամենահզորը, որով սկսեցին մտածել նույնիսկ այն ինտելիգենտներից շատերը, որոնց մայրենի լեզուն ուսերենը չէր: Այդ բոլորի հետևանքով բնական է, որ մեր երկրի ժողովուրդների լեզուները, որոնց մեջ նաև հայաց լեզուն, պիտի ենթարկվեն ուսաց լեզվի ուժեղ ազդեցությանը: Սակայն այդ ազդեցությունը ոչ մի բանով նման չպիտի է լինի նախասովետական շրջանի ազդեցությանը: Սովետական երկրում բոլոր ազգերի համար ստեղծված են ապրելակերպի ու աշխատանքի ընդհանուր պայմաններ, որոնց հիման վրա էլ ժողովուրդները բնության և հասարակական կառուցվածքի մասին ստեղծել են ընդհանուր պատկերացումներ, որոնք միևնույն բովանդակությամբ զրահորվում են մեր երկրի սարբեր լեզուներում: Հաճախ բառակազմական միևնույն միջոցով, սակայն միմյանցից անկախ բառեր են կազմվում մեր երկրի տարբեր լեզուներում:

Մեր կյանքին անձանոթ մարդու վրա այդպիսի քառակազմություններ կարող են պատճենավորում թվալ, բայց իրականում զրանք ոչ մի կապ չունեն պատճենավորման կամ անմիջական ազդեցության զրահորման հետ, այլ նրանց համար ստեղծված ընդհանուր իդեոլոգիայի հետևանք են: Այդ ընդհանուրություններն ու նոր բառակազմությունները հաճախ ձևավորվե-

լուց հետո միայն ռուսաց լեզվի ազդեցութեամբ կայունանում
ու գործածութեան մեջ են դրվում: Ծիշտ է ասված, թե լեզուն
մաքակային հասարակութեան անմիջական ու բնորոշ արտա-
գրանքն է, որի մեջ արտացոլում են հասարակութեան կյանքում
կատարված փոփոխությունները: Հաճախ այդ փոփոխություն-
ները տարբեր հասկացություններ միացնող հաջորդական օղակ-
ների մի ամբողջ շղթա են կազմում. հայերեն «հարուստ» բառը,
իր տարբեր առումներով, իմաստային այդպիսի տարբերություն-
ների դասական օրինակ է տալիս: Նա սկզբնական շրջանում
նշանակել է՝ «ուժեղ» ֆիզիկական առումով, «փարթամ», բայց
հասարակական նոր հարաբերությունների առաջացման հետևան-
քով փոխվում է «ուժեղի» նկատմամբ եղած հասկացությունը.
սկսում է ուժեղ համարվել նա, ով մեծ ունեցվածքի տեր է,
մեծատուն է, և այդ պատճառով էլ «հարուստ» բառը նոր առում
է ստանում: Սոցիալիստական հարաբերությունները մեր երկ-
րում ստեղծվելու հետևանքով՝ փոխեցին հարստութեան մասին
եղած հասկացությունները: Մեզ մոտ այժմ «հարուստ» բառը չի
գործածվում կոլտնտեսականների տնտեսական ուժեղությունն
արտահայտելու համար: Այժմ այդ բառի փոխարեն գործածվում
է «ունևոր» բառը, որը իմաստային նոր երանգ ստանալով՝ ար-
տացոլում է կոլտնտեսային դյուզում ունևորութեան նկատ-
մամբ ստեղծված հասկացությունը:

Հայոց լեզուն, նրա զարգացման համար ստեղծված բարե-
նպաստ պայմանների շնորհիվ, կարճ ժամանակում այնքան հա-
րըստացավ ու ճշխացավ, որ ընդունակ դարձավ իր մեջ ընդու-
նելու այն նորն ու համամարդկայինը, որ ստեղծվել էին սովե-
տական երկրի ժողովուրդների լեզուներում: Նա լայն ժողովրդ-
դականություն ստանալով և մեր ժողովրդի հոծ զանգվածների
ձգտումներն ու ապրումներն արտահայտելով հանգերձ՝ աղջային
շրջանակներից դուրս եկավ և իր բովանդակութեամբ վերածվեց
ինտերնացիոնալ լեզվի: Այստեղ ոչ թե մոռացվեց աղջայինը,
այլ ավելի ընդգծվեց նա իր ձևի մեջ. հայերենը իր զարգաց-
ման պատմութեան ընթացքում առաջին անգամ այնպիսի մեծ
ծավալով և չափով կարողացավ օգտագործել իր հին ու նոր լե-
զուների և բարբառների իրողությունները և դրա հետ միասին
ընդունել ու յուրացնել այլ լեզուների իրողությունները:

Մեր լեզուն դառնալով պետական լեզու՝ մեկ ընդմիշտ

ազատվեց ըստ բառերի և այլ լեզուների ազդեցութեանը կու-
գնալու վտանգից:

Սովետական առաջավոր դիտութեան հիման վրա հայադի-
տութեանը նույնպէս զարգացման նոր շրջան թեւակոխեց և առաջ
քաշեց ու լուծեց տեսական մի շարք պրոբլեմներ:

1. ՏԵՍԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Լեզվաբանութեանը միաստատանում սոցիալիստական ու-
ղիւղւոյնայից առաջ էլ ունեցել է իր տաղանդավոր ներկայացու-
ցիչները, որոնք ռուսաց լեզվի շատ պրոբլեմներ՝ դիտական վե-
րամշակման ենթարկելուն դուրսնեց, զգալի չափով օժանդա-
կել են հնդեւրոպական լեզվաբանութեան զարգացմանը և ստեղծել
լեզվաբանական այնպիսի հետազոտութեաններ, որոնք համաշ-
խարհային նշանակութեան ունենալով, բայց նրանք իրենց տեսա-
կան դրույթներով զննվաբարձ էին ըստ ժողովրդական լեզվաբա-
նութեան մշակած դոգմաներով:

Մեր երկրում սովետական կարգեր հաստատվելուց հետո լեզ-
վաբանական դիտութեանը նույնպէս նոր հիմունքների վրա
դրվեց: Ռուս լեզվաբանութեան կարկառուն ներկայացուցիչ
Ն. Մառը ստեղծեց «Լեզվի մասին նոր ուսմունքը» և սովետական
լեզվաբանութեան հիմքը դրեց: Նա ջուր-ջուր տվեց հնդեւրոպական
լեզվաբանութեան ուսակցիոն էութեանը և հենվելով մարքսիզմի
կլասիկների ցուցումների վրա՝ նշեց լեզուների զարգացման ու
փոփոխման իսկական ուղին: Լեզվական իրողութեաններ խոր
վերլուծման հիման վրա նա պարզեց, որ ժամանակակից ու հին
լեզուները ոչ թէ մի նախալեզվից են առաջացել, այլ ձևավորվել
են պատմականորեն՝ բազմաթիւ լեզուների խաչավորման ու
փոխմիջոցով: Ներդրութեան սլաւոններում և լեզվաստեղծագոր-
ծութեան համաշխարհային պրոցեսի միասնական շղթայի տարբեր
օղակներն են ներկայացնում: Մառը յուրացնելով մարքսիզմը,
մշակեց մտածողութեան ու լիզվի կապի պրոբլեմը, ապացուցեց,
որ լեզվական իրողութեանների փոփոխումն ու զարգացումը պայ-
մանավորված են հասարակական հարաբերութեաններով: Նա ուր-
վագեց մտածողութեան ու լեզվի ստադիալ զարգացումը:

Ն. Մառը և նրա հաջորդները ստեղծագործական աշխատանքի
չայն ուղիներ բաց արին սովետական երկրի լեզվաբանների ա-

ևս, ազատեցին ռուսական լեզվաբանությունը հնդերոպաբանության ազդեցությունից և զարգացման նոր, բուրժուական գիտության համար անհասունելի, բարձրության հասցրին: Նրանք սկսեցին մշակել նաև ռուսաց լեզվի պատմության մի շարք պրոբլեմներ: Նրանց օրինակով Սովետական Միության մյուս ժողովուրդների լեզվաբանները նույնպես ձեռնամուխ եղան մայրենի լեզվի հարցերի մշակմանը, ռուս լեզվաբանների հետ միասին մասնակցելով սոցիալիստական կուլտուրայի ստեղծման աշխատանքներին:

Հայ լեզվաբանները նույնպես նախասովետական շրջանում հսկայական աշխատանք էին կատարել մեր լեզվի զանազան հարցերի մշակման բնագավառում, սակայն նրանք էլ տեսական հզորահանգույնների մեջ զեկավարվել էին հնդերոպական լեզվաբանության մշակած սկզբունքներով: Միայն սովետական պայմաններում մեր լեզվաբանությունը ազատվեց հնդերոպական լեզվաբանության ազդեցությունից և ռուսական լեզվաբանության օրինակով ճիշտ լուծեց մեր լեզվի մի շարք հանգուցային հարցերը: Դրանցից ամենակարևորը պետք է համարել հայոց լեզվի կազմավորման հարցը: Հայտնի է, որ հնդերոպաբանության ներկայացուցիչները հայոց լեզուն հնդերոպական լեզուների մեջ էին մտցրել և ռուսաֆոնատիվ էին միայն նրա հնդերոպական տարրը: սովետահայ լեզվաբանները հետևելով Ն. Մառին, քաջահայտնեցին հայոց լեզվի կազմավորման մեջ վճռական դեր խաղացած բնիկ ժողովուրդների լեզուների ֆոնոցորդները, և ցույց տվին, որ հայոց լեզուն ոչ մի կապ չունի հնդերոպական այսպես կոչված նախացեղի լեզվի հետ, որովհետև այսպիսի «նախացեղ» և «նախալեզու» ընդհանրապես գոյություն չեն ունեցել:

Հայ էթնիկական լեզվի կազմավորման հարցը լուծելու հետ միասին վճռվեցին նաև զրաբարի և ժամանակակից հայերենի կազմավորման հետ կապված մի շարք հարցեր: Այժմ արդեն ոչ ոք չի կարող պնդել, թե մեր բարբառները, կամ գրական լեզուները զրաբարի աղավաղված ձևերն են: Մեկ ընդմիջապառնցվեց, որ բարբառները ավելի հին անցյալ ունեն, քան մեր գրական լեզուները (զրաբար, միջին հայերենը և ժամանակակից գրական լեզուները), որոնք ձևավորվել են բարբառների հիման վրա և պայմանավորված են հայ ժողովրդի զարգացման տարբեր շրջանների ու հասարակական տարբեր հարաբերությունների հիման վրա ձևավորված լեզվամտածողությամբ և տարբեր

են ինչպես լեզվական իրողություններով, նույնպես և բովանդակութեամբ:

Ռուսական լեզվաբանության մեջ ստեղծվեց խոսքի մասերի առաջացման մասին նոր ուսմունք: Այդ տեսությունը իր արտացոլմամբ դատվ նաև մեզ մոտ: Հայ լեզվաբանները հետևելով ուսուցիչականներին և առաջին հերթին Ն. Մառին, սկսեցին պարզաբանել խոսքի մասերը և թեքումը որպես մտածողության կատակարարներ, որոնք առաջացել են պատմականորեն, արտացոլելով մարդկային հասարակության զարգացման տարբեր աստիճանների պրակտիկան:¹

Մատի այդ գրութիւններից հինելով պրոֆ. Ա. Ղաբիրյանը լուծեց գրաբարի և բարբառների մի շարք պրոբլեմներ:

Սովետական լեզվաբանության նվաճումներից հինելով պրոֆ. Գր. Ղափանցյանը և ուրիշները նոր մոտեցումով լուսաբանեցին ընդհանուր լեզվաբանության մի շարք պրոբլեմներ:

Տեսական հարցերի պարզաբանումը ունեցավ նաև իր գործնական հետևանքները, մշտեցին լեզվաբանական մի շարք գիտելիքների դասընթացներ, կազմվեց պարոցական նորմատիվ քերականությունը, որը դուրս մղեց մեր դպրոցում իր գրությունը քարշ տվող ֆորմալ քերականությունը: Ռուս և հայոց լեզուների դպրոցական քերականությունները շատ կոդերով նման են միմյանց, թեև ավելի մոտ է լույս տեսել հայերենի քերականությունը: Այդ նմանությունները առաջացել են այն բանի շնորհիվ, որ ինչպես ուսուցիչական և հայ քերականները մասնաճյուղից լեզվի հարցերը մշակելիս նկատի են ունեցել սովետական լեզվաբանության բնագավառում ձևող բերված նվաճումները: Իսկ այդ նվաճումները առաջին հերթին ուսուցիչ լեզվի իրողությունների վրա են հիմնված: Եվ այժմ ընդհանրապես մեր երկրի ժողովուրդների կուլտուրաների ու լեզուների մեջ չի կարող կատարվել որևէ առաջադեմական տեղաշարժ, առանց ուսուցիչ կուլտուրայի ու լեզվի ներգործութանը: Այդ տեսակետից շատ հետաքրքրական էն մեր լեզվի բառապաշարի մեջ կատարված տեղաշարժները, որոնք և՛ իրենց որակով, և՛ քանակով գերազանցում են նախասովետական ամբողջ շրջանում մեր բառապաշարի մեջ կատարված տեղաշարժներից:

¹ Գ. Սեվակ, *Լեզուների մասերի ուսմունքը*, Պետական տպարանի տեղեկագիր, հատ. XI, 1930 թ:

2. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ ԵՎ ՆՐԱ
ՄԵՋ ԿԱՏԱՐՎԱԾ ՏԵՂԱՇԱՐԺՆԵՐԸ

Սովորաբար ասում են, թե տվյալ լեզվի բառերի ամբողջությունը՝ իր իմաստային բոլոր դրսևորումներով, կազմում է այդ լեզվի բառապաշարը։ Լեզուների բառապաշարը, սակայն, չի կարելի զետեղել բառարաններում, որովհետև լեզուն որպես մարդկային հասարակութային տնտիշական ու բնորոշ արտադրանքը, ամեն բոլոր ենթակա է փոփոխման ու զարգացման։ Իսկ բառարանը կարող է արտահայտել որևէ լեզվի հարաբերականորեն կայուն որոշ շրջանի բառամթերքի մի կողմը միայն։ «Բառարանը երբեք վերջնականապես չի ամբողջացվում,— ասում է Վանդրիսը,— քանի որ նա կապված է շրջապատող պայմանների հետ։ Յուրաքանչյուր խոսող յուր կյանքի ընթացքում միշտ լրացնում է յուր բառապաշարը՝ փոխառնելով բառեր իրեն շրջապատող միջավայրից։ Մենք անդուլ կերպով ընդլայնում, նեղացնում ու փոփոխում ենք մեր բառապաշարը, դա ձեռք բերվող և անհետացող բառերի անընդհատ շրջանառություն է»¹։

Բառապաշարի փոփոխման ու զարգացման կոնկրետ պատճառները շատ ու շատ են։ Բայց մենք քննելու ենք միայն այն երևույթները, որոնք կապված են օտար փոխառությունների և ազդեցությունների հետ։

Օտար փոխառությունները հիմնականում տեղի են ունենում՝ 1) այն ժամանակ, երբ ստեղծվում են հասարակական նոր հարաբերությունների հետ առնչակցված նոր հասկացություններ, որոնք արագ կերպով տարածվելով տանում են նոր տերմինը։ 2) երբ տարբեր ժողովուրդների միջև ստեղծված կուլտուրական կապի ուժեղացման հետևանքով պահանջ է զգացվում նոր տերմինների։ 3) երբ այս կամ այն ժողովրդի լեզվում եղած հին հասկացություններն արտահայտող բառերը փոխարինվում են նոր բառերով։ Այս դեպքում հին տերմինների փոխանորդումը կատարվում է մեծ մասամբ այն ժամանակ, երբ տերմիններ փոխանորդ ժողովուրդը գտնվում է փոխառու ժողովրդի ուժեղ ազդեցության տակ և 4) երբ ուժեղ կամ ավելի զարգացած լեզվից տառացի թարգմանություն (կալկա) է կատարվում։ Այս

¹ Вандриес, «Язык», էջ 181.

Իրենույթները ավելի կամ պակաս չափով միշտ էլ տեղի են ունեցել քոլոր լեզուների զարգացման ընթացքում:

Սակայն սովետական պայմաններում փոխվեց զրանց բովանդակությունը և ստեղծվեցին բառափոխություն աշխարհի երևույթներ, որոնք անհասկանալի և անհնարին կարող են լինել բուրժուական հարաբերությունների պայմաններում: Մեր ժողովուրդները տեսարգել ձևով ուսեսերենից վերցնում են ուսական և օտար աշխարհի բառեր, որոնք մեծ չափով օժանդակում են նոր հասկացությունների ըմբռնմանը: Սակայն լեզվական այդ նոր երևույթները լուրջ բառափոխանորդումով չեն սպառվում: Նրանք հաճախ աշխարհի ընդհանրություններ են, որոնք առաջացել են սովետական երկրի ժողովուրդների լեզուների բառաստեղծական միասնական պրոցեսում և խաբարված են մեր լեզուների սոցիալիստական բովանդակությամբ և ազդային ձևի վրա: Այդ միասնական բովանդակությունը հանդիսանում է այն հիմնական գործոնը, որը մեր լեզուների զարգացման ընթացքում ստեղծում է որոշ ընդհանրություններ, դրանք արտահայտվում են սովետական անալոգիական բառակազմությունների ազդեցությունների շրջանակի ընդարձակման, Միություն ժողովուրդների, ինչպես նաև Սփրուայի և այլ երկրների ժողովուրդների լեզուներում ուսաց լեզվի ազդեցությամբ առաջացած նյութական բառերի ու բառակազմությունների տարածման և սովետական ինտերնացիոնալիզմի տեղեկացի ուժեղացման մեջ: Այդ բոլորը միանգամայն նոր որակ ու նոր թափ են հաղորդում մեր ժողովուրդների, որոնց թվում նաև հայ ժողովրդի լեզվի զարգացմանը:

Մեր լեզվում փոխառություններ կատարվել են նաև նախասովետական շրջանում, բայց դրանք միանգամայն տարբեր որակի են եղել և պայմանավորված են եղել հայկական բուրժուազիայի քաղաքական ձգտումներով: Իսկ հայ բուրժուազիան մերթձգտել է ըստ ամենայնի զարգացնել մեր լեզուն՝ «մաքրելով» այն օտարաբանություններից, մերթ աշխատել է որքան կարելի է շատ բառեր փոխ առնել և «եվրոպականացնել» մեր լեզուն: Բայց դեպքերում էլ, սակայն, նա նկատել է ունեցել միայն իր, և ոչ թե ամբողջ հայ ժողովրդի շահերը: Սովետական պայմաններում հիմնիվեր փոխվեցին ինչպես մեր լեզվի զարգացման, նույնպես և բառերի փոխանորդության պայմանները:

Նոր իրազրուելիք հետեանքով մեր ժողովրդի կյանքում կատարված փոփոխությունների առաջին արձանագիրը հանդիսացավ մեր լեզուն: Ռուսերենի ազդեցությամբ ու նմանողություններ կազմված բազմաթիվ նոր բառեր ու բառակազմություններ անմիջապես մտան մեր լեզվի մեջ: Այդ նոր բառակազմությունների գերակշռող մեծամասնությունը տարբերվում է մինչև այժմ մեր լեզվում ստեղծված նման բառակազմություններից. աշխօր, լուսժողկում, առաջխաղում, գերազանցիկ և նման այլ շատ բառաստեղծումներ չեն կարող նույնացվել հունարենի նմանություններ մեր էրայի մ—շ—բդ դարերում կազմված բառակերպի հետ: Մեր ժողովրդի լայն զանգվածներին այն ժամանակ անհասկանալի էին ստորոգիլ, ներածել, արտածել, տրամաբանել, ներքողել, մակաբայել, մակածություն, պարամալիություն, դերամոնություն, միջարկություն, ստորագրություն, անդրապատկերում և շատ այլ նման բառեր, որոնք հունարենի ձևական ընդօրինակություն էին, թեև դրանց կազմության ժամանակ օգտագործված էին միայն հայերենի լեզվական հնարավորությունները:

Մինչդեռ ռուսերենի նմանողությամբ մեր պայմաններում կազմված բառերից շատերը այնքան տարածված ու հասկանալի են և՛ գյուղացուն, և՛ բանվորին, և՛ ինտելիգենտին, որ հաճախ հրանց սկզբնաղբյուր գտնելը անհնարին է լինում: Նոր ստեղծված այդ բառերի դեպի մասը ժողովրդի թոռակցական լեզվից է մտնում մեր գրականության մեջ: Այդ նոր բառակազմությունների տարածման ու մասսայականացման պատճառը այն ընդհանուր նպաստավոր պայմաններն են, որոնք ստեղծվել են մեր լեզվի զարգացման համար: Ռուսերենի անալոգիայով կազմված հարվածային (ударник), հնգամյակ (пятилетка), կոլտնտեսություն (колхоз), կոլտնտեսական (колхозник), մեմտոլնտես (единоличник), իմֆոֆմադատություն (самокритика), վնասարարություն (вредительство), գտում (чистка), գրանտահար (бронедоимный), իմֆաիստ (самотек) և նման բազմաթիվ այլ բառակազմությունները տառացի թարգմանություններ (կալկա) չեն, այլ ձևավորված են ռուս և հայ ժողովուրդների համար ստեղծված ընդհանուր իդեոլոգիայի հիման վրա, թեև առաջատարը այստեղ ռուսաց լեզուն է: Այդ և նման շատ այլ նոր բա-

ներ հաճախ ստեղծվում են միմյանցից անկախ, միաժամանակ, որովհետեւ մեր երկրի բոլոր ժողովուրդները, ազտիվ կերպով մասնակցելով սոցիալիստական շինարարությանը և ստեղծելով նոր կուլտուրա՝ ընկալում են մեր իրականությունը միևնույն ձևով, լեզվական միևնույն իմաստներով, որոնք խորթ չեն մեր լեզվին և բխում են նրա ներքին օրինաչափություններից։ Այդ նոր իրողությունները մեր երկրում կատարված տնտեսական և հասարակական փոփոխությունների հետ են շաղկապված ու ազդային ձևով արտահայտում են այն նսբը, որ չտեսնված արագությամբ մասնաշաղկանանում ու արժատանում է մեր լեզվում։ Անալոգիայով կազմված աշխօր, առաջնաշում, գերազմեցիկ, գրեթե և այլ նոր բառերը չեն տարբերվում հուսական համապատասխան իմաստ արտահայտող տերմիններից, որովհետեւ և՛ հուսերեն, և՛ հայերեն նման բառակազմությունները ձևավորվում են միմյանց հետ քերտորեն կապված մեր ժողովուրդների ընդհանուր դոյափիճակի պայմաններում։ Նրանց դոյացման արդյուրը մեկ է, բովանդակությունը՝ միասնական, միայն ձևն է տարբեր։ Մարդկության պատմության զարգացման նախաստվետական ամբողջ շրջանում, նախադարյան կոմունիստական հասարակությունից սկսած մինչև կոպիտալիստական հասարակակարգը, նոր հասկացությունների դոյացման, նոր բառերի ստեղծման այդպիսի երևույթներ չեն եղել։ Հին ժամանակներում շատ ժողովուրդների կամ պասսիվ կերպով ընկալել են առօրյալոր կուլտուրայի ազդեցությունը, կամ բռնի կերպով ենթարկվել ավելի ուժեղ ժողովուրդների ազդեցությանը և ընդունել նրանց կուլտուրան ու լեզուն։ Մեր երկրի ժողովուրդները այդպիսի բռնադատման չեն ենթարկվում։ Նրանք անարդել կերպով զարգացնում են իրենց կուլտուրան ու լեզուն, միասնարար ստեղծում նոր հասկացություններ, նոր բառակազմություններ և մասնակցում սոցիալիստական կուլտուրայի ստեղծմանը։

Նախաստեղծական շրջանում խոր անջրպետ կար մեր գրական և խոսակցական լեզուների միջև և այդ պատճառով էլ գրական լեզվի մեջ մտած նորությունները ժողովրդին չէին հասնում. այժմ վերացված է այդ սահմանադաժությունը։ Ժողովուրդն իր ծոցից դուրս եկած ինտելիգենցիայի օժանդակությամբ ոչ միայն մասնակցում է մեր երկրի շինարարությանը, այլև լեզվի մշակման ու զարգացման դործին։

Սովետական շրջանի հայոց լեզվի զարգացման մեջ առանձնահատուկ դեր ու նշանակություն ունեն անալոգիական բառակազմությունները, որոնք արտահայտվում են ուսերենի անալոգիայով հայերեն բառերից կազմված նոր բառակազմությունների (պատի քերք, աշխօր, հարվածոյիմ, գերագնցիկ և այլն), ուսերեն բարդ բառերի մի մասը թարգմանելու, իսկ մյուս մասը նույնությամբ պահելու (կոլտնոսություն, սովետական իշխանություն, սովետական տնտեսություն և այլն), ուսերեն բառերի բառացի թարգմանության և այլն եղանակներով:

Այդ բոլոր երևույթներն էլ նոր բովանդակություն ունեն և պայմանավորված են մեր երկրում իշխող ընդհանուր իդեոլոգիայով: Այդ պատճառով էլ շատ նոր բառեր ու բառակազմություններ արդեն գործածությունից դուրս են ընկել, թեև դուրսն են սովետական պայմաններում, կամ նոր իմաստ ու գործածություն ստացել: Սրանից ընդամենը մի քանի տարի առաջ քնիզ բառը որպես սկզբնական պարտկամ կոմերիտական կազմակերպություն լայն գործածություն ուներ, բայց այժմ այդ առումով բառն արդեն չի կիրառվում: Հայերեն հեղվում, գավկում բառակազմությունները ստեղծվել են մեր երկրում սոցիալիստական կարգերը հաստատվելուց հետո և շատ հասկանալի են հղել մեր ժողովրդական լայն գտնվածներին, բայց այժմ հիշվում են միայն որպես պատմական իրողություններ, և ոչ որպես կենդանի, խոսակցական լեզվի մեջ գործածվող բառեր:

Այդ բառերի բախտին են արժանացել նաև մի շարք այլ նորակազմություններ, որոնք արտահայտել են տվյալ շրջանի հետ կապված հասկացությունները. Գեպ և Գեպման, լիկկայան, քեքև հեծելազոր, աշխարհա բառակազմությունների իմաստը այժմ կարող է նույնիսկ անհասկանալի լինել մեր երիտասարդ սերնդի որոշ մասին, որովհետև դրանք արդեն հատուկ չեն մեզ համար կամ չեն արտահայտում մեր երկրի զարգացման ներկա գտալի հետ առնչված ըմբռնումները:

Այս և նման շատ այլ բառերի առաջացման, տարածման կամ անգործածական դառնալու պրոցեսը այնքան օրինաչափ է և այնքան սերտորեն է կապված մեր Միություն բոլոր ժողովուրդների միասնական մտածողության հետ, որ չի կարող հասուկ լինել միայն մեր լեզվին: Այդպիսի բառեր, կարելի է ասել, կարող են գոյանալ մի օրում, լայնորեն տարածվել նույնիսկ

ժողովրդական լայն դանդաղածներին մեջ և մի օրում էլ անգործածական դառնալ, եթե չեն արտացոլում մեր կյանքում կատարված փոփոխություններն ու տեղաշարժները։ Սակայն չնայած դրան, այնուամենայնիվ մեր լեզվի մեջ մտած այդ փոփոխությունները, որոնք ընդհանուր են մեր երկրի բոլոր ժողովուրդների լեզուների համար, իրենց կյանքն ու զարգացումն ունենառևտյ լեզվի ազդեցության շնորհիվ։

Բ. Նույնական բառակազմություններ և բառեր

Մեր լեզվի զարգացման նոր հնարավորություններից մեկն էլ նույնական (իդենտիկ) բառակազմություններն են։ Այդ երեւութը ընդհանուր է ընդհանրապես Սովետական Միության բոլոր ժողովուրդների լեզուներին, միայն այն տարբերությամբ, որ մեկ լեզվում՝ դրանք կարող են լինել նույնական բառակազմություն, իսկ մի այլ լեզվում՝ անալոգիական։ հայերենում պատի բերք, ով՝ ում, հաճգոտի օր, հարվածայիմ բառակազմակցություններն ու բառերը կազմվել են ուսուներեն стенная газета, кто кого, выходной день, ударник բառերի նմանողությամբ և անալոգիական բառակազմություններ են։ այնինչ ուկրաիներենում և Միության մի շարք այլ ժողովուրդների լեզուներում նույնական (իդենտիկ) են։ Եվ ընդհակառակն, մի շարք հասկացողություններ մեր լեզվում արտահայտվում են նույնական բառակազմություններով, իսկ շատ այլ լեզուներում՝ անալոգիական։ սովետ բառը մեզ մոտ նույնական է, իսկ ուկրաիներենում՝ անալոգիական (рада) բառակազմություն է և այլն։

Նույնական բառակազմություններ նոր երևույթ են մեր լեզվի համար, որովհետև նրանք լայն տարածում ստացան միայն սովետական իշխանությունը մեր երկրում հաստատվելուց հետո և տարբերվում են նախասովետական շրջանում մեր լեզվի մեջ մտած բառերից, անգամ նույնական բառակազմություններից։ կոստումոյ, կոլխոզ, բրիգադիր, սովետ, պարտիա, Արմֆամ, կուլտ ֆոնդ նույնական բառակազմությունները կապված են մեր ժողովրդի նոր մտայնության ու զաղափարախոսության հետ և անհասկանալի են մեր կյանքին անծանոթ մարդկանց։

Հաճախ նույնական և անալոգիական բառակազմության միջոցները հանդես են գալիս միասնաբար։ սովետական իշխանություն, սովետական տնտեսություն, մարզկոմ, կուլվար, բրիգա-

դավաճ, կոլտնտեսություն, քաղաքներ, Սովետական Միություն, կոմերիտական և այլն բառակազմությունների մի եղբը վերցրե-
 ճած է անփոփոխ, իսկ մյուսը՝ Թարգմանված է հայերեն համա-
 պատասխան բառով, Նույնիսկ այդպիսի բառակազմություններն
 էլ անհասկանալի կարող են լինել մեր երկրին ու կյանքին տն-
 ծանոթ մարդկանց: 1930 թվին Նյու-Յորքում լույս տեսած հա-
 յերեն մի բառաբանում¹ մեր կյանքի դանազան երևույթներ
 արտահայտող նույնական և անալոգիական բառակազմություն-
 ները Թարգմանված են մեզ համար միանգամայն տարօրինակ
 ձևով: Հեղինակի կարծիքով բուհ—բանվոր ուսանողներ պատրաս-
 տող հիմնարկ է, Գպու՝ պետական քաղաքական ուսուցանական
 վարչություն, Զինկոուպ՝ զինվորական համագործակցական միու-
 թյուն, կոմերիտ՝ համայնավար երիտասարդ, կուլտ ֆոնդ՝ մշա-
 կութային դրամադուրա, կուսակցիսկ՝ կուսակցական դործունե-
 ություն, կուսնդ՝ դործոն գեր, մարզկոմ՝ մարդական (ֆիզի-
 կական մարզանքների) կոմիտե և այլն: Բերած օրինակները
 ցույց են տալիս, թե որքան տարբեր են մեր ըմբռնումները
 արտասահմանում ապրող մեր եղբայրակիցների հասկացողու-
 թյուններից: Նվազ հասկանալի է մեր ժողովրդի կյանքում
 կատարված յուրաքանչյուր տեղաշարժ անմիջապես արտացո-
 վում է մեր լեզվի մեջ հաճախ այնպիսի բառերի միջոցով, ո-
 րոնք վաղուց դործածական են եղել մեր լեզվում, բայց ոչ այն
 իմաստով, ինչ առկա է սկսում են դործածվել՝ արտահայտելով
 հասարակական նոր հարաբերությունների հետ կապված գաղա-
 փարները:

Այդ նոր իդեոլոգիան արտահայտող բառերն ու նոր բա-
 ռակազմությունները առաջին հերթին տարածվում են ռուսաց
 լեզվի ազդեցությամբ, բայց այստեղ չի բացառված նաև փոխադ-
 րեցությունը: մեր երկրի դանազան ժողովուրդների, որոնց
 թվում նաև հայ ժողովրդի լեզվից ռուսաց լեզվին են անցել մի
 շարք բառեր, որոնցից կարելի է նշել հետևյալները. աշուղ
 (ашуг), յար (яр), ջան (джан), հարիսա (ариса, хариса), վիշապ
 (вншап), դարիբ (карнб), կարաս (карас), լավաշ (лаваш),
 մատաղ (матах), սեպուհ (сепух), խալ (хал), շարական (ша-
 ракан), շուշան (шушан) և այլն: Այդ բառերը ռուսերենի մեջ

¹ Ալեքսանդր-Մելիք, «Գրգանի միջազգային հանրագիտարան»
 Նյու-Յորք, 1930 թ.:

են մտել այն բանի շնորհիվ, որ հայկական կուլտուրայի զանա-
զան բնազավառներին վերաբերող գործեր, ինչպես նաև մեր
վրականության արժեքավոր ստեղծագործությունները սկսեցին
թարգմանվել ոտեսերեն։ Այդ բառերի մեջ չենք հաշվում հայ
մշակույթի հետ կապված գիտական տերմինները, որոնցից շա-
տերը վաղուց ի վեր ուսուսաց գիտական լեզվի մեջ են մտել։

Մեր Միության ժողովուրդների մեջ ստեղծված սերտ կա-
պը հասցրեց նրան, որ հատուկ անուններ, որոնք տեղական, պղ-
զային երանգավորում ունեն, արդեն հասկանալի են դարձել
մեր բոլոր ժողովուրդներին։

Ռուսերենի միջոցով մեր լեզվի մեջ մտած նույնական բա-
ռերի և բառակազմությունների թիվը զնալով աճում է։ Դա մեր
լեզվի զարգացմանը մեծ թափ հաղորդող և անհրաժեշտ բառա-
ստեղծական միջոցներից մեկն է, որը արագացնում է նաև մեր
ժամանակակից հայերենի համազգային լեզու դառնալու պրոցեսը։

Գ. Բառիմաստի փոփոխություններ

Լեզվարանության մեջ ընդունված է ասել, թե լեզվի ինք-
նուրույն բառերի հիմնական պատկերացումները, երբ այլ և այլ
դուգորդություններով աղերսակցվում են կողմնակի պատկերա-
ցումների կամ հասկացությունների հետ, իմաստային շեղումներ
կամ տարբերակումներ են հաջողվում։ այդ ձևով փոխվում է բառի
իմաստը և ստեղծվում նոր բառ, թեև հաճախ պահպանվում է
բառի հնչյունական կողմը։ Չթիտելով լեզվի բառուպաշարի զար-
գացման այդ ընդհանուր օրինաչափությունները՝ պետք է նշենք,
որ այժմ ժամանակակից հայերենի բառերի իմաստի փոփոխու-
թյունը կատարվում է նաև ուսուսաց լեզվի աղեկեղությամբ։
Հայտնի է, որ այժմ մեր երկրում կատարված ամեն մի նորություն
նախ ուսուսաց լեզվի մեջ, ապա մեր երկրի մյուս ժողովուրդների
լեզուներում է իր արտահայտությունն ստանում։ Այստեղ բա-
ռիմաստի փոփոխման հիմնական ֆակտորը ոչ թե հոգեբանական
դուգորդություններն են, որոնք նույնպես վերջին հաշվով պայ-
մանավորված են ընդհանուր իդեոլոգիայով, այլ հասարակական
գոյավիճակն է, որը ընդհանուր է մեր բոլոր ժողովուրդների
համար։

Մեր հասարակական կյանքում տեղի ունեցած փոփոխու-

թյուները ուղղակի կերպով արտացոլում են մեր լեզուներին մեջ, Օրինակի համար գտել բառի նոր իմաստը ոչ թե առաջացել է հայոց լեզվում անկախ կերպով, այլ ձևավորվել է մեր տնտեսական ապարատը խորթ տարրերից մաքրելու քաղաքականության աղդեսությամբ: Այդ և նման բազմաթիվ այլ հայերեն բառեր փոխել են իրենց իմաստը ուսուցիչների անալոգիայով: Բայց այդ անալոգիական բառակազմությունները, ինչպես ցույց է տրված, մեր ժողովուրդների տնտեսական ու քաղաքական կյանքով պայմանավորված հասարակական ընդհանուր լեզուների արտացոլություն են: Մեր լեզվում գործածվող շատ տերմիններ, ինչպես՝ չփավոր, չփավորություն, օղակ, վնասարար, վարժապետ, մրցում, մրցություն, հերոս, աշխատանքի ներս, հանգստի օր, շաբաթօրյակ, սկզբնական կազմակերպություն, հարվածային, աշխատանք, ձեռնարկություն, պաշտոնյա, հիմնարկություն, ձեռնարկ, բարիք, հայրենիք, զենք, փառքություն, աշխատավարձ և այլն, իրենց նոր իմաստով, ընդհանուր լեզուների հետ են կապված:

Այդ բառերից յուրաքանչյուրը նոր իմաստ է ստացել համաձայն իր կատարած հասարակական ֆունկցիայի. օրինակ՝ չփավոր, չփավորություն բառը: Այդ բառը սկզբնական շրջանում նշանակել է չնգածը, չունեցողը: Սովետական կարգերը մեր երկրում հաստատվելուց հետո, նա նոր իմաստ ստացավ. նա պատկերացրեց ոչ թե չփավոր, չնգած հասկացությունը, այլ նշանակեց գյուղական բնակչության այն բազմաքանակ շերտը, որը մեր հեռադարձն էր գյուղում: Երբ փոխվեցին գյուղում եղած հարաբերությունները, այդ բառը համարյա անգործածական դարձավ, թերևս կգա ժամանակ, որ նա ամբողջապես դուրս կմնա մեր խոսակցական լեզվից: Օղակ բառը ուսուցիչներն համապատասխան բառի (ЗВЕНО) անալոգիայով նոր իմաստ է ստացել և նշանակում է արտադրական փոքր միավոր (բրդագործական, օղակավար), ինչպես նաև՝ օլիսներական ջոկատի մի խումբ, օղակը: Իմաստային նման փոխանցումներով կազմված բառերի թիվը անընդհատ կարելի է մեծացնել, բայց նշածն էլ բավական է բառիմաստի փոփոխման այդ կողմը ցույց տալու համար: Այդ երևույթը մեր պայմաններում դարձավ լեզվի բառապաշարի զարգացման ու հարստացման հիմնական միջոցներից մեկը:

Դ. Փոխառություններ որպէս մեր լեզվի բառապաշարի
հարստացման կարեւոր միջոց

Հատինական ասացվածքը ասում է, թե իրին մասերն են հետեւում: Այդ ասացվածքի մեջ խոր իմաստ է գրված. իրօք, բոլոր նոր հասկացություններն ու նոր հասարակական երևույթները, կամ կուլտուրական նոր մշակութիւնները մի ժողովրդից մյուսին անցնելիս՝ իրենց հետ տանում են նաև իրենց անունը, որը յուրացնում ու ստիպանացնում է ավյալ ժողովուրդը՝ նոր հասկացությունը յուրացնելու հետ: Սակայն քաղաքակրթված երկրներում հաճախ այդ ընդհանուր օրինադասութիւնը խախտվում է. ավելի թույլ ժողովուրդները ձուլվելու վտանգին ենթարկվելու սպառնալիքի տակ չեն ընդունում որևէ նորմութիւն կամ օտար փոխառութիւն: Դրանով իհարկէ վնասում են իրենց լեզվի հարստացմանը և արագացնում ձուլման կամ ամեն անսակ ազդեցութեան ավելի ուժեղ ենթարկվելու պրոցեսը: Մեր պայմաններում փոխառութիւններէ հարցը միանգամայն նոր հիմունքների վրայ է գրված. այստեղ որևէ բանադատում կամ ստիպողական միջամտութիւն չկա, այլ կա ընդհանուր մոտեցում, որը բխում է ազգային լեզունիի զարգացման լինինյանստալինյան քաղաքականութիւնից: Այդ պատճառով էլ փոխառութիւնները պատմական անհրաժեշտութիւն դառնալով հանդերձ, չեն վնասում մեր ժողովուրդների լեզուների զարգացմանը, չեն մթադնում լեզուների ազգային առանձնահատկութիւնները: Հայոց լեզվի մեջ օտար բառեր են մտել նաև նախասովետական շրջանում: Այդ փոխառութիւնները իրենց որակով տարբեր են հզել մեր լեզվի զարգացման տարրերէ և տալիներում: Այդ տեսակետից ուշադրով են պարսկական փոխառութիւնները, որանց ազդեցութեան տակ մոռացվել են հայերեն շատ սովորական բառեր (ոն, սղիտակ, դույն, կարմիր, կապույտ, ճակատ, պատերազմ, դար, դատավոր և այլն): Այդ փոխառութիւնները, ընդհանրապէս առաջադիմական լինելով հանգերձ՝ որոշ դեպքերում հետադիմական են հզել: Ժամանակ է եղել, երբ մեր մոդովրդի բարձրագոյն հատվածներից շատերը այնքան են ենթարկվել թուրքերենի ազդեցութեանը, որ մոռացել են իրենց կուլտուրան ու մի քանի անգամ ավելի հարուստ լեզուն և խոսել են թուրքերեն: Այդպիսի ազդեցութիւններ իհարկէ հետագիւմական ու վտանգաւոր են և ոչնչով չեն օժանդակում ավյալ

Ժողովուրդի զարգացմանը Այդ փոխառությունների միջազգայնականության մասին խոսք լինել չի կարող:

Սովետական կարգերը մեր երկրում հաստատվելուց հետո, միջազգային բառերի գործածությունը դարձավ մեր լեզվի բառապաշարի հարստացման հիմնական միջոցներից մեկը: Այդ միջազգային բառերը և՛ իրենց յրակով, և՛ արժեքով տարբերվում են նախասովետական շրջանում մեր լեզվի մեջ մտած օտար բառերից: Նրանք առաջին հերթին կապված են մարքսիստական դադափարախոսության տարածման, բանվոր դասակարգի ձևավորվելուն շարժման ու պայքարի, մեր երկրում կատարված տնտեսական ու քաղաքական փոփոխությունների, սոցիալիստական շինարարության ու կուլտուրայի բուռն վերելքի հետ: Փորձենք ընդհանուր գծերով խմբավորել միջազգային այն բառերը, որոնք ռուսերենի աղբյուրով, կամ ռուսաց լեզվի միջոցով մտել են ժամանակակից հայերենի մեջ:

ՄԱՐՔՍ-ԼԵՆԻՆՅԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՀԵՏ

ԿԱԳԱՄԻ ԲԱՌԵՐ

Մարքսիզմի կրասիկները ոչ միայն ստեղծեցին աշխարհը հեղաշրջող ուսմունք, այլև մշակեցին կուռ, գիտական ճշգրտություն ու նպատակալացություն առտահայտող տերմինաբանություն, որը նոր դադափարախոսության տարածման հետ մտադ մեր լեզվի մեջ և այժմ հասկանալի է ժողովրդական լայն զանգվածներին: Այդ տերմինները գիտության և հասարակության զարգացման շատ ու շատ հարցեր ու երևույթներ են ընդգրկում. ահա այդ բառերից մի քանիսը՝ դիալեկտիկա, մատերիալիստ, դիալեկտիկական մատերիալիզմ, ուտոպիական սոցիալիզմ, մարքսիզմ-լենինիզմ, պրոլետարիատի դիկտատուրա, Լենինի—Ստալինի պոքտիա, իմտերմացիոնալ, Կոմունիստական Իմտերմացիոնալ, լենինյան-ստալինյան ազգային քաղաքականություն, Ստալինյան Կոնստիտուցիա, սոցիալիստական եկոնոմիկա, քեռրիա, մատերիալիստական մեքոդ, դիալեկտիկական մեքոդ, ռեվոլուցիա, էվոլուցիա և այլն:

Միջազգային ալգալիսի բազմաթիվ բառեր մեր լեզվի մեջ մտնելուց բացի, նոր դադափարախոսության հետ կապված բառակազմությունների անալոգիայով ստեղծված են բազմաթիվ

նոր բառակազմութիւններ, որինակ՝ կապիտալիստական շրջապատում, արտադրողական ուժեր, արտադրական հարաբերություններ, աշխատանքի գործիք, աշխատանքի առարկա, շահագործվող զասակարգ, շահագործող դասակարգ, կտպիտալիզմի մնացորդներ գիտակցության մեջ, վերացնել հակասությունները, համատարած կոլեկտիվացում, ռեվոլուցիոն տեսություն, պրակտիկական առաջ տեսություն կույր է, համասարակչություն տեսություն, ինքնահասի տեսություն և այլն:

Կոմունիստական սլարտիայի և նրա առաջնորդների՝ Լենինի և Ստալինի լեզուն իր խորը ազդեցութիւնն է թողել ոչ միայն սուս, այլև մեր մյուս ժողովուրդների, որոնց թվում նաև հայ ժողովրդի լեզվի վրա. նրանց դործածած մի շարք հասկացութիւններ կամ նույնությամբ մտել են մեր լեզվի մեջ. կամ նրանց անալոգիայով կազմվել նոր բառակազմակցութիւններ. Դրանցից շատերը թնավոր խոսք են դարձել և դործածվում են ժողովրդական լայն զանգվածների լեզվում, ինչպես՝ Головокружение от успехов «Գլխապտույտ հաջողութիւններից» (Ստալին), Гпилой* либерализм «Նեխած լիբերալիզմ» (Ստալին), Детская болезнь левизны «Զախուժյան մանկական հիվանդութիւն» (Լենին), Догнать и перегнать «Հասնել և անցնել» (Լենին), Кто кого «Ու՛ր ում» (Լենին), Лучше меньше, да лучше «Լավ է քիչ, բայց լավ» (Լենին) և այլն:

Նոր բառերից արդեն կազմվում են նոր բառակազմութիւնների ամբողջ փնջեր, ինչպես՝ պարտիա, կոմպարտիա, պարտակտիվ, պարտկոմ, պարտբարո, պարտստած և այլն: Միևնույն բանը կարելի է ասել նաև անալոգիական և նույնական բառակազմութիւնների մասին. ինչպես՝ փողբուրք, փղմինիմում, փղկոմիսար, փղկոմ, փղկրթություն, փղափական խմբագրություն, և այլն:

ՌԵՎՈԼՈՒՅԻՈՆ ԵԱՐԺՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱՅ ԲԱՌԵՐ

Բանվոր զասակարգի պայքարի հետ կապված որոշ բառեր մտել են մեր լեզվի մեջ նաև սովետական կարգերը մեր երկրում հաստատվելուց առաջ, սակայն այդ փոխառութիւնները նույնպես և՛ իրենց որակով, և՛ քանակով տարբերվում են այն փոխառութիւններից, որոնք կատարվել են սովետական պայմաններում: Միայն սովետական երկրում են սկսել լայնորեն տա-

լաճվել ըստ իր դասակարգի ուսուցիչին պայքարի հետ կապ-
ված բառերը, որովհետև միայն այդ ժամանակ այդ նոր դադա-
վարները իրենց բոլոր կողմերով ու արտահայտություններով
հասկանալի դարձան մեր ժողովրդի լայն դանդաղածներին: Ահա
այդ բառերից մի քանիսը՝ ազիտացիա, ազիտատոք, բոլիտո,
ավանգարդ, բրիգադ, դեկրետ, դեմոստրացիա, դեմակրատ, դիկ-
տատուրա, դեսպոտ, դեսպոտիզմ, եկոնոմիստներ, եվոլուցիա,
քեոքիա, իմտերնացիոնալ, իմտերնացիոնալիզմ, իմտիքնեցիա, լե-
զալ, լիկվիդացիա, լիկվիդատոր, կոմպիլացիա, կոմիսար, կոմու-
նա, կոմիսոն, կոմպարտիա, կոմտրոնկուլուցիոններ, մամիֆիստ, մի-
նիմուս, մաքսիմուս, պրոպագանդա, պրոպագանդիստ, պրոկլա-
մացիա, ռալուցիա, ռեակցիա, սոցիալական, ցենտրիզմ, ցենտ-
րիստներ, օտզովիստ, օրթոդոքս, օպորտունիստ, օպտիմիստ,
օպոզիցիա, օպերացիա, օրգանական, փոքրացիա, փոքրալ, փոքր-
ցիա և այլն:

Նշված և շատ այլ բառեր իրենց գերակշիռ մեծամասնու-
թյամբ եվրոպական բառեր են, բայց արդեն դուրս եկած եվրո-
պական շրջանակներից և ուստի լեզվի միջոցով միջադատյին դար-
ձած՝ իրենց նոր առումով: Այդ բառերից շատերը, որպես նոր
փոխառություն, անցել են այն լեզուներին, որոնցից փոխառնե-
ված են եղել: Կոմունա բառը, օրինակի համար, այժմ ոչ մի
եվրոպական լեզվում չի գործածվում իր սկզբնական իմաստով՝
այդ բառը առաջացել է միջին դարերում և նշանակել է «առե-
սորա-արհեստավորական համայնք», հասարակ բնակչություն:
Փարիզյան կոմունայի շրջանում նա նոր առում ձեռք բերեց-
սկսեց նշանակել «Փարիզի ուսուցիչն ինքնավարություն»: Միանգամայն նոր իմաստ ստացավ այդ բառը մեր պայմաննե-
րում և այդ նոր իմաստով էլ մտավ եվրոպական շատ ժողովուրդ-
ների լեզուներին մեջ: Այդ բանը կարելի է ասել նաև վերոհի-
շյալ և բազմաթիվ այլ բառերի մասին: Մեր լեզվի մեջ մտած եվրո-
պական բառերի մեծ մասը նոր իմաստով են գործածվում: Դրանք
առաջ գործածվել են եվրոպական մեկ կամ մի քանի ժողովուրդ-
ների լեզուներում և միջադատյին չեն եղել՝ այդ բառի լայն
առումով: Այժմ ուսաց լեզվի շնորհիվ նրանք դարձել են մի-
ջադատյին բառեր և աշխարհի բոլոր լեզուների մեջ են մտել
որպես հասարակական նոր իրադրություն կամ հասկացողու-
թյուններ պատկերող բառեր:

ՄԻՋՈՋԻԱՅԻՆ ՆՈՐ ԿԱԶՄՂԱՄ ԲԱՌԵՐԻ ՄՈՒՏՔԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Մեր երկրի ժողովուրդների լեզուների մեջ մտել են միջազգային շատ բառեր, բայց զրանք իրենց էությամբ միջազգային չեն եղել, որովհետև իսկական ինտերնացիոնալիզմը ստեղծվել է մեր երկրում սոցիալիստական հարաբերությունների հաստատվելուց հետո։ Առաջներում ժողովուրդները փոխ էին առնում լատինական, հունական, ֆրանսիական, ռուսական, անգլիական և այլ բառեր, որոնք ոչ թե միջազգային էին, այլ՝ լատինարանություն, հունարանություն, կամ ռուսարանություն։ Այժմ միանգամայն տարբեր բովանդակություն ունեն այն փոխառությունները, որոնք մեր լեզվի մեջ մտել կամ մտնում են ռուսերենի միջոցով։

Սոցիալիստական հարաբերությունները ոչ միայն փոխեցին եվրոպական դանազան լեզուներից մեր լեզվի մեջ մտած բառերի իմաստը, այլև ստեղծեցին բազմաթիվ նոր բառեր, որոնք սամբոլջ աշխարհի լեզուների մեջ մտան որպես նոր հարաբերությունների հետևանքով առաջացած նոր հասկացություններ արտահայտող բառեր. սովետ, բոլշևիկ, բոլշևիզմ, կոլտոզ, տովտոզ, կոմսոմոլ, սովետական սեպարալիկա, կոմունիստական պարտիա, սոցիալիստական եկոմունիկա բառեր ու բառակապակցությունները միայն մեր լեզվում չեն, որ այնքան հասկանալի ու գործածական են։ Նրանք մտել են բոլոր ժողովուրդների լեզուների մեջ և զնալով նրանց միջազգային դերը ավելի ու ավելի է աճում, որովհետև ավելի է ուժեղանում ռուսաց լեզվի ազդեցությունը ոչ միայն մեր երկրի ժողովուրդների, այլև սամբոլջ աշխարհի ժողովուրդների լեզուների վրա։ Ռուսաց լեզուն արդեն դարձել է այն անսպառ շտեմարանը, որից օգտվում են աշխարհի բոլոր լեզուները։ Գնալով ավելի ու ավելի է հզորանում Սովետական Միությունը և դրան զուգընթաց ուժեղանում է ռուսաց լեզվի ու կուլտուրայի ազդեցությունը։

ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԻ ՆԵՂԱՑՈՒՄ, ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ

Բուրժուական լեզվաբանությունը չկարողացավ լրիվ չափով քաղաքային բառերի իմաստի փոփոխման պատճառները։ Նրա ֆերկայացուցիչները լավագույն դեպքում նկարագրում էին բա-

ի իմաստի տարրեր փոխանցումները, կապելով այդ պատմական-
 որոշ տվյալների հետ, օրինակ՝ սոցիոլոգիական դպրոցի ներկա-
 յացուցիչ լեզվաբան Վանդրիեսը քննում է բառի իմաստի փո-
 փոխման տարբեր տեսակները, ուսումնասիրում է իմաստի փո-
 փոխման ընթացքը, միանգամայն ճիշտ կերպով նշում, որ բառի
 իմաստը չի կարող միշտ անփոփոխ մնալ, բայց այդ բոլորով հան-
 դերձ, — չի կարողանում ցույց տալ բառի զարգացման ընդհանուր
 օրինաչափությունները, դանիլ բառի իմաստի փոփոխման պատ-
 ճառները: Նա բառիմաստի փոփոխումը կապում է հասարակա-
 կան գիտակցության հետ: Բայց այդ գիտակցությունը ժամա-
 նակից ու տարածությունից զուրս է համարում: Նա չի կարողա-
 նում տեսնել, որ բառերի իմաստի զարգացման կամ փոփոխու-
 թյան օրինաչափությունների ընդհանուր համակարգը՝ վերջին
 հաշվով, պայմանավորված է հասարակական-տնտեսական հարա-
 բերությունների զարգացման աստիճանով: Այդ բանը կարելի
 է դիտել բոլոր ժամանակների և հասարակարգերի մեջ: Այդ երե-
 վույթը ակնբախ կերպով երևում է նաև մեր պայմաններում:

Շատ միջադպիսին բառեր մեր երկրում կատարված փոփո-
 խությունների հիման վրա փոխեցին իրենց իմաստը և մասնա-
 գիտացան. այդ բառերից են, օրինակի համար, պիռները, որով 17-րդ
 դարում Ֆրանսիայում անվանվում էին միայն շոգածական ճա-
 նապարհ պատրաստող բանվորները: Ամերիկայի հայտնադո-
 ծումից հետո «պիոներներ» կոչվեցին առաջին ճանապարհաշի-
 նարարները Ամերիկայում. 18-րդ դարի վերջերից, որոշ չափով
 ընդարձակվեց այդ բառի իմաստը և նշանակեց ընդհանրապես
 «նոր դորձ սկսող», իսկ սովետական պայմաններում այդ բառի
 իմաստը նեղացավ, մասնագիտացավ: Տեմպ լատիներեն բառ է
 (tempus) և նշանակել է «ժամանակի որոշ միավոր»: Իսկ մեզ
 մոտ նոր իմաստ է ստացել (համեմատիր. տեմպերը ուժեղացնել,
 տեմպը թուլլ է, զարգացման տեմպը և այլն): Մեֆ Ֆրանսերեն-
 chef բառն է, որը նշանակել է «գլխավոր», իսկ այժմ մոտավա-
 րապես նշանակում է «խնամակալություն, խնամաբարձություն»,
 այդ բառով կազմված են զանազան բառաբարդություններ, որոնք
 միայն սովետական հարաբերություններով են պայմանավորված.
 օրինակ՝ շեֆգյուլ, եմբաշեֆ, շեֆուքյունը վերցնել և այլն:

Բազմաթիվ այլ բառեր իրենց մասնագիտական առումներով
 ուսերենից մեր լեզվին են անցել, օրինակ՝ ասպիրանտ, ակտի-

վիստ, ազդումիմիմում, տեխնիմիմում, ուտիլ, ալիմենտ, կեղնումիա
և այլն:

Սակայն այստեղ պետք է նշել բառիմաստի փոփոխման,
մասնագիտացման մի կտրեկոր երևույթ ևս. ռուսերենի ազգեցու-
թյամբ նեղանում, մասնագիտական իմաստ են ստանում նաև
հայերեն շատ բառեր. օրինակ՝ ակտմանետ, ակտմարդ, ակտմարտ,
դիտմաց, դիտում, կսկտմակալում, զրաեհաեար, խորատույզ, վոյ-
րատաց, իմմագմաց և այլ բազմաթիվ բառեր, որոնք մասնագի-
տական նոր առումներ են ստացել վերջին տարիներին: Այս
երևույթը, պետք է ասել, իր բովանդակությամբ նոր է մեր լեզ-
վաշինարարության մեջ: Առաջներում նույնպես բառերի մաս-
նագիտացում էլ կատարվում, սակայն հաճախ չէր ընդունվում
բոլորի կողմից, կամ էլ շատ հեղհեղուկ էր լինում. մինչդեռ մեր
իրականության մեջ միանգամայն հակառակ դրությունն է իշ-
խում, որովհետև մեր լեզվի զարգացումը կատարվում է մեր ժո-
ղովրդի լայն զանգվածների ու պետության գործոն մասնակցու-
թյամբ:

ՄԱՍՆԱՅԻՏԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ ՆԵՐՀՈՍԱՆՔԸ ՄԵՐ
ԼԵԶՎԻ ՄԵՋ

Սոցիալիստական հասարակարգում վերացան արտադրողա-
կան ուժերի և արտադրական հարաբերությունների միջև եղած
հակասությունները, արտադրական հարաբերությունների հիմքը
դարձավ արտադրության հանրային սեփականությունը, որի
հետևանքով ոչ միայն փոխվեցին զանազան երևույթների նկատ-
մամբ մեր ազգաբնակչության ունեցած ըմբռնումներն ու հաս-
կացությունները, այլև փոխվեց արտադրության զարգացման
տեմպը, չտեսնված արագությունը վերակառուցվեցին արդյունա-
բերությունն ու գյուղատնտեսությունը, արագ կերպով զարգա-
ցան գիտության ու տեխնիկայի բոլոր ճյուղերը: Այդ բոլորի
հետևանքով հայոց լեզվի մեջ մտան մեր երկրի արդյունաբերու-
թյան ինդուստրացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման,
գիտության զանազան ճյուղերի զարգացման հետևանքով կազմ-
ված մասնագիտական բազմաթիվ նոր բառեր ու բառակազմու-
թյուններ, ստեղծվեցին տերմինաբաններ, տպագրվեցին բառա-
բաններ, մշակվեց գիտության ու փոխոսկայության լեզու,

որը այժմ արդէն ընդունակ է արժանայտելու ամենաբարդ ու ամենանուրբ հասկացություններն անգամ:

Տնխիկացի ու գիտության զանազան ընտելւածներին վերաբերող բառերը ստեղծվել են մեր լեզվում կամ նույնական բառակազմությունների միջոցով, կամ կազմվել են ռուսերենի անալոգիայով: Սակայն և՛ նույնական, և՛ անալոգիական բառակազմությունների ժամանակ նկատի են առնված մեր լեզվի դարգացման հեռանկարները և ժողովրդական լայն զանգվածներին հասկանալի լինելու հանգամանքը: Մասնագիտական այնպիսի նույնական բառեր, ինչպիսիք են՝ ագրեգատ, ավտո, ավտոբազա, ավտոտրանսպորտ, բրոնյա, գազ, գնմաւոր, դեմոկրատիա, էլեկտրիֆիկացիա, էլեկտրո, կինո, կինեմատոգրաֆ, կինոֆիլմ, կինոօպերատոր, կոնֆիցենստ, կամբայն, կամբիմատ, ռադիո, ռադիոֆիկացիա, ռադիստ, ռադիոգրաֆիա, ռադիոգրամ, ստանդարտ, սուլֆիդին, ստաբիլ, տեխնիկա, տրակտոր, տրակտորիստ, տանկ, տորպեդ, ֆոնո, ֆալստուրա, ֆասֆոր և այլն, հասկանալի են մեր ժողովրդական լայն զանգվածներին, որովհետեւ այժմ գիտությունը դուրս է եկել իշխող սահմանափակ մարդկանց շրջանակներից և դարձել է համաժողովրդական սեփականություն:

Սակայն մեր լեզուն կանգնած կլինի անհասկանալի դառնալու վտանգի առաջ, եթե բառեր փոխառնելու հետ չսահմանեն սեփական մասնագիտական տերմինները: Դրանք, ինչպես նշել ենք, մեծ մասամբ ստեղծվում են ռուսերենի անալոգիայով, սակայն այնպես, որ չհակասեն մեր տնտեսության ու գիտության զարգացման ու ժողովրդի լայն զանգվածներին մատչելի դառնալու սկզբունքներին:

Այդպիսի անալոգիական բառակազմություններ են՝ ավտոմեքենա, ամբուսիչ, արտածում, ավտոկայան, մեքենատրակտորային կայան, բրիգադավար, գործարանային ցեխ, գործարկում, գյուտարարություն, գյուտարար, գերարտադրություն, գերակատարել, գերծանրաբեռնվածություն, գծանալ, գծագիր, գծագրություն, դաշնաբաց, զինտրիբունալ, զրադեպատ, զրանագնաց, էլեկտրակայան, էլեկտրաբարձ, բերակատարել, բերարտադրություն, կոնցուրս, խոզովակալում, հերձել, մեկուսիչ, մոլառորգո, պտուտակ, քառուցում, ռադիակայան, ռադիակա տրիբունալ, ռադիոարարախոս, ռադիոընդունիչ, սեյսմիկ կայան, վիճակագրություն, վիճակագրական բաժին, տարանցիկ, տարօրոքյան, տարաբեղաձուլ, փակոց,

իսկիչ, փայտամշակում, փարամրիկ, փարակոթող, օդերևութաբանական կայան, օդաչու, փոստոնկար և այլն:

Մեր լեզվի հարուստ բառապաշարը հնարավորութուն է տալիս կազմելու գիտության ու տեխնիկայի բոլոր ճյուղերին հատուկ իրողություններն արտահայտող առանձին բառեր, սակայն այս դեպքում էլ պետք է ղեկավարվել լեռնայան-ստալինյան ազգային քաղաքականության պահանջներով և մեր լեզուն չդարձնել ամուլ, որն է աղքատություն չընդունող և դարգացման հեռանկարները կորցրած լեզու: Առանց որն է կասկածանքի պետք է փոխառնել զիտական ու տեխնիկական բոլոր այն բառերը, որոնք նոր հասկացությունների ու բմբռումների հետ են կապված և նոր իմաստներ են արտահայտում:

ՍՊՈՐՏԱՅԻՆ ԿՈՒՆՏՈՒԲԱԶԻ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ
ՏԱՐԱԾՈՒՄԸ

Մեր երկրում առանձնահատուկ դարկ արվեց սպորտային կուլտուրայի զարգացմանը: Սովետական Միությունը այս բնագավառում էլ անցավ կապիտալիստական երկրներից: Սպորտային մի շարք ճյուղերի հայրենիք Անգլիան նույնիսկ իր դիրքերը զիջել է Սովետների երկրի մարմնամարզիկների առաջ: Սպորտի զանազան տեսակների այդպիսի տարածումը պետք է հանգեցնի նաև սպորտային միջազգային բառերի տարածմանն ու մասսայականացմանը:

Սպորտային մի շարք բառեր լայնորեն սկսեցին գործածվել նախ առանձին մարմնամարզիկների, ապա ամբողջ ժողովուրդների մեջ: Ալպինիզմ, ալպինիստ, գոլ, գրոսմայստեր, բեկ, բայմ, մարզ, մոտոսպորտ, կամանդո, կրոս, կրոսվորդ, չեմպիոն, չեմպիոնատ, ռեկորդ, ռեկորդսմեն, սպարտ, սպարտսմեն, տեմիս, տեմիսիստ, տուրմիր, տուրիստ, շախմատ, ֆորվարդ, ֆուտբոլ, փուտբոլիստ, ֆիմիշ և այլ սպորտ բառեր վաղուց է, ինչ մտել են մեր դրական ու խոսակցական լեզվի մեջ:

Այստեղ հաճախ մրցում են միջազգային և ազգային բառերը, բայց տեղեկեցը տառում է գեպի միջազգային դարձված բառերի հաղթանակը: Այդ պրոպեսը արագանում է մանավանդ այն բանի շնորհիվ, որ Սովետական Միության ու արտասօմանյան երկրների սպորտսմենների հանգիստումներն ավելի ու ավելի են հաճախակի դառնում, իսկ Սովետական Հայաստանը,

որպես մեր Միութեան մի մասնիկը, այդ ընդարձակ հարաբերություններից հետո էլ կանգնած և գործոն մասնակցություն ունի մեր երկրում սպորտային կուլտուրայի զարգացման մեջ։ Այժմ Հայաստանում գործում է ֆիզկուլտուրայի տասնձին խնամրտուտ, որը մշակում ու հիմնավորում է ֆիզիկական կուլտուրայի զանազան տեսակներին վերաբերող տերմիններ և տարածում մեր Կարգնականության լայն խավերի մեջ։

Այսպիսով, մեր կյանքի բոլոր բնագավառներում էլ մենք նկատում ենք ուժեղ առաջխաղացումներ և դրանց հետ կապված նոր բառերի ու հասկացությունների մուտքը մեր լեզվի մեջ։

ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսերենից մեր լեզվին անցած միջազգային բառերի արտասանության հարցը քննելիս մենք առաջին հերթին նկատի ենք ունենում շեշտադրությունը, ապա՝ մի քանի տառերի արտասանությունը։

Հայերենի շեշտադրությունը խստորեն տարբերվում է ռուսերենի շեշտադրությունից։ Հայերենում շեշտը կայուն է, նադրվում է բառի վերջին վանկի վրա, եթե այդ վանկի ձայնավորը ը է։ Երբ բառի վերջին վանկի ձայնավորը ը է, օրինակ՝ ֆաղցր, քանձր, մեղր և այլն, շեշտը դրվում է նախավերջին վանկի վրա։ Բացառություն են կազմում նաև այն կցական բաղադրությունները (գլխավորապես հարցական դերանուններն ու շարկապները), որոնց մեջ առաջին բառի իմաստը ավելի է ընդգրծվում։ Օրինակ՝ նույնպես, նույնիսկ, նախքան, նամանավանդ, երբևէ, ինչպիսի, որտեղ, ինչպես և այլն։ Հայերենի անխախտելի շեշտադրությունը, սակայն, ռուսերենի ազդեցությամբ որոշ փոփոխության է ենթարկվել՝ օտար բառերում։ Ռուսերենից վերցրած բառերը, որպես ընդհանուր կանոն, եթե գործածվում են ուղիղ ձևով, պահպանում են իրենց շեշտադրությունը, օրինակ՝ անակիդ, անակիդիա, լեմոնտով, կոնստրուկցիա, մալոբրկա, պոլիտոգիա, Պոլշին, ռեցենզիա, ռեֆորմացիա, Սարատով, Սևաստոպոլ, սինթեզ, ստատիստիկա, Ուլանովա, տերմին, օպերա, ֆիզիկա, ֆիզիոգ, քիմիա, ֆորմացիա և այլն։ Երբ օտար կամ ռուսերեն բառերը գործ ենածվում թեքված ձևով, ենթարկվում են հայերենի շեշտադրության օրենքներին, այսինքն՝ շեշտը դրվում է նրանց վերջին վանկի վրա։ Օրինակ՝ օպերայում, անակիդներով, Սարատովում, տեխնոլոգները, ֆիզիկայից և այլն։

Ռուսերենում շեշտից առաջ ընկած օ-երը արտասանվում են ա կամ ալելի մոտենում են ա-ին, քան օ-ին: Այդ բառերը հայերենում տառադարձվում են ո-ով (բառամիջում), բայց հաճախ պահում են ռուսական արտասանությունը: Այդպիսի դեպքերում լավ կլիներ, որ նրանք արտասանեին ո-ով, օրինակ՝ ոչնչով չի տուժի հետևյալ ռուսական բառերի արտասանությունը, եթե զրանք արտաբերենք՝ Գոնչարով (և ոչ՝ Դանչարով), Բորոդինո (ոչ՝ Բարադինո), Դորբոլյուբով (ոչ՝ Դարբալյուբով), Կոմունիստ (ոչ՝ կամունիստ), Կոնտինգենտ (ոչ՝ կանտինգենտ), Մոսկվա (ոչ՝ Մասկվա), մոտոր (ոչ՝ մատոր), պիոներ (ոչ՝ պիա-ներ), պրոգնոստ (ոչ՝ պրագնոստ)՝ պրոսպեկտ (ոչ՝ պրասպեկտ), պրոֆեսիա (ոչ՝ պրաֆեսիա), Օդեսա (ոչ՝ Ադեսա), օվադիա (ոչ՝ ավադիա) և այլն:

Օտար բառերի վերջին վանկերի օ-ն հայերենում հաճախ արտասանվում է մոտավորապես ը. օրինակ՝ ղերհէտըր, ռեդոնատըր, պրոֆեսըր, կոմպոզիտըր, կոմպրեսըր և այլն: Այդ արտասանությունը ոչ հայերենին է հարազատ և ոչ էլ ռուսերենին, թեև կատարվում է՝ ռուսերինի ազդեցությամբ: Այդ պատճառով էլ ամեն կերպ պետք է պայքարել նման երևույթների, ինչպես նաև որոշ բաղաձայնների փափկացման տենդենցների դեմ, որովհետև զրախան հայերենին խորթ է նաև բաղաձայնների քմայնացումը:

Ռուսաց լեզուն գնալով ավելի ու ավելի է սաբաժվում, նա մեր մայրենի լեզվի հետ միասին անհրաժեշտություն է դարձել ամբողջ ինտելիգենցիայի համար: Եվ որքան որ տարածվում ու մասսայականանում է ռուսերենը, այնքան ուժեղ է դպացվում ռուսերենի նպաստող դերը մեր կուլտուրական մակարդակը բարձրացնելու մեջ:

ՄԻ ՇԱՐՔ ԱՅԼ ՆՈՐՄՈՒԾՈՒԹՆԵՐ

Ժամանակակից հայերենը նախասովետական շրջանում, ինչպես ցույց ենք տվել մեր այս աշխատությունից հերկորդ մասում, դարգանալու հեռանկարներ չունի. նա չէր կարող դարգանալ Արևմտյան Հայաստանում, որովհետև սուլթանական Թուրքիայի գերիշխանության տակ ապրող հայերը ընդհանրապես իրենց գոյությունը անհետ կորչելու վտանգի տակ էին դրված, իսկ ցա-

քական Ռուսաստանի հայերը աճում ու զարգանում էին համեմատաբար արագությամբ՝ վիճակում, բայց ցարիզմի արգելափակման պայմաններում՝ փոքր և արտականական չունեցող ժողովուրդների կուլտուրան ու լեզուն չհղափայտվեցին և ուսականացնելու քաղաքականությանը ենթակա:

Սովետական կարգերը վերացրին մեր լեզվի առաջնության դեմ կանգնած խոչընդոտները և նոր հնարավորություններ ստեղծեցին նրա անկաշկանդ զարգացման համար: Սակայն այդ ստեղծված պայմանները միայն չէին կարող կարճ ժամանակում վերացնել նախասովետական շրջանում մեր լեզվի և Ռուսաստանում իշխող ժողովուրդների լեզուների մեջ ստեղծված անհավասարությունները: անհրաժեշտ էր, որ առև ժողովուրդը իր օգնություն ձեռքը մեկներ մեզ և իր օրինակով մեր լեզուն դնարի կատարը վարեր: Այնպես էլ կատարվեց: Մեր պետությունը հայկական կուլտուրայի ու լեզվի զարգացմանը ուղղություն տալով՝ առև ժողովրդի օժանդակությամբ ստեղծեց այն բոլոր հնարավորությունները, որոնք անհրաժեշտ էին մեր երկրի աշխատավորության կուլտուրական մակարդակը բարձրացնելու և մեր կուլտուրան առաջ մղելու համար: Նա միևնույն ժամանակ նկատի ունենալով՝ առևական կուլտուրայի և լեզվի զարգացման քաղաքականում կատարված աշխատանքը և կուտակված փորձը՝ դրականորեն լուծեց մի շարք հարցեր, որոնք վաղուց ի վեր առաջ էին քաշված, բայց վերջնականապես չէին լուծված: Այդ հարցերից առաջինը՝ հայերենի ուղղագրությունն էր, որը մոտ երկու դար անընդհատ հուղել էր շատ հայ մտավորականների Ռուսաց լեզվի ուղղագրության մեջ կատարված բարեփոխումները նկատի ունենալով՝ մեր պետությունը հաստատեց նոր, բարեփոխված ուղղագրություն, որ անհամեմատելի չափով հեշտացրեց մայրենի լեզվի ուսուցման գործը: Այդ ուղղագրությունը որոշ բարեփոխման ենթարկվեց 1940 թվին, որով ավելի մասնակցի դարձավ մեր ժողովրդական լայն զանգվածներին և վերացվեց այն ընդհատվածությունը, որ 1922 թվի ուղղագրական ռեֆորմի հետևանքով ստեղծվել էր մեր լեզվի հին ու նոր շրջանների միջև:

Կենսագրության ընդհանուր նորմաների սահմանումը նույնպես սրկառնաշանակություն չունեւր մեր լեզվի զարգացման համար: մասնավորապէս որ կենսագրությունը մեր լեզվի ամենահեղինակ ընտելացողն է եղել: Այդ նորմաների մշակման ժամանակ նկատի է ունեցվել նախ այն, որ կենսագրության այդ նորմա-

ները ամբողջապէս չհակադրվին հայ առաջավոր և դասական գրողներին դործածած կետադրութեանը. երկրորդ՝ առանձին դժ- վարութեան չներկայացնեն ուսուցման ժամանակ և երրորդ՝ կարողանան, եթե ոչ հիմնովին, դոնե բավարար չափով պարզ ու արտահայտիչ դարձնել գրավոր լեզուն: Այդ միջոցառումների ժամանակ հաշիւն են աւելած ուսուցիչ լեզվի կետադրութեանը և այդ բնագավառում Սովետական Ռուսաստանում կատարված աշ- խատանքները:

Առանձնահատուկ նշանակութեան ունեցաւ մեր լեզվի հա- մար տեղմանաշինարարութեան հիմունքների սահմանումը, հա- յոց լեզվի պատմութեան մեջ առաջին անգամ մեր լեզվի տեղմանա- շինարարութեանը գիտական հիմունքների վրա դրվեց: Տեղմա- նաշինարարութեան հիմքում դրվեցին Համ Կ(Բ)Պ-ի ազդային քաղաքականութեան և ձեռք ազդային ու բովանդակութեամբ սոցիալիստական կուլտուրայի հետագա զարգացման ու ծաղկման սկզբունքը, ինչպէս նաև ՍՍՌՄ ժողովուրդների լեզուների, և առաջին հերթին ուսուցիչ լեզվի, տեղմանաշինարարութեան եր- կարամյա պրակտիկան:

Ռուսերին ազդեցութեամբ սովետահայ լեզվի մեջ կատար- ված տեղաշարժները ավելի լայն շրջանակներ են ընդգրկում, նրանք տարածվում են նաև մեր լեզվի ձևաբանութեան, շարա- հյուսութեան և նույնիսկ ուղղակիութեան վրա: Այդ բաղմամբով փոփոխութեաններից նշենք միմիայն մի քանիսը.

ա) Հատկացուցիչի հետադաս գործածութեան, հայոց հին լե- ղուն՝ գրաբարը հատկացուցիչներն ու որոշիչները գործածելու մեջ ավելի ազատ է. եղել է, Իսկ այդ ազատութեանը, որը անվի- ձելիորեն լեզվի առավելութեանն է, ժամանակակից հայերենին հատուկ չի եղել: Ռուսերենի ազդեցութեամբ վերջին շրջանում մեր գրական լեզվում սկսեցին գործածվել հետադաս հատկացու- ցիչներ, որոնք այժմ այնքան են ընդհանրացած, որ դժվար է կարծել, թե ժամանակակից հայերենի համար դա արտասովոր երևույթ է եղել. օրինակ՝ ես տեսա մկարմերը Նսայամի; որը Հայ- րեմական Պատերազմի ընթացքում շատ արժեքավոր գործեր է տը- վել:

Այս նախադասութեան մեջ շեղանքները բառը դրված է հաա- կացուցիչից առաջ, որովհետև օր ստորագասական շարկապը վերա- րերում է Նսայամին և ոչ թե մկարմերին: Այդպիսի նախադասու- թեաններ շատ են հանդիպում առանձնապէս թարգմանական

դրականության մեջ, սակայն պատահում են նաև մեր որոշ բա-
նաստեղծների գործերում: Այդ հանգամանքը խոսում է թարգմա-
նական այդ միջոցի կենսունակության և լայնորեն մասսայակա-
նություն հեռանկարների մասին:

բ) Բայափոխառություններ. հայոց լեզվում բայափոխառու-
թյուններ կատարվել են 19-րդ դարի երկրորդ կեսերին, բայց
դրանք չեն մասսայականացել և մեր լեզվի համար խորթ են համար-
վել: Սովետական կարգերում մեր լեզուն օտարազգի բայեր փոխ
առնելու հնարավորություն է ստանում: Դրանով վերանում են
նկարագրական ձևով որոշ օտար բայեր թարգմանելու անհար-
մարությունները: Այժմ նախապատվությունը տրվում է մարի-
լիզացման, օկուպացման, կոորդինացման ձևերին, և ոչ թե այդ բա-
ռերի նկարագրական կամ շարադրական միջոցին: Բայափոխա-
նորդության այս նոր տեխնիկան, որը կատարվել է ռուսերենի
ազդեցությամբ, նոր աստիճանի է բարձրացրել մեր լեզվի բա-
ռակազմական հնարավորությունները: Այդ նորույթը, որ արդեն
թափանցել է խոսակցական լեզվի մեջ, վկայում է նաև մեր լեզ-
վի կենսունակության ու ճկունության մասին, որոնք ավելի
ակնբախ են դառնում մեր տնտեսության ու կուլտուրայի զար-
գացման, մեր երկրի ավելի հզորացմանը զուգընթաց:

գ) Միջազգային մի քանի ածանցների մուտքը հայերենում.
ռուսերենի միջնորդությամբ միջազգային մի շարք ածանցներ
արդեն մտել են մեր լեզվի մեջ և գնալով ավելի ու ավելի են
արմատանում: Այդ ածանցների մեծ մասը, թեև որպես ածանց
զգացվում է, բայց զեռես հայերեն բառերի հետ չի գործածվում.
նրանցից կարելի է նշել հետևյալները.

-ացիա, -իզացիա. այս ածանցը, թեև լատինական ծագում
ունի, բայց մեր լեզվի մեջ մտել է ռուսական արտասանությամբ
և գործածվում է միայն մի շարք օտար բառերի հետ: Ինչպես՝
կոլեկտիվիզացիա, ռեցիռմալիզացիա, մոդեռնիզացիա և այլն: Նվ-
րոպական լեզուներում նշված ածանցը այդ արտասանությամբ
չի գործածվում:

-իստ. Այս վերջածանցը եվրոպական մի շարք լեզուներ-
ում շատ գործածական է և ավելացվում է միայն միջազգային
բառերին, ցույց տալով որևէ ռուսումնաբերական, կամ ռուսե-
րադրական պատկանող անձ: Հայերենում այդ ածանցը սկսել
է լայն գործածություն գտնել սոցիալիստական ռեվոլյուցիայից

Հետո նա մեր լեզվում նույնպես կցվում է գլխավորապես միջազգային բառերին՝ միջո միևնույն իմաստով, ինչպես՝ մարքսիստ, կոմունիստ, մեքսիկա, սոցիալիստ, օւտոպլիստ, ամարիստ և այլն։ Միջազգային այն բառերը, որոնք վերջանում են ամասնավորով, երբ ընդունում են իստ վերջածանցը, կորցնում են իրենց վերջին ձայնավոր ան։

-իզմ. Այս ածանցը ուսանողներից մեր լեզվին է անցել դեռևս նախառևոլյուցիոն շրջանում. բայց այնքան լայն գործածություն չի ունեցել և հայ ժողովրդի լայն զանգվածներին հասկանալի չի եղել, որովհետև այդ ածանցով կազմված բառերն էլ հասկանալի չեն եղել մեր ժողովրդի լայն խավերին։ Սոցիալիստական կարգերը մեր երկրում հաստատվելուց հետո մեր լեզվին մեջ մտան բազմաթիվ նոր բառեր, որոնք արտահայտում էին նոր հասկացություններ։ Այդ բառերի այն մասը, որը վերացական հասկացությունների, ուսմունքների, հասարակական, քաղաքական, գիտական դոկտրինաների և ուղղությունների անունն է, մեծ մասամբ կազմված է լինում -իզմ վերջածանցով. ինչպես՝ բոլշևիզմ, սոցիալիզմ, կոմունիզմ, հումանիզմ, իդեալիզմ, օպտիմիզմ և այլն։ Հետագայում մեր լեզվում այնքան արժանատիան ուսանական և եվրոպական ծագում ունեցող այս բառերը, որ -իզմ վերջածանցը սկսեցին գիտակցել ոչ միայն մեր մտավորականությունը, այլև մեր աշխատավորական հոծ զանգվածները։

-իկ (նիկ) վերջածանցը ուսանողներում ցույց է տալիս որևէ գործունեություն, արհեստով զբաղվող անձը. ինչպես՝ ударник, пожарник, частник, путник, курортник, дошкольник, шкурник, художник, колхозник և այլն։ Այդ ածանցը ուսանողներում կարող է նաև արտահայտել առարկայի և բառի միջև եղած հարաբերությունը. ինչպես չայնիկ, կոփեյնիկ և այլն։ Այդ ածանցը իր այդ իմաստներով հանդիպում է նաև մեր լեզվում. օրինակ՝ կալսոգնիկ, կուլտուրնիկ, կուրսորտնիկ, ֆիզկուլտուրնիկ և այլն։ Ըստ երևույթին հայերեն քեյնիկ բառի մեջ -նիկ նույն ածանցն է և կազմվել է ուսանողների ակզեցությունից։

Ռուսերենի ազգացություն և հայերեն մի քանի ածանցներ նոր իմաստ ու լայն գործածություն են ստացել. օրինակի համար հայերեն գեր- և քեր- ածանցները նախասովետական շրջանում այնպիսի լայն գործածություն չունեին մեր լեզվում, օպիայն այժմ այդ նախաածանցներով կազմված են բազմաթիվ բա-

ներ, որոնք զգալի չափով ընդլայնել են այդ անձանցների իմաստը, ինչպես՝ գերակատարել, գերարտադրություն, գերածախս և այլն։ Այս բաներում գեր նշանակում է հզորադանցելը, մինչդեռ առաջներում այդ իմաստը նա չի ունեցել։ Թեր- նախածանցը համապատասխանում է ռուսերեն недо- անցին, որը նշանակում է չշալարակել, հեխատ թողնել։ Այդ իմաստով էլ նա այժմ գործածվում է հայոց լեզվում։ Ինչպես քերականում, քերակատարում, քերարտադրում և այլն։

Վերջին շրջանում լայնորեն սկսեցին գործածվել նաև գրարարյան ի, առ նախդիրները։ Այս հրեռվածը ոչ թե կապված է գրաբարի իրողությունների կենդանացման հետ, այլ ըստատուրվում է ռուսերենի ազդեցությամբ։

Ռուսաց լեզվի ազդեցությունը միայն նշված ինդիքներով չի սահմանափակվում։ Ռուսաց լեզուն իր խոր կնիքն է դրել նաև մեր լեզվի շարահյուսության վրա, որի մասին մենք մեր այս հոդվածում չենք խոսում։

Այսպիսով, ռուսաց լեզուն այն հիմնական աղբյուրներից մեկն է, առանց որի օգնության զրական հայերենը զարգացման այս աստիճանին հասած լինել չէր կարող։ Սակայն մի այլ հանգամանք ևս պետք է նկատի ունենալ։ Այդ՝ սովետական երկրում փոքր ժողովուրդների լեզուների ու կուլտուրաների զարգացման համար ստեղծված պայմաններն են, մեր լեզուն առանց այդ պայմանների չէր կարող օգտվել ռուսերենի բարերար ազդեցությունից և անկաշկանդ զարգանալ։ Նա միայն լինիյանստալինյան աղգային քաղաքականության շնորհիվ կարողացավ սկսական լեզվի մակարդակին հասնել և դառնալ գիտության ու գրականության համապարփակ մի թյնալիսի լեզու, որը լրիվ չափով բավարարում է ինչպես զրականադեպի, նույնպես և փիլիսոփայի ու գիտնականի, հրապարակախոսի ու պետական գործիչի պահանջները։

Մեր կուլտուրան ու լեզուն հարազատ պետության ձևաքում են գտնվում։ Նրանք լինիյանստալինյան աղգային քաղաքականության շնորհիվ անարգել դեպի առաջ են սլանում։ Եվ հետո չէ այն օրը, երբ գրական հայերենը համազգային լեզվի բարձր մակարդակին հասնելով՝ հաստատ ու աներեր քայլերով կընթանա դեպի է՛լ ավելի փայլուն ապագան։